Էջմիածին

1962

ՌՆԺԲ
ԺԹ ՏԱՐԻ

Յուվիս

ԷՋՄԻԱԾԻՆ

ՊԱՀՏՕՆԱԿԱՆ ԱՄՍԱԳԻՐ
ՀԱՅՐԱՊԵՏԱԿԱՆ ԱԹՈՌՈՅ
Ս. ԷՋՄԻԱԾՆԻ

Է

1962

Ամ-գրք-ա

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

Կ՚

ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ ՀԱՅՐԱՊԵՏԻ կոնդակը Ազգային-եկեղեցական ժողովի գումարման և Սրբալույս Մեռոնի օրհնության մասին . . 3

ԽՄԲԱԳՐԱԿԱՆ—Ազգային-եկեղեցական ժողովի գումարումը Մայր Աթոռում 5

Պաշտոնական ճաղորդագրություն Վենափառ Հայրապետի Բաֆու կատարած այցելության մասին 8

ԳՐԻԳՈՐ ԱԲԵՂԱ ԵՂԻԱՅԱՆ—Ամենայն Հայոց Հայրապետի այցելությունը Բաֆու 9

ՄԱՅՐ ԱԹՈՌՈՒՄ 15

Ս. ՔՈՂԱՆՋՅԱՆ—Հայ ձեռագրագիտության մեծանուն վաստակավորը . 16

ՊԱՐԳԵՎ ՎԱՐԴԱՊԵՏ ԳԵՎՈՐԳՅԱՆ—Հովսեփ արքեպիսկոպոս Արղության երկու նամակ-զեկուցագրերը որպես հայ ժողովրդի պատմության սկզբնաղբյուրներ 32

Հ. ԵՂԻԱԶԱՐՅԱՆ—Եղվարդի մեծ և փոքր վանքերը և գյուղի մյուս կարևոր հուշարձանները 40

Գ. ՀԱԿՈԲՅԱՆ—Վարդանանց հերոսներին նվիրված «Անթառամ սիրոյ ծնունդ» պարականոն շարականի հեղինակը . . . 53

ԼՈՒՐԵՐ ՄԱՅՐ ՀԱՅՐԵՆԻՔԻՑ 60

Ռ. ԴԱՎՈՅԱՆ—Զվարթնոցում 67

ԽՄԲԱԳՐՈՒԹՅԱՆ ՀԱՍՑԵՆ

ՀԱՅԿԱԿԱՆ ՍՍՌ. ԷՋՄԻԱԾԻՆ

«ԷՋՄԻԱԾԻՆ» ԱՄՍԱԳՐԻ ԽՄԲԱԳՐՈՒԹՅՈՒՆ

Армянская ССР, Эчмиадзин, Редакция журнала «Эчмиадзин»

Rédaction de la revue «Etchmiadzine», Etchmiadzine, Arménie, URSS.

Երևան, 1962 թ.

ՀՐԱՄԱՆԱՒ

Տ. Տ. ՎԱԶԳԵՆԻ ԱՒԱՆՈՑ

ՎԵՀԱՓԱՌ ԵՒ ՍՐԲԱԶՆԱԳՈՅՆ
ԿԱԹՈՂԻԿՈՍԻ ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ

ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ ՀԱՅՐԱՊԵՏԻ ԿՈՆԴԱԿԸ ԱԶԳԱՅԻՆ-ԵԿԵՂԵՑԱԿԱՆ ԺՈՂՈՎԻ ԳՈՒՄԱՐՄԱՆ ԵՎ ՍՐԲԱԼՈՒՅՍ ՄԵՌՈՆԻ ՕՐՀՆՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ

ՎԱԶԳԷՆ ԾԱՌԱՑ ՑԻՍՈՒՍԻ ԳՐԻՍՏՈՍԻ, ՕՂՈՐՄՈՒԹԵԱՄԲՆ ԱՍՏՈՒԾՈՅ ԵՒ ԿԱՄՕՔՆ ԱԶԳԻՍ ԵՊԻՍԿՈՊՈՍԱՊԵՏ ԵՒ ԿԱԹՈՂԻԿՈՍ ԱՄԵՆԱՑՆ ՀԱՅՈՑ, ԾԱՅՐԱԳՈՅՆ ՊԱՏՐԻԱՐՔ ՀԱՄԱԶԳԱԿԱՆ ՆԱԽԱՄԵԾԱՐ ԱՒԳՈՍՏՈՍ ԱՅՐԱՐԱՏՅԱՆ ԱՌԱՔԵԼԱԿԱՆ ՄԱՅՐ ԵԿԵՂԵՑԻՈՅ ՍՐԲՈՅ ԿԱԹՈՂԻԿԷ ԷՋՄԻԱԾՆԻ

ՋՐԻՍՏՈՍԱՒԱՆԴ ՍԻՐՈՅ ՈՂՋՈՒՅՆ ԵՒ ՕՐՀՆՈՒԹԻՒՆ ՀԱՅՐԱՊԵՏԱԿԱՆ ՄԵԾԻ ՏԱՆՆ ԿԻԼԻԿԻՈՅ ԿԱԹՈՂԻԿՈՍՈՒԹԵԱՆ, ՊԱՏՐԻԱՐՔՈՒԹԵԱՆ ԵՐՈՒՍԱՂԵՄԻ ՀԱՅՈՑ, ՊԱՏՐԻԱՐՔՈՒԹԵԱՆ ԹՈՒՐՔԻՈՅ ՀԱՅՈՑ, ԱՐՔԵՊԻՍԿՈՊՈՍԱՑ, ԵՊԻՍԿՈՊՈՍԱՑ, ՎԱՐԴԱՊԵՏԱՑ, ՔԱՀԱՆԱՅԻՑ ԵՒ ՍԱՐԿԱՒԱԳԱՑ, ԹԵՄԱԿԱՆ ԵՐԵՍՓՈԽԱՆԱԿԱՆ ԺՈՂՈՎՈՅ, ԹԵՄԱԿԱՆ ԵՒ ԹԱՂԱԿԱՆ ԽՈՐՀՐԴՈՅ ԵՒ ՊԱՇՏՕՆԷԻՑ ԵՒ ՍԻՐԵՑԵԱԼ ՀԱՄԱՅՆ ՀԱՒԱՏԱՑԵԱԼ ԺՈՂՈՎՐԴԵԱՆ ՀԱՅՈՑ

Գնալականութեամբն Աստուծոյ Ամենակալին, եօթնամեայ գործունէութեան շրջան մը քոլորեցինք սոա խաղաղութեամբ, Մայր Աթոռ Ս. Էջմիածնի կամարներու ներքև, մեր սիրեցեալ ժողովուրդի ծոցին մէջ, մեր վերածնած Մայր Հայրենիքի ապահով ու հարապատ կտուրին տակ:

Անցնող այս եօթը տարիներու ընթացքին, Մենք և Մեր գործակիցները, մեր ուժերու չափով, աշխատանք տարինք մեր խղճի պարտքը կատարելու համար, ի վերանորոգումն և ի պայծառութիւն աստուածակառոյց Մայր Աթոռիս և ի հոգևոր մխիթարութիւն մեր ժողովուրդին, Հայաստանի և արտասահմանի թեմերէն ներս:

Այժմ, ժամանակը հասած կը նկատենք Մեր գործունէութեան և տնտեսութեան համարը տալ Ազգային-եկեղեցական սրբազումար ժողովին՝ մեր Եկեղեցւոյ և մեր ժողովուրդի ներկայացուցիչներուն սեռաջ, ու միասնաբար նոր ծրագիր կազմել յառաջիկայ նոր աշխատանքներու և ապագայ իրագործումներու:

Արդ. այսու հայոցատեսական Մեր կոնդակաւ, մեծ ուրախութիւն է Մեզի համար յայտարարել, թէ որոշած ենք Հայաստանեայց Եկեղեցւոյ Ազգային-եկեղեցական ժողով գումարել յառաջիկայ աշնան, սեպտեմբեր 30—հոկտեմբեր 5. որուն կը հրաւիրենք մասնակցելու մեր Եկեղեցւոյ նուիրապետական Աթոռներու ամենապատիւ սրբազան աթոռակալները. թեմական գերաշնորհ առաջնորդները. Հայաստանեայց Եկեղեցւոյ սրբազան եպիսկոպոսները, ինչպէս և թեմերու կողմէ ընտրուած պատգամաւոր ներկայացուցիչները մեր հաւատացեալ ժողովուրդին:

Ազգային-եկեղեցական ժողովի օրակարգի հարցերը պիտի ըլլան՝

ա. Զեկուցում եռթնամեայ Մեր գործունէութեան.

բ. Հաշուետուութիւն նիւթական գործունեութեան.

գ. Հայաստանեայց Եկեղեցւոյ Կանոնագրքի մշակման հարց.

դ. Ամրապնդում Հայ Եկեղեցւոյ միասնութեան.

ե. Ընտրութիւն Գերագոյն Հոգևոր Խորհուրդի և Վերստուգիչ յանձնաժողովի.

կ. Ս. Էջմիածնի յառաջիկայ շինարարական գործունէութեան ծրագիր:

Ազգային-եկեղեցական ժողովի բացումէն առաջ, Մայր Աթոռի մեջ Մեր նախագահութեամբ տեղի պիտի ունենայ Եպիսկոպոսական խորհրդակցական ժողով. Ազգային-եկեղեցական ժողովի օրակարգի առնչութեամբ:

Երջանիկ ենք նաև բոլորիդ յայտնի դարձնելու, թէ Ազգային-եկեղեցական ժողովի գումարման առթիւ, Մեր գահակալութեան եօթներորդ տարեդարձին՝ հոկտեմբեր 7-ին, կիրակի օր, Տիրոջ ողորմութեամբ պիտի օրհնենք Սրբալոյս Մեռոն Ս. Էջմիածնի Մայր Տաճարին մեջ, ըստ կանոնաց և կարգաց մեր Առաքելական Ս. Եկեղեցւոյն:

Աստուածային շնորհաբաշխութեան մեծ օր է Մեռոնօրհնութիւնը և սուրբ է այդ օրը: Մենք ու մեր ամբողջ Եկեղեցին պիտի աղօթենք, որպէսզի Պարգևատուն բարեաց առատապէս բաշխէ Իր կենարար շնորհները Փրկչի Իջման Ս. Սեղանէն՝ ի շինութիւն, ի խաղաղութիւն և յանսասանութիւն մեր Ս. Եկեղեցիին և մեր հաւատացեալ ժողովուրդին:

«Տէր ողորմութեան և Հայր լուսոյ, յորմէ ամենայն տուրք բարիք և ամենայն պարգևք կատարեալ իջեալ է, շնորհեա մեզ անարժան ծառայիս քոց՝ զշնորհս քո ի սպասաւորել մեծի և կենարար խորհրդոյս քո» (Մայր Մաշտոց):

Շնորհք և խաղաղութիւն Փրկչին մերոյ Յիսուսի Քրիստոսի եղիցին ընդ ձեզ այժմ և միշտ և յաւիտեանս:

Ամէն:

ԵՒԵՐԱԳՈՅՆ ՊԱՏՐԻԱՐՔ ԵՒ ԿԱԹՈՂԻԿՈՍ
ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ

Տուաւ կոնդակս յ-7-ե յուլիսի
1962 Փրկչական ամի,
և ի տումարիս Հայոց ՌԾԺԱ.
ի մայրավանս Սրբոյ Էջմիածնի:

ԽՄԲԱԳՐԱԿԱՆ

ԱԶԳԱՅԻՆ-ԵԿԵՂԵՑԱԿԱՆ ԺՈՂՈՎԻ ԳՈՒՄԱՐՈՒՄԸ ՄԱՅՐ ԱԹՈՌՈՒՄ

Մայր Աթոռի պաշտոնաթերթ «Էջմիածին» ամսագրի սույն համարում հրապարակվում է Վեհափառ Հայրապետի հուլիս 7 թվակիր սրբատառ կոնդակը, ուղղված Հայաստանյայց Առաքելական եկեղեցու բոլոր նվիրապետական Աթոռներին, եկեղեցական թեմերին, եպիսկոպոսական, պատգամավորական ժողովներին և համայն հայ հավատացյալ ժողովրդին՝ 1962 թվականի սեպտեմբեր ամսի 30-ից մինչև հոկտեմբերի 5-ը Մայր Աթոռում գումարվելիք Ազգային-Եկեղեցական ժողովի և հոկտեմբերի 7-ին, կիրակի, Էջմիածնի Մայր Տաճարում կատարվելիք Սրբալույս Մեռոնի օրհնության մասին:

«ԱՅԺՄ ԺԱՄԱՆԱԿԸ ՀԱՍԱԾ ԿՆԿԱՏԵՆՔ, —գրում է Վեհափառ Հայրապետը,— ՄԵՐ ԴՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ԵՎ ՏՆՏԵՍՈՒԹՅԱՆ ՀԱՄԱՐԸ ՏԱԼ ԱԶԳԱՅԻՆ-ԵԿԵՂԵՑԱԿԱՆ ՍՐԲԱԳՈՒՄԱՐ ԺՈՂՈՎԻՆ՝ ՄԵՐ ԵԿԵՂԵՑՎՈ ԵՎ ՄԵՐ ԺՈՂՈՎՈՒՐԴԻ ՆԵՐԿԱՅԱՑՈՒՑԻՉՆԵՐՈՒՆ ԱՌԱՋ, ՈՒ ՄԻԱՍՆԱԲԱՐ ՆՈՐ ԾՐԱԳԻՐ ԿԱՋՄԵԼ, ՀԱՌԱՋԻԿԱ ՆՈՐ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐՈՒ ԵՎ ԱՊԱԳԱ ԻՐԱԳՈՐԾՈՒՄՆԵՐՈՒ»:

Ազգիս Վեհափառ Հայրապետը, որպես «հրավիրակ Արարատյան», իր սրբատառ կոնդակով հրավիրում է հայ հավատացյալ ժողովրդի ներկայացուցիչներին և ուխտավոռներին՝ դեպի Մայր Աթոռ և Մայր Հայրենիք՝ մասնակցելու Ազգային-եկեղեցական ժողովին և հանդիսատես և տոնակից լինելու Սրբալույս Մեռոնի խորհրդավոր հանդեսի կատարմանը:

Հայ հավատացյալ և հայրենասեր ժողովուրդը, թե՛ Մայր Հայրենիքում և թե՛ Սփյուռքում, անշուշտ սրտի անհուն բերկրանքով և մեծ խանդավառությամբ կընդունի Վեհափառ Հայրապետի սրտագին հրավերը:

Սփյուռքից որպես պատգամավոր Ազգային-եկեղեցական ժողովին կմասնակցեն թեմերի կողմից ընտրված մոտ 85 եկեղեցական և աշխարհական պատգամավորներ, իսկ ներքին թեմերից՝ 81 պատգամավոր:

Թե՛ ներքին թեմերից և թե՛ Սփյուռքից, կհրավիրվեն նաև մասնավոր ուխտավորներ, որոնք կգան համբուրելու Լուսավորչի արժանավոր հաջորդի Ս. Աջը, Սրբալույս Մեռոնի կաթսան, Հայրենի սրբազան Հողը և ողջագուրվելու Մայր Հայրենիքում ապրող իրենց եղբայրների ու քույրերի հետ:

Այս աշնան Մայր Աթոռում Ազգային-եկեղեցական ժողովի գումարումը կճանաչվի՝ սաեն բացառիկ մի պատմական իրադարձություն մեր եկեղեցական տարեգրության մեջ:

Ընդհանրապես Ազգային-եկեղեցական ժողովները գումարվել են դեպքից դեպք, ի մասնավորի Ամենայն Հայոց Հայրապետների մահվան և նորի ընտրության և գահակալության առիթներով:

1955 թվականի հոկտեմբերի 7-ին Ս. Էջմիածնում գումարված Ազգային-եկեղեցական ժողովի Դ և վերջին նիստում, իր փակման խոսքի մեջ, որ մի տեսակ ծրագիր էր ապագա գործունեության, նորընտիր Տ. Տ. Վազգեն Ա Վեհափառ Հայրապետը ցանկություն էր հայտնում «ԳԻՆ ՁՈՐԻ ԿԱՄ

ՀԻՆԳ ՏԱՐԻՆ ԱՆԳԱՄ ՄԸ ԳՈՒՄԱՐԵԼ ԱԶԳԱՅԻՆ-ԵԿԵՂԵՑԱԿԱՆ ԺՈՂՈՎ», զարդվելու համար Հայ Եկեղեցու կազմակերպման, զարգացման և հայ ժողովրդի հոգևոր դաստիարակության և վերազարթոնքի հետ կապված աշխատանքներով:

Անցյալում ևս, ըստ առաքելական կանոնի, Ամենայն Հայոց Հայրապետները տարին երկու անգամ հրավիրում էին համազգային ժողովներ, մեկը Նավասարդին՝ Շաքապիվանում, իսկ մյուսը Ս. Կարապետի տոնին՝ Մուշում, զբաղվելու համար ազգային-եկեղեցական բարեկարգական հարցերով:

Յոթ տարի է անցել Վեհափառ Հայրապետի արժանավոր ընտրությունից և գահակալությունից հետո, տարիներ, որոնք արդյունավոր են եղել հոգևոր, մշակութային, վանական-վարչական, շինարարական, կազմակերպչական ոգևորիչ և բեղմնավոր իրագործումներով:

Եվ ահա Ամենայն Հայոց Վեհափառ Հայրապետը պատրաստ է Ազգային-եկեղեցական սրբազան ժողովին ներկայացնելու յոթնամյա եկեղեցաշեն և ազգաշեն իր գործունեության հաշվետվությունը:

Նույնքան հուսադրիչ և պայծառ են Նորին Ս. Օծության ապագա գործունեության հեռանկարները:

Անցնող յոթը տարիների բոլոր իրագործումները և աշխատանքի ապագա ծրագիրը իրավունք են տալիս ազգովին վստահությամբ և խորին համոզմունքով հայտարարելու, որ Նորին Ս. Օծություն Տ. Տ. Վազգեն Ա Ամենայն Հայոց Հայրապետի քարեքաստիկ գահակալությամբ, արդարև մի նոր ու խոստումնալից էջ է բացվել Մայր Աթոռ Ս. Էջմիածնի բարգավաճման և Հայաստանյայց Առաքելական եկեղեցու հետագա կազմակերպման և հոգևոր զարթոնքի համար:

Անցնող յոթը տարվա գործունեությունը հստակորեն ցույց է տվել, որ այսօր, հանձին Վեհափառ Հայրապետի, Հայաստանյայց Առաքելական եկեղեցին ունի իր գոհարերվող և ազնվագույն շինարար հայրապետներից մեկին, որը Իր մաքուր ձեռքերի մեջ է պահում մեր եկեղեցու գերագույն ղեկավարությունը և արիաբար և Իր պարտքի խորունկ գիտակցությամբ, Իր ուսերի վրա է կրում Ամենայն Հայոց Հայրապետության ծանր բայց քաղցր լուծը, և այն կրում է խոր լավատեսությամբ, ճավտով՝ դեպի Իր ժողովրդի, Իր եկեղեցու պայծառ ապագան:

Այսօր, բովանդակ հայ ժողովուրդը իր նայվածքը սևեռել է դեպի Ս. Էջմիածին՝ հայ հոգու այդ պայծառ վկայարանը, և դեպի մեր պանծալի Հայրենիքը՝ ՄԱՅՐ ՀԱՅԱՍՏԱՆ:

Ազգային-եկեղեցական սրբազան ժողովի օրակարգի վրա դրվելու են հետևյալ խնդիրները, որոնք սերտորեն կապ ունեն և մեր եկեղեցու ապագա ամրապնդման, կազմակերպության, առաքելության, և՛ միաժամանակ Վեհափառ Հայրապետի գործունեության հետ.

1. Զեկուցում Վեհափառ Հայրապետի յոթնամյա գործունեության.
2. Հաշվետվություն Մայր Աթոռի նյութական գործունեության.
3. Հայ Եկեղեցու Կանոնագրքի մշակման հարց.
4. Ամրապնդում Հայ Եկեղեցու միասնության.
5. Ընտրություն Գերագույն Հոգևոր խորհրդի և Վերստուգիչ հանձնաժողովի նոր անդամների.
6. Ս. Էջմիածնի առաջիկա շինարարական գործունեության ծրագիր:

ՄԱՅՐ ՀԱՅՐԵՆԻՔՈՒՄ, մեր պատվական, մեր բարի ու աշխատասեր ժողովուրդը, իր խաղաղ աշխատանքով ու քրտինքով, բուժում է անցյալ հազարամյակների իր վերքերն ու ցավերը, և փյունիկի նման հարություն առած իր մոխիրներից, քարերը վերածում հացի, լույսի և կյանքի, և Արարատի դիմաց, Արարատյան դաշտի սրտի վրա, կերտում է ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ ՀԱՄԱԶԳԱՅԻՆ Ս. ՕՋԱԽԸ, որպեսզի նա երբե՛ք, երբե՛ք չավերվի և չմանվի:

Իսկ ԷՋՄԻԱԾՆՈՒՄ, մեր վերածաղկող Հայրենիքի ծոցում, Վազգեն Ա Հայոց Հայրապետը, Լուսավորչի տեսիլքով, Սահակ-Մեսրոպյան շնչով, Վարդանանց և Ղևոնդյանց ոգով, մի անգամ ևս լույս է իջեցնում Ս. Էջմիածնի, հայոց վանքերի, եկեղեցիների հազարամյա քարերին և շինում, պայծառեցնում է հայ հավատի անխորտակելի վեմ Մայր Աթոռ Ս. Էջմիածինը:

Ազգային-եկեղեցական ժողովի գումարման փառապսակը կլինի Վեհափառ Հայրապետի գահակալության 7-րդ տարեդարձի օրը, հոկտեմբերի 7-ին, Մայր Տաճարում, Ս. Մեռոնի օրհնության հանդեսը:

Սրբալույս Մեռոնի օրհնությունը հանդիսացել է հայ ժողովրդի սրտին մոտիկ, մեծաշուք և խորհրդավոր տոնակատարություն, որը միշտ էլ կատարվել է մեծահանդես պատշաճությամբ, շքեղությամբ, հոգևոր մխիթարության սրբազան բավարարությամբ, որպես մեր նախնիներից մեզ ավանդ մնացած անմոռանալի և համբուրելի նվիրականություն:

Առաջին անգամ Ս. Էջմիածնի Մայր Տաճարի նվիրական կամարների տակ Մեռոն է օրհնել հայ ժողովրդի հավատի հայր Ս. Գրիգոր Լուսավորիչը. «ԵՒ ԻՐՈՂՆ ՕԾՈՒԹԵԱՆ, ՁՈՐ ԱՐԿԱՆԷՐ ԳՐԻԳՈՐ Ի ՎԵՐԱՅ ՄԱՐԴԿԱՆ, ՇՐՋԱՆ ԱՌԵԱԼ Ի ՄԷՋ ԳԵՏՈՅՆ՝ ՇՈՒՐՋ ՁՄԱՐԴԿԱՄԲՆ ԽԱՂԱՅՐ... ԵՒ ՔՐԻՍՏՈՍԵԱՆ ԴՐՈՇՄԱՒՆ ԱՌՀԱՒԱՐԱԿ ԸՆԾԱՅՑՈՒՑԱՆԷՐ ՁԱՄԵՆԵՍԵԱՆ ԼԻՆԵԼ ԱՄԵՆԵՑՈՒՆ ՀՈԳԻՈՎՆ ՍՐԲՈՎ» (Ագաթանգեղոս):

Առաջին անգամ Սրբալույս Մեռոնի կաթսան դրվել է Մայր Տաճարի Ս. Սեղանի բեմի վրա և զարավոր բարի սովորություն է եղել հին Մեռոնի մեջ խառնել Լուսավորչի և նրա արժանավոր հաջորդների օրհնած հին Մեռոնից մի չիչ, Ս. Լուսավորչի Աջի զորությամբ:

«ԱՍՏՎԱԾԱՅԻՆ ՇՆՈՐՀԱԲԱՇԽՈՒԹՅԱՆ ՄԵԾ ՈՐ Է ՄԵՌՈՆՕՐՀՆՈՒԹՅՈՒՆԸ ԵՎ ՍՈՒՐԲ Է ԱՅԴ ՕՐԸ,— գրում է Վեհափառ Հայրապետը:— ՄԵՆՔ ՈՒ ՄԵՐ ԱՄԲՈՂՋ ԵԿԵՂԵՑԻՆ ՊԻՏԻ ԱՂՈՒԹԵՆՔ, ՈՐՊԵՍԶԻ ՊԱՐԳԵՎԱՏՈՒՆ ԲԱՐՑԱՑ ԱՌԱՏԱՊԵՍ ԲԱՇԽԵ ԻՐ ԿԵՆԱՐԱՐ ՇՆՈՐՀՆԵՐԸ ՓՐԿՉԻ ԻՋՄԱՆ Ս. ՍԵՂԱՆՆՆ՝ Ի ՇԻՆՈՒԹՅՈՒՆ, Ի ԽԱՂԱՂՈՒԹՅՈՒՆ ԵՎ ՀԱՆՍԱՍԱՆՈՒԹՅՈՒՆ ՄԵՐ Ս. ԵԿԵՂԵՑԻՆ ԵՎ ՄԵՐ ՀԱՎԱՏԱՑՅԱԼ ԺՈՂՈՎՈՒՐԴԻՆ»:

Սրբալույս Մեռոնի կաթսան, Ս. Էջմիածնի Մայր Տաճարի Սեղանի վրա դրված, հայ հավատացյալ ժողովրդի մեռոնաբույր սիրտն է, ուր հայ հավատն ու հայ հոգին, հայ կյանքն ու հայ միտքը օրհնվում ու բաշխվում են բոլոր ժամանակների հայության:

Ս. Լուսավորչի օրերից մինչև այսօր, հայ հավատացյալ ժողովուրդը, Սրբալույս Մեռոնի կաթսայի մեջ իր ապագա կյանքի, իր հավերժության գաղափարներն է դրել: Սրբալույս Մեռոնը մեր ազգային-եկեղեցական գիտակցության համար միշտ էլ եղել է մեր հավատացյալ ժողովրդի հոգևոր միասնականության և Հայ եկեղեցու անբակտելի միության նվիրական խորհրդանիշը, հոգևոր շաղախը: «Սրբալույս Մեռոնը,— գրում է Գարեգին Ա Հովսեփյանց Կաթողիկոսը,—սիմվոլն է Հայ եկեղեցու Միութեան, դա նշանակում է, որ մեծ ամենքս այդ եկեղեցու զավակներն ենք: Աշխարհի որ անկյուններում էլ լինենք, մենք միևնույն զավակներն ենք մեր Առաքելական և Ս. Եկեղեցու»:

1962 թվականի սեպտեմբերի 30-ից մինչև հոկտեմբերի 15-ը ցնծատոն է հանդիսանալու Մայր Աթոռ Ս. Էջմիածնի և Հայ եկեղեցու համար:

Ազգային-եկեղեցական ժողովի գումարումը և Սրբալույս Մեռոնի օրհնությունը մի անգամ ևս կվերածվեն հայ հավատացյալ ժողովրդի հավատի կենսունակության, եկեղեցասիրության և հայրենասիրության պայծառ, սրտառուչ տոնի:

Այսօր ավելի քան երբևէ, կենսունակ է, պայծառ ու կանգուն Հայաստանյայց Առաքելական եկեղեցին, Մայր Աթոռ Ս. Էջմիածնի գլխավորությամբ և Ամենայն Հայոց Կաթողիկոս Տ. Տ. Վազգեն Ա-ի հովվապետությամբ:

«ՎԱՍՆ ՉԻ ՈՒՂՂԱՓԱՌ ՀԱՒԱՏՈՅ ՔՈ ԼՈՅՍ՝ Ո՞Վ ԵԿԵՂԵՑԻ ՀԱՅՈՑ, ՈՉ ՆՈՒԱՉԵՑԱՒ, Ի ԲԱՐԻ ՍԵՐՄԱՆՍ ՅՈՐԵՆԻՈՅԴ՝ ՈՐՈՄՆ ՈՉ ԽԱՌՆԵՑԱՒ, ՁԱՂԲԻՒՐ ՅՍՏԱԿ ԱՒԱՆԴՈՒԹԵԱՆՑ ՔՈՅ՝ ԱՂՏԱՂՏՈՒԿ ՁՈՒՐ ՕՏԱՐՈՏԻ ՈՒՍՄԱՆՑ ՈՉ ՊՂՏՈՒԵԱՑ, Ի ՍՏՈՒԳՈՒԹԵԱՆ ԵՒ Ի ՃՇՄԱՐՏՈՒԹԵԱՆ ՀԱՅՆ ՔՈ ԿԵՆԴԱՆԱԿԱՆ՝ ՄԵՌԵԼԱԿԱՆ ԽՄՈՒՐ ՆՒ ՀԵՐՁՈՒԱԾ ՔԱՅԱԽՈՒԹԵԱՆ, ՁԱՐՈՒԹԵԱՆ ՈՉ ԾԱՆԴԵՑԱՒ, ՅՈՍԿԻ ԱՆԲԻԾ ՀԱՒԱՏՈՅՆ ԵՒ ՅԱՐԾԱԹ ԼՈՒՍԱՏԵՍԻԼ ԲԱՆԻՆ ՊՂԻՆՁ ԺԱՆԳԱՀՈՏ ԵՒ ԿԱՊԱՐ ՍԵԽԱԹՈՅՐ ՈՉ ԳՏԱՒ» (Հովհան երզնկացի):

«ԲԱՐԵՊՍՈՒԹԵԱՄԲ ՎԵՐԻՆ ՔՈ ՁՕՐԱՑ, ՄԻՇՏ ԱՆՇԱՐԺ ՊԱՀԵԱ ՁԱԹՈՌ ՀԱՅԿԱՁՆԵԱՅՍ»:

ՊԱՇՏՈՆԱԿԱՆ ՀԱՂՈՐԴԱԳՐՈՒԹՅՈՒՆ ՎԵՀԱՓԱՌ ՀԱՅՐԱՊԵՏԻ ԲԱԿՈՒ ԿԱՏԱՐԱԾ ԱՑՑԵԼՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ

Նորին Ս. Օծություն Տ. Տ. Վազգեն Ա Սրբազնագույն Կաթողիկոսն Ամենայն Հայոց, սույն տարվա հունիսի 16—19. հովվապետական այցելություն տվեց Ադրբեջանի հայոց թեմին:

Հունիսի 17-ին, կիրակի, Վեհափառ Հայրապետը պատարագեց և քարոզեց Բաքվի հայոց Ս. Գրիգոր Լուսավորիչ առաջնորդանիստ եկեղեցում, ճոխ ոգևորության ներկայությամբ: Սուրբ պատարագին ներկա էին Ադրբեջանական ՍՍՌ Միհիստրների Սովետին առընթեր Կրոնական գործերի լիազոր պր. Մուսա Շամշադինսկին, Անդրկովկասի մուսուլմանների Շեյխ-ուլ-Իսլամի ներկայացուցիչը, Ռուս Օրթոդոքս եկեղեցու և այլ հարանվանությանց ներկայացուցիչները:

Սուրբ պատարագից հետո Ադրբեջանի հայոց թեմական խորհուրդը, ի պատիվ Վեհափառ Հայրապետի, ճաշկերույթ տվեց «Ինտուրիստ» հյուրանոցում: Ճաշկերույթին ներկա էին Ադրբեջանի կառավարության, Անդրկովկասի Մուսուլմանների Հոգևոր վարչության, Ռուս եկեղեցու, Ավետարանական համայնքի, Հրեից կրոնական համայնքի ներկայացուցիչները· հայոց թեմական և եկեղեցական խորհուրդների անդամները, ինչպես և բանանայից դասը՝ Ադրբեջանի հայոց թեմի առաջնորդ Տ. Հուսիկ վարդապետ Սանթուրյանի գլխավորությամբ:

Հունիսի 18-ի առավոտյան, երկուշաբթի, Նորին Ս. Օծությունը, «Ինտուրիստ» հյուրանոցի Իր հարկաբաժնում, ընդունեց բարի գալուստի այցելությունը Անդրկովկասի մուսուլմանների Շեյխ-ուլ-Իսլամ Հաֆիզ Զադեի:

Ժամը 12-ին Նորին Վեհափառությունը, ուղեկցությամբ Կրոնից գործերի լիազոր պր. Մ. Շամշադինսկու, այցելություն տվեց Ադրբեջանի Հանրապետության Միհիստրների Սովետի Նախագահ Նորին Գերազանցություն պր. Էնվեր Ալիխանովին: Նորին Ս. Օծության և Մեծարգո Վարչապետի միջև տեղի ունեցավ բարեկամական զրույց շուրջ 40 ռոպե տևողությամբ:

Ցերեկվա ժամը 2-ին, Ամենայն Հայոց Հայրապետը, ընդառաջելով Բաքվի ռուս օրթոդոքս համայնքի հրավերին, այցելեց ռուսաց Մայր եկեղեցին, ուր տրվեց կրոնական համերգ: Վերջում Վեհափառ Հայրապետը ողջունեց և օրհնեց ներկա խուռներամ հավատացյալ ժողովրդին:

Կեսօրից հետո ժամը 5-ին, Անդրկովկասի Մուսուլմանների Հոգևոր Պետ Շեյխ-ուլ-Իսլամ Հաֆիզզադեն ճաշկերույթ տվեց «Ինտուրիստ» հյուրանոցում ի պատիվ Ամենայն Հայոց Վեհափառ Հայրապետի:

Հունիսի 19-ին, երեքշաբթի օր, Վեհափառ Հայրապետը Իր շքախմբով Բաքվից վերադարձավ Մայր Աթոռ:

ԴԻՎԱՆ ՄԱՑԻ ԱԹՈՌԻ



Ամենայն Հայոց Հայրապետի աջակցությունը Բաքու

Նորին Ս. օծության Տ. Տ. Վազգեն Ա Ամենայն Հայոց Վեհափառ Հայրապետը, ընդառաջելով Ադրբեջանի հայոց առաջնորդ հոգեշնորհ Տ. Հուսիկ վարդապետ Սանթուրյանի և թեմական խորհրդի հրավերին, հունիսի 16-ին մեկնեց Բաքու՝ հովվական այցելության։

Հունիսի 16-ին, շաբաթ Վեհափառ Հայրապետը մեկնեց Երևանի օդանավակայանից, ընկերակցությամբ գերաշնորհ Տ. Հայկազուն արքեպիսկոպոս Աբրահամյանի, հոգեշնորհ Տ. Գրիգոր աբեղա Եղիայանի, բարեշնորհ Պետրոս սարկավագ Բերբերյանի և դիվանապետ պր. Հայկ Առաքելյանի։

Վեհափառ Հայրապետին և նրա շքախմբին ողջերթ մաղթելու համար օդանավակայան էին եկել Մայր Աթոռի միաբաններն ու պաշտոնեությունը։

Վեհափառ Հայրապետին ճանապարհում էր նաև Հայկական ՍՍՌ Մինիստրների Սովետին առընթեր Հայ եկեղեցու գործերի խորհրդի նախագահի տեղակալ պր. Ս. Հովհաննիսյանը։

Բաքվի օդանավակայանում Վեհափառ Հայրապետին դիմավորեցին Ադրբեջանական ՍՍՌ Մինիստրների Սովետին առընթեր Կրոնական գործերի խորհրդի նախագահ Մուսա Մամեդով Շամշադինովին, Անդրկովկասի Մուսուլմանների Կրոնապետ Շեյխ-ուլ-Իսլամի ներկայացուցիչը, ռուս քահանաներ առաջնորդությամբ ավագերեց Տ. Նիկոլայի, Ադրբեջանի հայոց թեմական առաջնորդ հոգեշնորհ Տ. Հուսիկ վարդապետ Սանթուրյանը, քահանայից դասը, թեմական խորհրդի անդամները և բազմաթիվ հավատացյալներ։

Ներկաների անունից Նորին Ս. Օծության բարի գալուստ մաղթեց արժանապատիվ Տ. Վահան ավագ քահանա Գրիգորյանը։

Վեհափառ Հայրապետը օդանավակայանից ուղևորվեց դեպի Բաքվի հայոց Ս. Գրիգոր Լուսավորիչ Մայր եկեղեցին, ուր մուտք գործեց «Հրաշափառ»-ով, խուռներում բազմության ուրախ ծափողջույնների տակ։

Եկեղեցում կատարված գոհաբանական արարողության վերջում, բարի գալստյան ջերմ խոսք ասաց առաջնորդ հոգեշնորհ Տ. Հուսիկ վարդապետը։

Վեհափառ Հայրապետը, ողջունելով բոլոր ներկաներին, տվեց Իր հայրապետական օրհնությունները և Իր գոհունակությունը հայտնեց ջերմ, սրտաբաց ընդունելության համար։

Այնուհետև Վեհափառ Հայրապետը նախագահեց կիրակամտի և Հոգեգալստյան նախատոնակի հանդիսավոր ժամասացությանը։

Հունիսի 17-ին, կիրակի, Հոգեգալստյան տոնին (Բաքվում կատարվում է հին տոմա-

րով), պատարագեց Նորին Ս. Օծությունը։ Ս. Սեղանին սպասավորում էին գերաշնորհ Տ. Հայկազուն արքեպիսկոպոս Արրահամյանը, հոգեշնորհ Տ. Հուսիկ վարդապետը, հոգեշնորհ Տ. Գրիգոր աբեղան և քահանաների ու սարկավագների դասը։

Սուրբ պատարագի ընթացքում կարդացվեց Ամենայն Հայոց Վեհափառ Հայրապետի սրբատառ կոնդակը՝ Մեծի Տանն Կիլիկիո երջանկահիշատակ Կաթողիկոս Տ. Գարեգին Ա Հովսեփյանցի մահվան 10-րդ տարելիցի առթիվ։

Մայր Եկեղեցուն և Մայր Աթոռ Ս. Էջմիածնին, և որպես ազնիվ քրիստոնյաներ, հավատարմորեն կատարում է իր քաղաքացիական պարտքն ու վայելում Ադրբեջանի կառավարության հոգատարությունը։

Նույն օրը, կիրակի երեկոյան, Ադրբեջանի հայոց թեմական խորհուրդը, ի պատիվ Նորին Ս. Օծության, կազմակերպեց ճաշկերույթ, որին ներկա էին նաև Ադրբեջանի Մինիստրների Սովետին առընթեր Կրոնական գործերի խորհրդի նախագահ պր. Մուսա Մամեդով Շամշադինսկին, Շեյխ-ուլ-

ՎԵՀԱՓԱՌ ՀԱՅՐԱՊԵՏԸ ԲԱՔՎԻ ՀԱՅՈՑ Ս. ԳՐԻԳՈՐ ԼՈՒՍԱՎՈՐԻՉ ԵԿԵՂԵՑՈՒՄ

Կոնդակի ընթերցումից հետո, Վեհափառ Հայրապետի հանդիսադրությամբ, կատարվեց Հոգեհանգստյան պաշտոն։ Ապա Նորին Ս. Օծությունը իր քարոզում վեր հանեց երջանկահիշատակ հանգուցյալի եկեղեցաշեն, ազգանվեր, բեղմնավոր կյանքը և գրական, մատենագրական վաստակը։ Նորին Ս. Օծությունը այնուհետև տվեց Իր հայրապետական օրհնությունները։ փառք տալով Աստուծո, որ հայ ժողովուրդը խաղաղ և անխոով կյանքով ապրում է Ադրբեջանում և պաշտում է իր սուրբ հավատը։ հավատարիմ Իսլամի ներկայացուցիչ և Բաքվի մուսուլմանների մուֆտի Շարիֆ էֆենդին, Ռուս եկեղեցու ներկայացուցիչները գլխավորությամբ ավագ քահանաներ Տ. Նիկոլայի և Տ. Դիմիտրիի, Բաքվի հրեական սինագոգի Ռավին Ֆարդմանը և Ավետարանական-Մկրտչական եկեղեցու ներկայացուցիչ պր. Տիխոնը։

Ադրբեջանի կառավարության անունից, պր. Շամշադինսկին բարի գալստյան ջերմ խոսքերով ողջունեց Ամենայն Հայոց Հայրապետի այցը Բաքու։

Նորին Ս. Օծութիւնը խոսք առնելով, Իր գոհունակութիւնը հայտնեց, որ անձամբ կրկին անգամ առիթ ունեցավ տեսնելու Բաքվի Իր հավատացյալ զավակներին և տալու Իր օրհնութիւնները։ Վեհափառ Հայրապետը Իր հատուկ շնորհակալութիւնը հայտնեց Ադրբեջանի կառավարության՝ Իրեն ցույց տրված հարգալիր մեծարանքների և իրենց հավատը պաշտելու համար հայրաբնակ հավատացյալներին տրված հոգատար վերաբերմունքի համար։

Ներկաներից շատերը ջերմ ելույթներով ողջունեցին Վեհափառ Հայրապետի այցելությունը Բաքու։

Հունիսի 18-ին, երկուշաբթի առավոտյան, Նորին Ս. Օծութիւնը, «Ինտուրիստ» հյուրանոցի Իր հարկաբաժնում, ընդունեց բարի գալուստի այցելությունը Անդրկովկասի Մուսուլմանների Շեյխ-ուլ-Իսլամ Հաքիմ զադեի։

Հունիսի 18-ին, երկուշաբթի, ժամը 12-ին, Վեհափառ Հայրապետը այցելեց Ադրբեջա-

ՎԵՀԱՓԱՌ ՀԱՅՐԱՊԵՏԸ ԲԱՔՎԻ ՌՈՒՍԱՑ ԵԿԵՂԵՑՈՒՄ

Ապա Վեհափառ Հայրապետը բաժակ բարձրացրեց իսլամ հավատացյալների և նրանց Կրոնապետ Շեյխ-ուլ-Իսլամի, ռուս հավատացյալ ժողովրդի, նրա հոգևոր դասի և Թեմի առաջնորդ Ստավրոպոլի եպիսկոպոսի, ինչպես նաև Համայն Ռուսիոց Պատրիարք Նորին Սրբազնություն Ալեքսիի և Բաքվում գտնվող այլ դավանանքների ներկայացուցիչների պատվին։

Այնուհետև Վեհափառ Հայրապետը բաժակ առաջարկեց հոգեշնորհ Տ. Հուսիկ վարդապետի, Ադրբեջանի հայոց թեմական խորհրդի անդամների կենացը։

նի Մինիստրների Սովետի Նախագահ պր. Էնվեր Ալիխանովին։ Պր. Նախագահի և Վեհափառ Հայրապետի միջև տեղի ունեցավ ջերմ զրույց մտերիմ մթնոլորտում։ Ընդունելության ներկա էին գերաշնորհ Տ. Հայկազուն արքեպիսկոպոսը, հոգեշնորհ Տ. Հուսիկ վարդապետը և հոգեշնորհ Տ. Գրիգոր աբեղան։ Պր. Նախագահը Նորին Ս. Օծության և գերաշնորհ Տ. Հայկազուն արքեպիսկոպոսին տվեց մեկական հուշանվեր։

Ավելի ուշ, Վեհափառ Հայրապետը, Իր շքախմբով, այցելեց Կովկասի իսլամ հավատացյալների կրոնապետ Շեյխ-ուլ-Իսլամ

ԿՐՈՆԱԿԱՆ ԳՈՐԾԵՐԻ ԼԻԱԶՈՐ ՊՐ. ՇԱՄՇԱԴԻՆՍԿԻՆ ԻԱՐԻ ԳԱԼՈՒՑՑ Է ՄԱՂԹՈՒՄ
ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ ՎԵՀԱՓԱՌ ՀԱՅՐԱՊԵՏԻՆ

ԱՆԴՐԿՈՎԿԱՍԻ ՄՈՒՍՈՒԼՄԱՆՆԵՐԻ ԿՐՈՆԱՊԵՏ ՇԵՅԽ-ՈՒԼ-ԻՍԼԱՄ ՀԱՋԻՄԱՋԱԴԵՆ
ՈՂՋՈՒՆՈՒՄ Է ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ ՎԵՀԱՓԱՌ ՀԱՅՐԱՊԵՏԻՆ

ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ ՎԵՀԱՓԱՌ ՀԱՅՐԱՊԵՏԸ ԵՎ ԱՆԴՐԿՈՎԿԱՍԻ ՄՈՒՍՈՒԼՄԱՆՆԵՐԻ ԿՐՈՆԱՊԵՏ ՇԵՅԽ-ՈՒԼ-ԻՍԼԱՄ ՀԱՔԻՄԶԱԴԵՆ

ՎԵՀԱՓԱՌ ՀԱՅՐԱՊԵՏԸ ԵԼՈՒՅԹ Է ՈՒՆԵՆՈՒՄ ՇԵՅԽ-ՈՒԼ-ԻՍԼԱՄ ՀԱՔԻՄԶԱԴԵՆԻ Ի ՊԱՏԻՎ ԵՐԵՆ ՏՎԱԾ ՃԱՇԿԵՐՈՒԹՅԱՆ

Շեյխ Մոհսին Հաքիմզադեին և նրա հետ սիրալիր, մտերիմ զրույց ունեցավ հայ և իսլամ հավատացների համերաշխ և եղբայրական հարաբերությանց մասին։

Նույն օրը Նորին Ս. Օծությունը այցելեց Բաքվի ռուսաց Մայր եկեղեցին, ուր մեծ բազմություն սպասում էր Նրան, խռնված եկեղեցում և փողոցում։ Վեհափառ Հայրապետի ժամանումը ողջունվեց զանգերի զողանջով։ Ի պատիվ Վեհափառ Հայրապետի, ռուսաց եկեղեցու երգեցիկ խումբը կատարեց մի շարք հոգևոր երգեր։

Ամենայն Հայոց Վեհափառ Հայրապետը խոսք առնելով, շնորհավորեց օրվա տոնը՝ Հոգեգալուստը, սրտագին բարեմաղթություններ անելով Ռուս եկեղեցու բարգավաճման և Նորին Սրբություն, Մոսկվայի և Համայն Ռուսիո Պատրիարք Ալեքսիի կյանքի արևշատության համար։

Հունիսի 18-ին, երեկոյան, Անդրկովկասի Մուսուլմանների կրոնապետ, Շեյխ-ուլ-Իսլամ Շեյխ Մոհսին Հաքիմզադեն Ամենայն Հայոց Վեհափառ Հայրապետի պատվին կազմակերպեց ընդունելություն, որին ներկա եղան Ադրբեջանի Կրոնական գործերի խորհրդի նախագահը, մահմեդական բարձրաստիճան հոգևորականներ, ինչպես նաև Բաքվի հայոց թեմի առաջնորդ հոգեշնորհ Տ. Հուսիկ վարդապետ Սանթուրյանը, քահանայից դասը և թեմական խորհրդի անդամները։

Ընդունելության ժամանակ, որն անցավ ջերմ ու սրտագին մթնոլորտում, Ամենայն Հայոց Վեհափառ Հայրապետը և Շեյխ-ուլ-Իսլամը ճառեր փոխանակեցին։

Ընդունելության ժամանակ ելույթներ ունեցան նաև գերաշնորհ Տ. Հայկազուն արքեպիսկոպոսը, հոգեշնորհ Տ. Հուսիկ վարդապետը և թեմական խորհրդի անդամներից ոմանք։

Հունիսի 19-ին, Վեհափառ Հայրապետը Բաքվում կատարած հովվապետական Իր այցելությունից վերադարձավ Մայր Աթոռ։

Մայր Տաճարում Իր աղոթքը կատարելուց հետո, Վեհափառ Հայրապետը առաջնորդվեց Վեհարան, ուր ընդունեց միաբանության բարի գալստյան ողջույնները։

ԳՐԻԳՈՐ ԱԲԵՂԱ ԵՂԻԱՅԱՆ

ՄԱՅՐ ԱԹՈՌՈՒՄ

ՀՈՒԼԻՍԻ 7-ԻՆ, ՇԱԲԱԹ, «Գիւտ նշխարաց Սրբոյն Գրիգորի Լուսաւորչին մերոյ»։ Մայր Տաճարում, Իշման Ս. Սեղանի առաջ, պատարագեց հոգեշնորհ Տ. Հարութիւն վարդապետ Մատենչյանը։

***

ՀՈՒԼԻՍԻ 8-ԻՆ, ԿԻՐԱԿԻ, Մայր Տաճարում պատարագեց և քարոզեց հոգեշնորհ Տ. Մեսրոպ աբեղա Պալյանը բնաբան ունենալով «Վերինք ամենայն այսօր ցնծացէք ընդ մեծապայծառ փառսն Սեպուհոյ գերազանց լերինն»։

***

ՀՈՒԼԻՍԻ 12-ԻՆ, ՀԻՆԳՇԱԲԹԻ, «Սրբոց Թարգմանչացն մերոց Սահակայ և Մեսրովբայ»։

Օշականում, Մեծ Ուսուցչի դամբարանի վրա կառուցված եկեղեցում, պատարագեց և քարոզեց գերաշնորհ Տ. Հայկազուն արքեպիսկոպոս Աբրահամյանը, բնաբան ունենալով «Նմանեալ Մովսիսի Տէր վարդապետ, բերելով զգիր օրինաց ի Հայաստան աշխարհ»։

Սուրբ պատարագին ներկա էր հավատացյալների և ուխտավորների խուռներամ բազմություն։

***

ՀՈՒԼԻՍԻ 15-ԻՆ, ԿԻՐԱԿԻ, Վեհափառ Հայրապետը Մոսկվայից մեկնեց Կիսլովոդսկ, մոտ մեկ ամիս հանգստանալու նպատակով։

Վեհափառ Հայրապետին ընկերակցեց Հոգևոր Ճեմարանի վերատեսուչ գերաշնորհ Տ. Հայկազուն արքեպիսկոպոս Աբրահամյանը։

***

ՀՈՒԼԻՍԻ 15-ԻՆ, ԿԻՐԱԿԻ, Մայր Տաճարում պատարագեց արժանապատիվ Տ. Մկրտիչ ավագ քահանա Մկրտչյանը։

***

ՀՈՒԼԻՍԻ 22-ԻՆ, ԿԻՐԱԿԻ, Մայր Տաճարում պատարագեց արժանապատիվ Տ. Հակոբ քահանա Հակոբյանը։

***

ՀՈՒԼԻՍԻ 29-ԻՆ, ԿԻՐԱԿԻ, «Վարդավառ, պայծառակերպութիւն Տեառն մերոյ Յիսուսի Քրիստոսի»։ Մայր Տաճարում պատարագեց Բաքվի հայոց առաջնորդ հոգեշնորհ Տ. Հուսիկ վարդապետ Սանթուրյանը։

***

ՀՈՒԼԻՍԻ 30-ԻՆ, ԵՐԿՈՒՇԱԲԹԻ, «Յիշատակ մեռելոցն»։ Մայր Տաճարում պատարագեց հոգեշնորհ Տ. Գրիգոր աբեղա Եղիայանը։



Ս. ՔՈՒԱՆՋՅԱՆ

ՀԱՅ ՁԵՌԱԳՐԱԳԻՏՈՒԹՅԱՆ ՄԵԾԱՆՈՒՆ ՎԱՍՏԱԿԱՎՈՐԸ*

Գ. ՀԱՅ ՀՆԱԳՐՈՒԹՅԱՆ ՄԵԾ ՎԱՐՊԵՏԸ

Գարեգին Ա Կաթողիկոս Հովսեփյանցի ձեռագրական պրպտումների և կատարած ուսումնասիրությունների շարքում, դեռևս վաղ շրջանից սկսած, կարևոր տեղ են գրավել հայ գրչության և հայ հնագրության հետ կապված հարցերը։

Իրենից առաջ հայ մշակույթի անխոնջ մշակներ Հ. Ղ. Ալիշանը, Հ. Հ. Տաշյանը և Հ. Աճառյանը որոշակի ավանդներ էին մուծել հայ հնագրության ուսումնասիրության գործում։ Եթե բազմահմուտ Հ. Ղ. Ալիշանն իր մի շարք տեղագրական ծավալուն աշխատություններում հարազատ նմանահանություններ էր կատարել հայկական հնագույն ձեռագրերից և արձանագրություններից և առատ նյութ տվել գրչության համար, սակայն ժամանակ չէր ունեցել անդրադառնալու հայ հնագրության բուն էությանը, ապա Վիեննայի Մխիթարյան անվանի գիտնական Հ. Հ. Տաշյանին է պատկանում այն պատիվը, որ առաջին անգամ ուսումնասիրության նյութ դարձրեց հայ հնագրությունը մասնավորապես իր թեև ծավալով փոքր, սակայն գիտական արժեքով շատ մեծ «Ակնարկ մը հայ հնագրության վրա»[30] գրքում և մասամբ՝ նախապես իր հրատարակած Վիեննայի Մխիթարյան մատենադարանի ձեռագրերի հոյակապ ցուցակում[31]։ Հայ հնագրության ուսումնասիրության գործում կարևոր ավանդ հանդիսացավ նաև հայ նշանավոր լեզվաբան, ակադեմիկոս Հրաչյա Աճառյանի «Հայոց գրերը»[32] աշխատությունը, որտեղ մանրակրկիտ կերպով ուսումնասիրվեցին Մեսրոպյան այբուբենի յուրաքանչյուր տառի դարերի ընթացքում կրած փոփոխությունները և ունեցած յուրահատկությունները, ինչպես նաև հայերեն ծածկագրերն ու գաղափարագրերը։

Ահա վերոհիշյալ հայ գիտնականներից հետո է, որ իր տարիների ընթացքում կուտակած մեծ վաստակի հիման վրա ասպարեզ իջավ Գարեգին Կաթողիկոս Հովսեփյանցը և իր ամբողջ կյանքի ընթացքում նվիրվեց նաև հայ գրչության ուսումնասիրության աշխատանքներին։ Այս ուղղությամբ նրա տպագրած և անտիպ գործերը եկան ճոխացնելու և նույնիսկ գերազանցելու իր նախորդների թողած աշխատությունները և իրավամբ հայ հնագրության վարպետի փառքին արժանացրին Իրեն։

---

* *Շարունակված «Էջմիածին» ամսագրի 1962 թվականի № 2-ից։*

30 *Տպ. Վիեննա, 1898 թ.։*

31 *«Ցուցակ հայերէն ձեռագրաց մատենադարանին Մխիթարեանց ի Վիեննա», Վիեննա, 1895 թ.։*

32 *Տպ. Վիեննա, 1928 թ.։ Այն մաս առ մաս տպված է «Հանդէս ամսօրեայ»-ում սկսած 1910 թվականից։*

Հայերեն տառերի ստեղծման 1500-ամյա և հայ տպագրության 400-ամյա զույգ հոբելյանների առթիվ 1912 թվականին Հովսեփյանցը, այն ժամանակ վարդապետ, հրատարակեց իր առաջին հնագրական ամփոփ ուսումնասիրությունը՝ «Հայոց գրի գլխավոր տեսակները»[33] խորագրով։ Հեղինակը այստեղ ծանրանում է հայերեն գրի տեսակների՝ երկաթագրի, բոլորագրի, նոտրագրի, շեղագրի վրա, նկատի առնելով նաև յուրաքանչյուրի ստորաբաժանումներն ու անցման շրջանները։ Ապա ծանրանում է յուրաքանչյուր տառատեսակի ծագման և տեղության վրա։ «Երկաթագիրը հայ գրի խոշոր տեսակն է,— գրում է Գարեգին վարդապետ Հովսեփյանցը,— որ գործածվում է ձեռագիրների մեջ մինչև ԺԳ դարը։ Երկաթագրի մյուս տեսակներն են միջին և փոքր երկաթագիրները իրենց պեսպիսություններով։ ԺԲ դարի կեսերից արդեն երկաթագիրը տեղի է տալիս բոլորգրին, որը տիրապետող է դառնում ԺԳ դարում։ Նոտրագիրը գործածվել է սկսվում ԺԴ դարից»։ Սրանից հետո խոսում է նաև բոլորագրախառն երկաթագրի և երկաթագրախառն բոլորագրի տեսակների վրա, առաջինը անվանելով «անցման երկաթագիր (որի ընդհանուր բնույթը երկաթագիրն է, բայց հատ-հատ տառեր բոլորագիր), իսկ երկրորդը՝ անցման բոլորագիր (ընդհանուր բնույթով բոլորագիր են, բայց որոշ գրեր երկաթագիր) և ունեն իրենց պեսպիսությունները»։

Ուշագրավ է Գարեգին վարդապետ Հովսեփյանցի կարծիքը հայերեն տառաձևերի վաղեմիության հարցերի մասին։ Նա, մի կողմից նկատի առնելով հայտնի եղող հնագույն արձանագրությունների տառաձևերը, եզրակացնում է, որ «խոշոր և միջին երկաթագիրներն իրենց հնությամբ հասնում են մինչև Ե դարը», և կամ «Ս. Մեսրոպի ձեռակերպած պաշտոնական գիրը անպայման երկաթագիրն է եղել, որ գործածվել է եկեղեցական պաշտաման և այլ գրքերի համար։ Մյուս կողմից էլ գտնում է, որ «գրի մյուս տեսակները որչափ հին են, հաստատուն կռվան չունենք այդ մասին, բայց անհավանական չէ մեկը կամ երկուսը (հատկապես բոլորագիրը, նույնչափ հին լինենն։ Եվ ապա հիմնավորում է իր կարծիքը գրելով. «Երկաթագիրը յուր խոշորության և դժվարագիծ լինելու պատճառով անկարելի էր առօրյա սովորական պետքերի համար գործածվել։ Այդպիսի նպատակի համար ավելի հարմար են գրի մյուս տեսակները՝ բոլորագիրն ու շեղագիրը, իհարկե ոչ իրենց կատարելագործված ձևերով։ Բոլորագրի հնության նշաններն ավելի են, քան շեղագրինը»։

Այսպիսով սույն ուսումնասիրության մեջ յուրջ քննարկման ենթարկելով հայկական տառաձևերը, Գարեգին վարդապետ Հովսեփյանցը պաշտպանում է այն ճիշտ տեսակետը, որ հայերեն գրերի տեսակների մեծ մասը գոյություն է ունեցել դեռ վաղ ժամանակներում, սակայն այդ տառատեսակներից յուրաքանչյուրն ունեցել է իր տիրապետման շրջանը։

Հիշյալ հոդվածում հեղինակը ցույց էր տալիս, որ իրեն հաջողվել է ձեռք բերել բացի հնագույն արձանագրություններից, նաև «նշանավոր դրիչների, հայ մատենագիրների, թագավորների, իշխանների և կաթողիկոսների սեպհական գրություններ, որոնք անհատական բնույթ կրելով հանդերձ, լավագույն նյութ են հայ գրի զարգացման պատմության»[34]։

Ահա այդ նյութերի հանրագումարն է հանդիսանում Գարեգին վարդապետ Հովսեփյանցի հրատարակած «Քարտեզ հայ հնագրության» աշխատությունը, որը լույս



«ԳՐՉՈՒԹՅԱՆ ԱՐՎԵՍՏԸ ՀԻՆ ՀԱՅՈՑ ՄԵՋ», ԱՌԵՎԱՏՈՒԹՅԱՆ ՏԻՏՂՈՍԱԹԵՐԹԸ

33 Տե՛ս «Տարազ», Թիֆլիս, 1912, № 10, էջ 168—172։

34 Նույն տեղում։

ԱԱ-4773

տեսավ իրեն Իր ծրագրած «Գրչության արվեստը հին հայոց մեջ» կոթողական գործի Գ մաս և 1913 թվականին արժանացավ երկու հրատարակության։ Առաջին անգամ այն լույս տեսավ Էջմիածնի «Շողակաթ» հայագիտական ժողովածուում և կազմեց նրա ամբողջ երկրորդ կեսը[35]։ Այս աշխատությունը ընդգրկում էր ներածականից բացի նաև 90 տախտակ նմանահանություններ քարի, որմանկարի, մետաղի և ձեռագրերի վրա գրված ծաղիկներից։ Երկրորդ անգամ այս գործը լույս է տեսել առանձին գրքով 95 տախտակ նմանահանություններով, և որը հեղինակի ասելով հրատարակվել է նախորդից, «բարեփոխած և ճոխացրած» ձևով[36]։ Աշխատությունը նվիրված է հայ գրի գյուտի 1500-ամյակին։

Իր այս գործում Գարեգին վարդապետ Հովսեփյանցը նպատակ է ունեցել տալ հայ գրի զարգացումը Ե—ԺԸ դարերի ընթացքում, սակայն նկատի ունենալով, որ Թ դարից վաղ թվակիր ձեռագրեր չեն հասել, նա այդ պակասը լրացրել է արձանագրությունների միջոցով։ Այս գործը շատ ճոխ է մինչ այդ դեռևս ուշադրության չարժանացած նոր նյութերով։ Տեղ են գտել ժամանակագրական կարգով հայերեն հնագույն արձանագրությունները սկսած Երուսաղեմի խաչնկարի հայերեն արձանագրությունից (Զ—Է դար) մինչև Թալինի Ուխտատուր վանականի արձանագրությունը (783 թ.) և այլն, ինչպես նաև Տեկորի, Հռիփսիմեի, Անիի, Թալինի, Թալիշի, Մրենի, Մաստարայի, Արուճի, Նախճավանի, Կեչառույքի, Երերույքի, Ագարակի (Կարս), Հավուց թառի, Ամաղու, ՆորԲայազետի հայ վանքերի արձանագրությունները։ Մեծ թվով ձեռագրային նմուշներ է բերում Էջմիածնի (այժմ Հայկական ՍՍՌ Մեսրոպ Մաշտոցի անվան Պետական Մատենադարան), Երուսաղեմի, Կոստանդնուպոլսի մատենադարաններից, ինչպես նաև Ծղրուքի, Մեծ Շենի (Ջիվանշիր), Խծկոնքի, Տաթևի, Ալեքսանդրոպոլի (Լենինական) ձեռագրերից, Տրդատ եպիսկոպոս Պալյանի, Խաչիկ վարդապետի մոտ պահված ձեռագրերից ու պատոգիկներից և այլն։

Սույն գործի առաջին մասում հեղինակը հանգամանալից կերպով տալիս է Իր մեջ բերած 150 նմուշների լիարժեք բացատրությունը։ Այսպիսով այս աշխատությունը իր տեսակի մեջ եզակի գործ էր, քանի որ միակն էր, որ սիստեմի բերելով մեսրոպատառ մեր հնագույն գրությունները, ժամանակագրական կարգով դասավորել և ամբողջական պատկերն էր տվել հայ գրի զարգացման։ Նրան հաջողվել էր ընդգրկել հայերեն բոլոր տառաձևերը իրենց անցման եղանակներով և այդ բոլորը կատարել էր մինչև այդ իր նախընթացը չունեցող հարուստ և բազմապիսի օրինակներով։

Գարեգին վարդապետ Հովսեփյանցի սույն գործը արդարորեն շատ մեծ գնահատանքի արժանացավ։

«Շնորհակալությամբ ստացած եմ գրչության արվեստին երրորդ մասը և Մեծոփեցիին կենսագրությունը։ Երկուքն ալ իրենց տեսակին մեջ նշանավոր երկասիրություններ[37],— հիացմունքով գրել է Մաղաքիա արքեպիսկոպոս Օրմանյանը։

«Գործը ավելի է պարունակում քան ինչ որ վերնագիրն է խոստանում»,— ճշմարտացի կերպով գրել էր այդ գրքի մասին իր գրած գրախոսականում Մեսրոպ վարդապետ Մաքսուդյանը[38]։

Իսկ մեծանուն Աճառյանը հիշյալ աշխատության հրատարակությունից դեռևս 40 տարի հետո գրում էր. «Հայ հնագրության համար նշանավոր է նրա շատ ընդարձակ հոդվածը, որ կազմում է «Շողակաթ» ժողովածուի երկրորդ կեսը և ուր ո՛չ միայն տալիս է հայ հնագրության, հայ գրի զարգացման տեսակետը, այլև իր նկարած լուսանկարներով գործնականորեն ցույց է տալիս հինգերորդ դարից սկսած մինչև վերջին դարերում նրա զարգացման ընթացքը»[39]։

Դեռ չերկարելու համար գնահատականների շարքը, կարծում ենք, որ այսքանն էլ բավական է ցույց տալու համար, թե ինչպիսի մեծ ընդունելության է արժանացել այս գործը։ Սակայն միանգամայն անհրաժեշտ է նկատել, որ չնայած Գարեգին Ա Կաթողիկոսի «Քարտեզ հայ հնագրության» աշխատության հրատարակումից մինչև այսօր արդեն կես դար է անցել, սակայն նա այսօր էլ դեռ չի կորցրել իր թարմությունը։ Նա այժմ էլ հրապարակի վրա գտնվող մեր ամենակատարյալ ուղեցույցն է հայերեն արձանագրությունների և ձեռագրերի հնագրության հարցերով զբաղվողների համար։ Նույն ժամանակ նա արժեքավոր է նաև հայ ժողովրդի

35 Գարեգին վարդապետ, «Քարտեզ հայ հնագրության», «Շողակաթ», Ս. Էջմիածնի հայագիտական ժողովածու, գիրք առաջին, Վաղարշապատ, 1913, էջ 170—214+Ա—Ե+տախտակ Ա—Ղ։

36 Գարեգին վարդապետ Հովսեփյան, «Գրչության արվեստը հին հայոց մեջ», մասն Գ։ Քարտեզ հայ հնագրության (հայ գրի գյուտի 1500-ամյակի առթիվ), 95 տախտակով», Վաղարշապատ, 1913 թ., էջ 8։

37 Հայկական ՍՍՌ Մեսրոպ Մաշտոցի անվան Պետական Մատենադարանի դիվան, թղթապանակ Գարեգին արքեպիսկոպոս Հովսեփյանի, № 96, վավերագիր № 1509։

38 «Արարատ», 1915, էջ 94—95։

39 «Էջմիածին», 1952, № 1, էջ 47։

անցյալի պատմության, ինչպես նաև հայ լեզվի պատմության հետազոտողների համար։

Հայ գրչության անցյալի պատմության ուսումնասիրության գործում շատ վիթխարի էին սակայն Գարեգին Ա Կաթողիկոսի ծրագրերը։ Վերոհիշյալ լույս տեսած գործը միայն նախանյութն էր, միացած Իր տիտանական աշխատության՝ բազմապիսի ճոխ նկատողություններով և ծանոթագրություններով։ Բուն ուսումնասիրությունը, որն ընդգրկելու և իր լրման էր հասցնելու «Գրչության արվեստը հին հայոց մեջ» մեծ գործը, բաղկացած էր լինելու նաև Ա և Բ մասերից, որոնք սակայն ցարդ լույս չտեսան։ Այս աշխատության առաջին մասը, ըստ հանգուցյալ մեծ գիտնականի 1947 թվականին կազմած ծրագրի, պետք է տպագրվեր 1948—1949 թվականների ընթացքում Իր այլ բազմաթիվ գործերի հետ միասին։ Սակայն հեղինակի առողջական վիճակի հետզհետե վատթարանալը պատճառ եղավ այս գործի անկատար մնալուն։ Ինչպես գրում է հանգուցյալի վերջին տարիների գիտական աշխատակից, բանասեր-հրապարակագիր Սիմոն Սիմոնյանը, Գարեգին Ա Կաթողիկոսը տարիներ շարունակ նյութեր կուտակելով նպատակ էր ունեցել կատարելագործել Իր այս աշխատությունը, սակայն հավաքված հարուստ այդ նյութերը, որքան հայտնի է, չկարողացան մղտնել ձեռագիր Իր աշխատության մեջ։ «բայց գործի էության լավագիտակ ուսումնասիրող մը կրնա զանոնք հյուսել այդ մեծ գործի մեջ»[40]։

Թեև անտիպ լինելու հետևանքով ընդհանուր գաղափար չունենք բազմավաստակ հեղինակի կես դարից ավելի տքնաջան աշխատանքի արդյունք հանդիսացող այս մեծ գործի ընդգրկման ծավալի մասին, սակայն պետք է կարծել, որ այդ կապակցությամբ որոշ լույս կարող է սփռել դեռևս 1913 թվականի հոկտեմբերի 24-ին և 1914 թվականի փետրվարի 21-ին Բաքվում և Թիֆլիսում Գարեգին վարդապետ Հովսեփյանցի կողմից «Գրչության արվեստը և գրի զարգացումը հայոց մեջ» կարդացված դասախոսությունների տպագիր համառոտ ծրագրերին ծանոթանալը։ Ծրագրերը, երկուսն էլ, նույն բովանդակությունն ունեն, միայն առաջինի վրա, որը պահվում է Մատենադարանի Իր անձնական դիվանում, կան հեղինակի կողմից թանաքով արված փաստական նյութերի հավելումներ, և որոնց մասին մենք կնշենք մեր ուսումնասիրության վերջում, երբ կտանք հեղինակի մատենագիտությունը։

Հեղինակը հիշյալ ծրագրերում նախ կանգ է առնում հնագրության առարկայի, նրա իբրև «կարևոր օժանդակ հայ քաղաքակրթության և ներքին կյանքի ուսումնասիրության» հարցի վրա։ Ապա խոսում է գրչության նյութերի և գրենական պիտույքների մասին (պապիրուսի, մագաղաթի, նրա պատրաստության եղանակի, հայ մագաղաթագործների, մագաղաթի տեսակների, ինչպես նաև թղթի, թանաքի և գրչի պատրաստության, վրձինի և այլնի) և հետո անցնում է գրելու գործողության հարցերին։ Նկատի է առնում գրելու ձևը, սրբագրությունները, գիտական կամ համեմատական բնագրերը, կետադրության և առոգանության նշանները, ձեռագրերի արտագրության տեղությունը, գրիչների կրած դժվարություններն ու նրանց ստացած վարձատրությունը, որից հետո անցնում է ձեռագրերի միջնադարյան գանձարանների՝ մատենադարանների վրա, կանգ առնելով պատմական Հայաստանում գոյություն ունեցող ինչպես վանական, այնպես էլ անհատական մատենադարանների և առանձին գրասեղանների մասին։ Ապա կանգ է առնում ձեռագրերի ստացողների և հովանավորողների վրա, ցույց տալիս ձեռագրեր գրելու շարժառիթները, ձեռագրերի վաճառքն ու գերությունից ազատվելը և այլն։

Ծրագրի երկրորդ մասում հեղինակը հանգամանալից կերպով կանգ է առնում գրչության դպրոցների, գրչության ուսուցիչների վրա, սկսած հին ժամանակներից մինչև ԺԷ դարը։ Անդրադառնում է Վանգոյի դպրոցին՝ Կամսարականների և Բագրատունիների շրջանում, Տաթևի և Անիի դպրոցներին, ԺԳ դարի վերածնության և արևելյան վանքերի, Կիլիկիայում գրչության ոսկեդարի և Հռոմկլայի, Սկևռայի, Դրազարկի (Սիս, Ակներ-Գոներ և այլն) դպրոցներին և նրանց նշանավոր ներկայացուցիչներին։ Ապա անցնում է ԺԳ—ԺԵ դարերի վարդապետարաններ Գլաձորի, Տաթևի, Մեծոփա վանքի մասին իբրև գրչության կենտրոնների և «առկայծեալ պատրոյգներ»-ի։ Հետո խոսում է ԺԷ դարի վերածնության՝ Էջմիածնի, Բաղեշի (Խիզան), Ամիտի, Ջուղայի դպրոցների, ինչպես նաև գաղթավայրերում (Ղրիմ, Կոստանդնուպոլիս) զարգացած գրչության դպրոցների մասին։

Հայ գրչության արվեստի վերջին մասում հեղինակը զբաղվում է հայ գրի զարգացման աստիճանների ու տեսակների, ինչպես նաև տարբեր հայկական տառատեսակների տիրապետության և տեղության շրջանների, զարդագրության և նրա զարգացման աստիճանների հարցերով։

Հիշյալ զեկուցումների առթիվ Գարեգին վարդապետ Հովսեփյանցի կողմից կազմված

40 Սիմոն Սիմոնյան, «Գարեգին Կաթողիկոսի բանասիրական վաստակը, «Էջմիածին», 1952, № 7, էջ 35 (արտատպված «Հասկ»-ից)։

համառոտ ծրագրերի մեր առաջ բերած հակիրճ տողերն իսկ կարծում ենք բավական են համոզելու համար, որ ոչ հեղինակի ծրագրից առաջ և ոչ էլ դժբախտաբար մինչև այսօր գոյություն չի ունեցել և դեռևս էլ չունի մեծ գիտնականի ծրագրի խորությամբ կազմված հայ գրչության պատմության նվիրված հոյակապ մի աշխատություն։

Ի դեպ, պետք է ասել, որ խորին երախտագիտությամբ և մեծարանքով ենք վերաբերվում հայ հնագրության հարցերով զբաղված մեր հին թե նոր բոլոր մասնագետների թողած վաստակի հանդեպ, սակայն չպետք է մոռանալ նույն ժամանակ, որ այդ հեղինակներից ոչ մեկը չի ցուցաբերել այնպիսի մեծ նվիրում և նյութի լայն ու խորունկ ճանաչում և ընդգրկում, ինչպես Գարեգին Կաթողիկոսը։ Եվ այս բոլորը ասում ենք հիմնականում ելնելով դեռևս 1913 թվականին Գարեգին վարդապետ Հովսեփյանցի կողմից կարդացված մի դասախոսության ծրագրի համառոտ տվյալներից, սակայն չէ՞ որ այդ շրջանում իսկ նա տվյալ նյութի հետ կապված շատ ավելի խոր գիտական հարցեր պետք է որ ունեցած լիներ, և սակայն ժողովրդական բնույթ կրող մի դասախոսության մեջ հարմար չգտնելով, անկասկած զանց առած պիտի լիներ դրանք։ Ավելին. Գարեգին Ա Կաթողիկոսը այդ թվականից հետո մոտ 40 տարի, ինչպես նշում են նրան մոտ կանգնած մարդիկ, իր հայ գրչության պատմության վերաբերյալ հարուստ նյութեր էր կուտակել, որոնք ո՞վ գիտե որքա՞ն նոր հարցեր էին արծարծում ու լուծում և մի քանի անգամով ճոխացնում արդեն իսկ ճոխ եղող իր գործը։

Իր կենդանության օրոք չկարողանալով տպագրության հանձնել իր «Հայ գրչության արվեստի և գրի զարգացումը հայոց մեջ» աշխատության Ա և Բ մասերը, Գարեգին Ա Կաթողիկոսը սակայն բազմաթիվ հոդվածներում և մենագրություններում դարձյալ անդրադարձել է հնագրության հարցերին։

Հայ հնագրության հարցերին է մասամբ առնչվում նրա ամենավաղ հոդվածներից մեկը, որ կրում է «Մրդության Ավետարանը»[41] խորագիրը։ Նա է, որ առաջին անգամ բանասիրությանը ծանոթացնում է Ախալցխայի գավառի հիշյալ գյուղում այժմ էլ դեռևս պահվող 974 թվականին գրված Ավետարանը, որը հայ հնագրության և հայ մանրանկարչության պատմության համար կարևոր նշանակություն ունեցող ձեռագիր է։

Հայ հնագրության վերաբերյալ մի շարք կարևոր գիտողություններ կան նաև ցանցրնված նրա ձեռագրագիտական ուսումնասիրությունների և մինչև իսկ պատմահնագիտական գործերի մեջ։ Այս առումով բավական ենք համարում հիշել միայն Գարեգին Ա Կաթողիկոսի «Նյութեր և ուսումնասիրություններ հայ արվեստի և մշակույթի պատմության» Գ պրակում Պողավանքի մասին գրած հայտնի ուսումնասիրությունը, որ խոսելով տաճարի հիմնադիր Մանվել Ամատունու արձանագրության մասին, գրել է նաև հետևյալը. «... Երեք բառից բաղկացած մի թանկարժեք արձանագրություն, որ ոչ միայն տաճարի հիմնադիրն է մատնանշում, այլև հայ հնագրության ամենահին մնացորդներից մեկն է Զ դարի առաջին կեսից. ինչպես կտեսնենք, երբ շենքի ծագման ժամանակը կպարզենք։ Այս կապակցությամբ տողատակին հետևյալ բնագրական ուշագրավ մանրամասնություններն է տալիս. «Ամբողջ միջին, ուղղանկյուն երկաթագրով, ուշադրության արժանի է, որ 9 բոլորգրի ձևով է, m-ը փոքր ինչ փչացած է»[42]։

Ուսումնասիրելով Պողնիի արձանագրությունը նկատել ենք, որ այնտեղ կան օգտագործված ոչ միայն ուղղագիծ, այլ բոլորագիծ երկաթագրեր. սակայն կարևորն այն է, որ Գարեգին Ա Կաթողիկոսն է, որ առաջին անգամ հայտնել է, որ Զ դարի այդ արձանագրությունը գրված է նաև Մեսրոպյան ուղղագիծ երկաթագրով։ Այդ նույն տառաձևերը նա նկատել է նաև Օձունի Զ դարի արձանագրության մեջ[43]։ Այսպիսով անվանի հոդվածագիրը, ի հակադրություն որոշ բանասերների կարծիքի, որոնք գտնում էին, թե Մեսրոպյան միջին կամ ուղղագիծ կոչված երկաթագիրը ծագել է Մեսրոպյան բոլորաձև երկաթագրից, այն էլ միայն Ժ դարում, նա ուժեղ կռվաններ կարողացավ ստեղծել ցույց տալու համար, որ երկաթագրերի երկու տեսակներն էլ հին են եղել։

Հայ գրչության պատմության բազկացուցիչ գլուխներից մեկը, որն առավել ամբողջական ուսումնասիրության ձևով հնարավորություն է ունեցել հրատարակել Գարեգին Ա Կաթողիկոսը Իր կենդանության օրոք, հանդիսացել է «Մատենադարանները հին հայոց մեջ» հոդվածը[44]։ Հեղինակը այստեղ առաջին անգամ փորձել է շարադրել մեր անցյալի նշանավոր մատենադարանների հակիրճ պատմությունը։ Ահա մի քանի տող այդ ու-

[41] «Արարատ», 1898, № 11—12, էջ 51։

[42] Գարեգին արքեպիսկոպոս Հովսեփյան, «Նյութեր և ուսումնասիրություններ...», պրակ Գ, էջ 14։

[43] Գարեգին Կաթողիկոս, «Իններորդ դարի ձեռագրական մի հատակագծեր և Ատոմ Անձևացյաց իշխան», «Էջմիածին», 1946, № 8—10, էջ 54։

[44] «Գայթար», նոր տարվա բացատիկ, 1916, էջ 7—14։

սումնասիրության առաջարանից. «Գրչության պատմության, նրա զարգացման և մշակույթի մասին լիովին գաղափար կազմել կարող չենք, եթե մատենադարանների մասին խոսք չասենք։ Որովհետև այդ հաստատությունների մեջ են հավաքվել և պահպանվել այն ձեռագիրները, ուր մարմնավորված են հայ մտքի ստեղծագործությունը, հայ արվեստը պատկերագրության և զարդանկարչության ճյուղերի մեջ. հայ կրոնական և աշխարհիկ բանաստեղծություն, ինքնուրույն կամ թարգմանական, պատմական և այլ տեսակի մատենագրություն։ Առանց մատենադարանի գոյության, մտքի և քաղաքակրթության զարգացում և սերունդներից սերունդ ավանդելու և տարածելու միջոց չկա լայն չափերով։ Անհատների ձեռքին մնացած գրքերը քիչ էին և ավելի դյուրին կորստյան և ոչնչացման ենթարկելու»[45]։

Մեծանուն ուսումնասիրողը կարևոր փաստական տվյալների միջոցով վերոհիշյալ հոդվածում ուրվագծում է Տաթևի, Արգինայի, Կիլիկիայի, Հաղբատի, Սանահինի, Գետիկ վանքի, Սաղմոսավանքի, Հովհաննավանքի, Գեղարդի վանքի, Գլաձորի, Տիգրանակերտի, Բաղեշի և Լիմ անապատի միջնադարյան հայկական մատենադարանների կյանքն ու գործունեությունը։

Խոսելով «խավար» կոչված դարերի մասին, նկատի առնելով մոնղոլ-թաթարական արշավանքների ժամանակաշրջանը Հայաստանում, հասնելով ի վերջո ԺԷ դարի սկզբին, հեղինակը մեծ ոգևորությամբ ցույց է տալիս, որ «մեր վանքերի «առկայծեալ պատրոյգն» իսպառ չշիջավ, իսկ ԺԷ դարում փորձեր կատարվեցին նորա ավելի լույս տալու, հոգևոր վերածնության»։ Հեղինակի պատկերավոր արտահայտությամբ, այս շրջանում մեր կյանքն «ընթացել է մուրճի և սալի մեջ. փառք և պատիվ մեր եկեղեցու և ազգին, որ. ի սպառ շնչասպառ չենք եղել»։

Հատկապես մեծ արժեք են ներկայացնում Լիմ անապատի մատենադարանի մասին բերված նորահայտ փաստերը, որոնցից մեզ հայտնի է դառնում, որ 1693 թվականին միայն Լիմում 3124 ձեռագիր է պահվել։ Ահա մի հատված այդ թանկարժեք հիշատակարանից. «Ի գերահռչակ մենարանս զսրբարնակ զանապատն Լիմ շնորհօքն Աստուծոյ և ջանիւք մեծահամբաւ միաբանից իւրոց ունի յոյժ պիտանի մատեանս, թուք ՎՃԻԴ (3124)...»։ Այսպիսով, միայն Լիմ անապատում գտնվող 3124 ձեռագրերից առաջին համաշխարհային պատերազմի ժամանակ ամբողջ Վասպուրականից (Լիմ և Կտուց անապատներից, Աղթամարից և Վանի եկեղեցիներից), ինչպես նշում է հեղինակը, ձեռագրերը էջմիածին տեղափոխվեցին, ընդհանուր քանակությամբ ոչ ավելի քան 1500։

Գարեգին Ա Կաթողիկոսն Իր «Խաղաքյանք կամ Պոռշյանք» գործի Բ մասում մեծ հմտությամբ շարադրելով Կեչառույքի, Այրից կամ Գեղարդա վանքի, Աղջոց Ս. Ստեփանոսի, Թանատի վանքի և հատկապես Գլաձորի բարձր դպրոցի կամ «Համալսարան»-ի պատմության մասին, ընդարձակ կերպով անդրադարձել է նաև այդ վայրերում զարգացած մտավոր կյանքին և գրչությանը։

Հայ գրչության արվեստի հովանավորների մասին ևս մեծանուն հեղինակը տպագրել է մի շարք գործեր, որոնցից հիշատակենք «Վախտանգ որդի Ումեկա և նորա տոհմը» (ԺԳ դարի երկրորդ կես)[46], Կոստանդին Ա կաթողիկոս որպես հայ մանրանկարչության մեծ հովանավոր» (ԺԳ դ.)[47] և այլն։

Գարեգին Ա Կաթողիկոսի հայ հնագրության նվիրված տպագիր ամենափերջին կարևոր գործն է «Իններորդ դարի ձեռագրական մի հատակոտոր և Ատոմ Անձևացյաց իշխան» ուսումնասիրությունը[48], որտեղ հեղինակը հմուտ կերպով հետազոտում է 1311 թվականին Այրի ձորում գրված ձեռագիր մի Ավետարանի կողերին կարված 2 թերթ մագաղաթյա պահպանակները, որոնք Կյուրեղ Երուսաղեմացու «Կոչումն ընծայութեան» գործից հատվածներ էին բովանդակում։ Պատառիկներից մեկի վրա պահպանված հիշատակարանի փոքր մնացորդից հաստատելով նրա գրչության մոտավոր թվականը (873—892), մի այլ գործում այդ հիշատակագրությունը ճիշտ կերպով դետեղել է սկզբնագիր հիշատակարանների առաջին տեղում, նախքան ցարդ մեզ հայտնի հնագույն Լազարյան Ավետարանը. «Համարելով հավանորեն ավելի հին, քան Լազարյան Ճեմարանի հայտնի Ավետարանը 887 թվականիս»[49]։

Հայ հնագրության հարցերով զբաղվողների համար խիստ կարևոր են այս ուսումնասիրության առթիվ կատարած նրա հնագրական ընդհանրացումները։ Ելնելով Կյուրեղ Երուսաղեմացու հիշյալ երկու բեկորների ընձեռած արժեքից, Գարեգին Ա Կաթողիկոսը պարտականություն էր դնում մասնագետների վրա՝ ուսումնասիրել հայե-

---

45 «Գայթար», նոր տարվա բացատիկ, 1946, էջ 7—14։

46 Գարեգին արքեպիսկոպոս Հովսեփյան, «Նյութեր և ուսումնասիրություններ...», Գրակ Ա, Երուսաղեմ, 1935, էջ 1—14։

47 Նույնի գրակ Բ, Նյու-Յորք, 1943, էջ 5—44։

48 «Էջմիածին», 1946, № 8—10, էջ 40—54։

49 Գարեգին եպիսկոպոս. «Հիշատակարանք ձեռագրաց», էջ 80։

րեն ձեռագրերի պատառիկներն ու կրկնագրերը. «Հայ բանասիրության առաջ մի նոր խնդիր է դրվում՝ հետամուտ լինել հատակոտորների կամ կրկնագիրների ուսումնասիրության, որպեսզի հայ գրի զարգացման մի մեծ բացը լորս դարի ընթացքում գտնել կարողանանք», որովհետև, ըստ նրա միանգամայն ճիշտ եզրակացության, վիմական արձանագրություններով այդ բացը լիովին լցնել հնարավոր չէ. «քանի որ տարբեր են արձանագրությունների և ձեռագրերի գրչության նյութն ու գրության եղանակները»[50]։

Ինչքա՞ն պիտի հրճվեր մեծանուն հեղինակը, եթե կենդանի լիներ և իմանար, որ Բերլինում Իր հայտնաբերած և ուսումնասիրած Կյուրեղի երկու բեկորների թիվը Հայկական ՍՍՌ Մեսրոպ Մաշտոցի անվան Պետական Մատենադարանում, երկար տարիների պրպտումների շնորհիվ, պիտի հասներ 17-ի, և որոնք բոլորն էլ ընկել էին նույն մայր ձեռագրից և ցրվել բոլորովին տարբեր վայրերում։ Պատառիկներից մեկը երկար ժամանակ պահվել էր Էջմիածնի մատենադարանում, երկու այլ բեկորներ բերվել են Անիի թանգարանից, որ հիմնադրել էր ակադեմիկոս Ն. Մառը, լորս թերթ պատառիկներ հասել են Վարագից 1916 թվականին, իսկ մնացած պատառիկները իբրև պահպանակ կարված էին մնում զանազան ձեռագրերի կողերին։ Դրանցից երկու թերթ պահպանակ ուներ 1311 թվականին Քաջբերունյաց գավառի Այրի ձորում գրված Ավետարանը, որը տարվել է նաև Շամախի, ապա Վասպուրական և ի վերջո Կեսարիայի Պենտուսա գյուղը և սեփականությունն է դարձել Բիդեճյանների ընտանիքի, որ փերկում է ձեռագիրը հայաշինչ սպանդից և բերում Բեյրութ, և ուր առաջին անգամ այդ երկու բեկորները ուսումնասիրվել են Գարեգին Կաթողիկոսի կողմից։ Ձեռագրի վերջին տեր Կարապետ Բիդեճյանը, որն այժմ հայրենադարձ լինելով, ապրում է Սովետական Հայաստանում, 1953 թվականին այն, հնագույն հիշյալ երկու թերթ պատառիկների հետ, հանձնեց Երևանի Մատենադարանին։ Այլ 4 թերթեր հայտնաբերեցինք Մոսկվայից 1959 թվականին բերված մի ձեռագրում, որը նախապես պահվել էր Մոկաց երկրի Սերի վանքում, Շատախում, Փարիզում, Թիֆլիսում, Կոկանդում (Միջին Ասիա) և ապա Մոսկվայում։ Եվ վերջապես Կյուրեղ Երուսաղեմացու կորած ձեռագրից այլ լորս թերթեր բերվել են 1916 թվականին Աղթամարից։ Կյուրեղի նորահայտ 15 բեկորների ինքնությունը մինչև վերջին ժամանակներս հայտնի չի եղել։ Պատառիկները հայտնաբերվել և ուսումնասիրվել են այս տողերը գրողի կողմից[51]։ Այժմ հիշյալ բեկորների հաջորդականությունը որոշելով դարձել է առանձին ձեռագիր և ստացել է Մատենադարանի 10 100 №-ը։

Անկարելի է խոսել Գարեգին Ա Կաթողիկոսի հայ հնագրության մատուցած ծառայությունների մասին և մոռանալ Նրա կազմած «Հիշատակարանք ձեռագրաց» հոյակապ գործը, որի դժբախտաբար միայն առաջին հատորը լույս տեսավ։ Այդ գործը ուշագրավ է ոչ միայն իր բովանդակած մեծարժեք հիշատակարաններով, այլ հեղինակի կողմից կազմված ծանոթագրություններով և որոնք շատ հարուստ են նաև հնագրական դիտողություններով և միանգամայն շատ ուսանելի հայ հնագրության հարցերով զբաղվողների համար։ Սեղմ տողերի մեջ պարփակված է մնում հեղինակի ավելի քան 50 տարիների ընթացքում այս ուղղությամբ կատարած հարուստ որոնումների և ուսումնասիրությունների հանրագումարը։ Նա ուսումնասիրողների ուշադրությունն է հրավիրում մի շարք ձեռագրերի ունեցած տառաձևերի յուրահատկությունների, նրանց ուղղագրության, կետադրության և այլ հարցերի վրա, ճշտում անթվական ձեռագրերի ժամանակը, անում բազմապիսի արժեքավոր դիտողություններ և լրացումներ, որոնց մասին սակայն տեղի սղության պատճառով հնարավորություն չունենք կանգ առնելու։

Հայ գրի զարգացումը մինչև վերջ մնացել է Գարեգին Ա Կաթողիկոսի ամենասիրելի բնագավառներից մեկը։ Այդ բնույթի իր ամենավերջին տպագիր գործում ընդհանրացումներ անելով հայ գրի տեսակների զարգացման մասին, նա փափագ էր հայտնում շուտով հրապարակ հանել իր երկար տարիների հայ գրչության նվիրված վաստակը։

«Հայ գրի զարգացումը ոչ թե մի տեսակից մյուս տեսակին է անցնում, այլ տեսակներն իրենց պեսպիսությունները ու զարգացման ընթացքն ունեն գրչության արվեստի պատմության մեջ, որի մասին մեր տեսությունն ու հիմնավորումը, հուսանք, թե պիտի հաջողվի կարճ ժամանակից հետո մատչելի դարձնել բանասիրությանը»[52]։

50 Գարեգին Կաթողիկոս. «Ինն երորդ դարի ձեռագրական մի հատակոտոր...», էջ 54։

51 Ա. Քոլանյան. «Նորահայտ պատառիկներ Կյուրեղ Երուսաղեմացու Թ դարի մի գրչագրից», «Բանբեր Մատենադարանի», № 5, Երևան, էջ 201—238։

52 Գարեգին Կաթողիկոս. «Ինն երորդ դարի ձեռագրական մի հատակոտոր...», էջ 54։

Ինչպես ասացինք, Գարեգին Ա Կաթողիկոսն իր աշխատությունների հրատարակության համար կազմած ծրագրում նախատեսել էր 1948—1949 թվականներին տպագրել իր գրչության արվեստի Ա մասը։ Նա 1948 թվականին լույս տեսած իր մի հոդվածում գրում էր. «Պատրաստ է և միայն փոքր լրացումների կարոտ՝ Գրչության արվեստը հայոց մեջ, որ պատմությունն է այդ արվեստի և նորա նշանավոր դպրոցների»[53]։ Սակայն իր բազմազբաղ վիճակն ու վրա հասնող անողոք հիվանդությունը խանգարեցին նրան այդ անելու։ Թեև նույնիսկ հիվանդ վիճակում նա չէր դադարում հայ անցյալի գանձերի մասին խորհրդածելուց։

Հայ հնագրության հարցերի համար խիստ ուշագրավ են Գարեգին Կաթողիկոսի կյանքի վերջին շրջանին նրան խնամող հիվանդապահուհիներից մեկի հուշագրությունները։ Ըստ նրա, մեծանուն հեղինակը 1951 թվականի օգոստոսից մինչև 1952 թվականի գարնանը գեռևս անխզելիորեն կապված էր մնում իր գիտական աշխատանքներին։ «Իր միտքը,— գրում է հուշագրող հիվանդապահուհին,— կղզաղեր բանասիրական նյութերով։ 1951 թվականին օգոստոս և սեպտեմբեր ամիսներուն հաճախ կկրկներ հետևյալը.

— Հնագույն հայ գրերի տեսակը գտել եմ, իմ ուսումնասիրությունների շրջանում։

Պիտի ուզեր այդ մասին խոսիլ ու գրել։ Ուզեցի որ ինք խոսի և ես գրեմ. մերժեց. «Որովհետև դուք չեք հասկանա, նա պիտի գրի,— ըսավ՝ ակնարկելով իր գիտական աշխատակից պր. Սիմոն Սիմոնյանին»[54]։

Չգիտենք, թե Սիմոն Սիմոնյանը որևէ նշում կատարե՞ց արդյոք այդ մասին։ Հայ հնագրության պատմության մեծ երախտավորի վերջին կտակն էր այդ, արտասանված Իր կյանքի վերջալույսին։

Մեսրոպյան տառերի անմահ ուժն էր, որ մեծ հանդ էր տալիս Գարեգին Ա Կաթողիկոսի տառապակած մարմնին. և մինչև վերջին շունչը նա ապրում էր նրանց անշեջ հրով։ Այդ տառերը նրա համար սպիտակ մագաղաթի վրա գրված լոկ սև գրեր չէին, այլ մեր ժողովրդին «խավար դարերս»-ի միջով անվտանգ սլացնող և հայրենի լուսավոր օրերի շեմքին հասցնող ազգապահ բանակ, որի զորության կողքով նրան ստրկացնող ամեհի ուժերից շատերը ընկան, սակայն հայ տառերը իբրև ազգապահ բանակներ, դարձան մեր գոյության վսեմ խորհրդանիշ։

Մեծ է եղել Գարեգին Ա Կաթողիկոսի վաստակը հայ հնագրության ուսումնասիրության գործում։ Միանգամայն ճշմարիտ է գտնվել անվանի գիտնական, ակադեմիկոս Հրաչյա Աճառյանը, երբ նկատի ունենալով Գարեգին Ա Կաթողիկոսի հնագրական տպագիր վաստակը, հեղինակին կոչել է «Հայ հնագրության մեծ վարպետ»[55]։ Եվ այս գնահատականի արժեքը շատ ավելի է մեծանում, եթե նկատի ունենանք նաև այն, որ այդ ասված է մի գիտնականի կողմից, որն ինքը ևս իր կարգին Իր նպաստի կարևոր բաժինն է բերել հայ հնագրության ուսումնասիրության գործին։

Ակադեմիկոս Հրաչյա Աճառյանը այդպիսի գնահատական էր տվել Գարեգին Կաթողիկոսին, նկատի առնելով միայն նրա տպագիր գործերը։ Իսկ որքան մեծ կլինի նրա տեղը հայ հնագրության պատմության մեջ, եթե լույս տեսնե նաև հայ գրչության և հայ տառերի զարգացման նվիրված նրա ավելի քան 50 տարվա տիտանական աշխատանքի արդյունքը եղող ուսումնասիրությունը, որը ցարդ շարունակում է անտիպ մնալ դժբախտաբար։

Թեև դեռևս անտիպ է մնում նրա ձեռագիր վաստակը, այնուամենայնիվ Գարեգին Կաթողիկոսը Իր տպագրածներով իսկ մնում է հայ հնագրության մեծ վարպետը։

Դ. ՀԱՅԿԱԿԱՆ ՄԱՆՐԱՆԿԱՐՉՈՒԹՅԱՆ ՈՒՍՈՒՄՆԱՍԻՐՈՒԹՅԱՆ ՀԻՄՆԱԴԻՐԸ

Գարեգին Ա Կաթողիկոսի դեպի հայ ձեռագրագիտությունը ունեցած խոր հմտության արդյունք է հանդիսանում նաև հայ մանրանկարչության արվեստի բնագավառում նրա կատարած մեծ գործը։ Բացառիկ հանդ ու անսահման սեր է դրել նա Իր այս տիպի գործերի մեջ։ Իբրև համապարփակ մտքի տեր գիտնական, ունենալով հսկա գիտական պաշար և մեծ հմտություն համաշխարհային արվեստի պատմության մասին, Գարեգին Ա Կաթողիկոսը առաջին անգամ լիարժեք հայտնաբերողը և արժեքավորողը հանդիսացավ հայ ժողովրդի արվեստի մեծագույն պարծանքներից մեկի՝ հայ մանրանկարչության։

Իրենից առաջ Հովսեփ Ստրյիգովսկին, Ֆրեդերիկ Մակլերը և այլ գիտնականներ

53 Գարեգին Կաթողիկոս, «Մեռեղծենք հոգևոր Կիլիկիան», «Հասկ», 1948, էջ 119։

54 «Հասկ», 1952, էջ 416, «Հիվանդապահուհի օրիորդ Վեղանույշ Իրրանոսյանի օրագրեն»։

55 Հ. Աճառյան, «Գարեգին Կաթողիկոս Հովսեփյանն իբրև հայ հնագրության մեծ վարպետ», «Էջմիածին», 1952, № 7, էջ 83։

մասնակի ծանոթացրել էին հայ մանրանկարչությունը գիտական աշխարհին, սակայն դեռևս ոչ ոք չէր փորձել ուսումնասիրել հայ մանրանկարչության չքնաղ արվեստը իր ամբողջական արժեքի մեջ և մանավանդ ցույց տալ այդ արվեստի ինքնատիպությունը։

Եթե մեծանուն Թորամանյանի անվան հետ է կապված հայ ճարտարապետության, և հանճարեղ Կոմիտասի հետ՝ հայ երաժշտության հայտնաբերման պատիվը, ապա իրավամբ Գարեգին Ա ձեռագրագետ Կաթողիկոսին է պատկանում հայ մանրանկարչության արվեստի հայտնաբերողը լինելու մեծ վաստակը։

Սակայն ինչքա՞ն համեստ էր նա իր պատկառելի վաստակի առջև, մի համեստություն, որը հատուկ է միայն՝ իրեն նման մեծություններին համար, երբ, խոսելով հայ մանրանկարչության արվեստի ուսումնասիրության հարցերի մասին, նշում էր միայն ուրիշների անունները։ Այդ մասին նա գրում էր. «Հայ մանրանկարչական արվեստի ուսումնասիրությունն սկսված է նախ եվրոպացիների կողմից։ Ստրշիգովսկի, Մակլեր, բայց և հայերի, ինչպես օրիորդ Սիրարփի Տեր Ներսեսյանն է, կամ հանգուցյալ Սագրզյանը, իսկ ատաղձ են մատակարարել Ջոպանյան և ուրիշ շատերս»[56]։

Նա դիրքի ու փառքի մարդ չէր, նրա համար կարևորը միայն այն լավ արդյունքն էր, որ կարող էր բխել իր գործերից, իրեն համար էականը բազմամյա տարիների աշխատանքը չէր, այլ այն, որ ինք հնարավորություն կստանար ուսումնասիրելու հայ մանրանկարչությունը, հայ ճարտարապետության ստեղծած փառքից հետո հրապարակ հանելու համաշխարհային արվեստի ոլորտում և աշխարհով մեկ պանծացնել այն ստեղծող ժողովրդի անունը։

«Հուսալ կարող ենք,— գրում էր մեծանուն գիտնականը,— թե հայ մանրանկարչության արվեստի նյութերի և ուսումնասիրությունների կարգավորյալ աշխատությամբ, հնարավոր կլինի նույնչափ հետաքրքրություն զարթեցնել և գնահատելի դարձնել, որչափ հայ ճարտարապետությունը»[57]։

Եվ այսպես, 60 տարի շարունակ իր նախասիրած բոլոր գործերի հետ միասին, Գարեգին Ա Կաթողիկոսը շարունակում էր անխոնջ պրպտումները և ուսումնասիրությունները կախարդող հայ մանրանկարչության արվեստի բնագավառում և մեծագույն հայտնաբերողը և մասնագետը մնաց այդ արվեստի։

Հայ մանրանկարչության արժեքի անվանի մասնագետ պրոֆ. օրիորդ Սիրարփի Տեր Ներսեսյանը, ինչպես գրում էր իր մի հոդվածում, դեպի հայ մանրանկարչության արվեստը ունեցած սերն ու ոգևորությունը պարտական էր մնում Գարեգին վարդապետ Հովսեփյանցի մագնիսացնող շնչին։ Ահա թե ինչ է գրել օրիորդ Սիրարփի Տեր Ներսեսյանը այդ մասին. «1912-ին առաջին անգամ ներկա գտնվեցա Գարեգին Կաթողիկոսի,— այն ատեն անշուշտ վարդապետ,— մեկ դասախոսության հայ մանրանկարչության մասին, որ խոր տպավորություն բրավ իմ վրաս. հետագային, երբ սկսա հետևիլ բյուզանդական պատմության և արվեստի ու սկսա դրաղիլ նաև հայ գեղարվեստի պատմությամբ, միտքիս մեջ միշտ վառ մնաց Գարեգին Վեհափառի դասախոսության հիշատակը»[58]։

Եվ իսկապես մեծ է եղել թիվը նրա ունկընդիրների, որոնք հաղորդակից լինելով նրա շնչին, ուխտեցին ծառայել հայ մշակույթին, որքան էլ փշոտ լիներ այդ ճանապարհը հայ գաղութների դժվարին պայմաններում։

Գարեգին Կաթողիկոսը օրինակ բերելով իր անձը, հաճախ ասում էր. ... «Ոչ մի ատեն կամեցել եմ դիրքի ու պատվի ետևից լինել, էդ բաներից միշտ հեռու եմ մնացել։ Ինձ համար իսկական մեծությունը՝ դիրք, պատիվ, համբավ, փող չի. դրանք անցավոր բաներ են։ Իսկական մեծությունը մարդու հոգու մեջ է, Ազգին ու Եկեղեցուն նվիրման ու ծառայության մեջ։ Թե իսկ մարդիկ չգնահատեն, և անիրավ տեղում հայածվես ու չարչարվես, և դիցուք մեռնես»[59]։

Հայ մշակույթի հանդեպ նրա ստեղծած մեծ ոգևորությունը երկար տևեց ու շարունակում է դեռևս տալ բոլոր այն ուխտյալների սրտերում, որոնք ճշմարտապես հաղորդակից եղան մեծ գիտնականի թողած անկորնչելի պատգամներին։

Գարեգին Կաթողիկոսը դեռևս իր վարդապետական տարիներից էր սկսել ուսումնասիրել հայ մանրանկարչությունը, ցավ հայտնելով, որ ոչ ոք ուշադրություն չի դարձնում այդ արվեստի վրա։ Դարձյալ էջմիածնի մատենադարանում է, որ նա կատարում է այս ուղղությամբ ևս իր առաջին հետազոտությունները և հարուստ նյութեր է կուտակում իր ծրագրած գործերի համար։

---

56 Գարեգին Ա Կաթողիկոս. «Դեպի լույս և կյանք», էջ 294։

57 Նույն տեղում։

58 «Հասկ», 1953, էջ 497։

59 Դերենիկ եպիսկոպոս, «Հուշեր Գարեգին Կաթողիկոսեն», օրագրի էջերս, էջ 21։

Այս ասպարեզում էլ չէին պակասում Մաղաքիա արքեպիսկոպոս Օրմանյանի կարևոր ցուցմունքները և ոգևորիչ խոսքերը ուղղված դեպի իր նախկին աշակերտը, հայ մանրանկարչության ասպարեզում խորանալու նպատակով արտասահմանյան մատենադարաններում լինելու մասին։ 1911 թվականի մայիսի 22-ին Գերայից Գարեգին վարդապետին իր դրած նամակում Օրմանյանը ի միջի այլոց գրում էր. «...Հայկական մանրանկարչության արվեստի մասին աշխատությունդ լրացնելու համար, գլխավոր մատենադարանները տեսնելդ անհրաժեշտ է, այստեղ ալ Ազգայինեն զատ Անտոնյանց մոտ ալ լավ նմուշներ կան»[60]։

Դեռևս 1902 թվականին Գարեգին վարդապետ Հովսեփյանցը հրատարակել էր հայ մանրանկարչության նվիրված իր առաջին ուսումնասիրությունը՝ «Մանրանկարչության արվեստը հայոց մեջ (Լևոն Գ-ի պատկերի առթիվ)» վերնագրով։ Նա այդտեղ գտնում էր, որ անհրաժեշտ է զբաղվել հայ մանրանկարչության արվեստի հարցերով, մի բան, որ մինչ այդ համարյա մոռացության մատնված է եղել։ Ուսումնասիրողը նշելով այն մասին, որ Ստրշիկովսկու կարծիքով Հայաստանում մինչև ԺԱ դարը մանրանկարչության արվեստը զարգացած չի եղել, ինք չնայած, որ այդ ուղղությամբ առաջին քայլն էր անում, սակայն հիմնվելով Իր արդեն իսկ կուտակած մեծ պաշարի վրա, իրավացիորեն հակադրվում էր ավստրիացի հեղինակավոր գիտնականին, գրելով, որ «Դժվար է առանց այլևայլության համակերպվել այս կարծյաց հետ»[61]։ Եվ կամ՝ «Ժ դարից մնացած մի երկու ձեռագրի կոպիտ մանրանկարչությունը մեզ համար համոզեցուցիչ ապացույց չէ, որ մինչև այս ժամանակ Հայաստանում այդ արվեստը չի ծաղկել»[62]։ Դարձյալ Գարեգին վարդապետ Հովսեփյանն է, որ հետագա Իր մի այլ ուսումնասիրության մեջ, խոսելով հայ արվեստի ծաղման և զարգացման հարցերի մասին, կրկին համակարծիք չէր Ստրշիկովսկուն, որ եզրակացրել էր, որ էջմիածնի կամ Փղոսկրյա կոչված Ավետարանի վերջից կարված մանրանկարները ասորական ծագում ունեն։ Խիստ ուշագրավ էին հիշյալ հարցի շուրջ Նարդերած միանգամայն համոզիչ եղող հետևյալ փաստարկումները. «Մեր ասածի ապացույց կարող են լինել նույն Ավետարանի (իմա՝ Փղոսկրյա կամ էջմիածնի Ավետարանի— Ս. Ք.) սկզբի խորանազարդերը և պատկերները, որոնց համար Ստրշիկովսկին դարձյալ նույն կարծիքն է հայտնել, բայց նոքա կրկնած են նաև Երուսաղեմի երկու ուրիշ ձեռագիրների մեջ, իսկ մոդերի երկրպագությունը՝ Փղոսկրյա Ավետարանի ընդարում։ Խորանների մեջ դրված հայերենը և մոդերի երկրպագության տարբեր վարիանտը ապացույց [են] հայ արվեստների գործ համարելու։ Ասորականի հետ ունեցած ոճի նմանությունը չպետք է միայն փոխատվությամբ բացատրել, այլ նույն կուլտուրայի նմանությամբ, եվրոպական արվեստների մեջ եղած նմանության օրինակով»[63]։

Իր խորագնին ուսումնասիրությունների միջոցով քննելով հայ մանրանկարչության ակունքների հետ կապված հարցերը, Նա գտնում էր, որ «Ժ—ԺԱ դարերի Ավետարաններից շատերի մեջ պահված են մանրանկարչության հին ավանդներ, մինչև Զ դարի ճարտարապետական զարդարանքների աղերսով»[64]։ Իբրև նաև համաշխարհային արվեստների գիտակ, Գարեգին Կաթողիկոսն Իր աշխատությունների մեջ կանգ էր առել բյուզանդական, ասորական, դպտական, եգիպտական, վրացական, սելջուկյան և այլ ժողովուրդների արվեստների և հայկականի հետ նրանց ունեցած փոխհարաբերությունների վրա։

Նա «մանրանկարչության արվեստի և հայ գրչության ծաղման ոսկեդար» է համարում ԺԲ դարի վերջից մինչև ԺԴ դարի սկիզբը։ Այդ շրջանում Կիլիկիայում ծաղկում է «մի այնպիսի գրչության արվեստ, որ մրցել կարող էր ժամանակակից բոլոր ազգերի նույն կարգի արվեստների հետ»։ Սակայն մեծանուն ուսումնասիրողը նշմարում է, որ Կիլիկիան մենակ չէ այս դարաշրջանի մեջ. «Կիլիկիայի վանքերից սկսած շարժումը,— գրում է հեղինակը,— անցնում է մինչև Հայաստան՝ Երզնկայից մինչև Տաթև, ուր ոչ պակաս կատարելությամբ ձեռագրեր կան գրված»[65]։

1910 թվականին Գարեգին վարդապետ Հովսեփյանցը հայ մանրանկարչությանը նվիրում է մի այլ հոդված, որտեղ ուսումնասիրության է ենթարկում 1066 թվականին Սեբաստիայում գրված և ապա Ներսես Շնորհալու սեփականությունը դարձած և վերջինիս

---

60 Հայկական ՍՍՌ Մեսրոպ Մաշտոցի անվան Գեղական Մատենադարանի դիվան, թղթասյանակ Գարեգին արքեպիսկոպոս Հովսեփյանի, № 95, վավերագիր № 334։

61 Գարեգին վարդապետ Հովսեփյան, «Մանրանկարչության արվեստը հայոց մեջ», Թիֆլիս, 1902 (հրատարակություն «Լումա» հանդեսի), էջ 3։

62 Նույն տեղում։

63 Գարեգին Կաթողիկոս, «Հայ արվեստի ծագումն ու ոսկեդարը», «Հասկ», 1954, էջ 39։

64 Գարեգին Կաթողիկոս, «Դեպի լույս և կյանք», էջ 294։

65 Գարեգին վարդապետ Հովսեփյան, «Մանրանկարչության արվեստը հայոց մեջ», էջ 2—4։

կողմից իր եղբորորդի Գրիգոր Ապիրատին նվիրված ձեռագիրը։ Նա մանրամասն քննության է ենթարկում ձեռագրի մանրանկարների արժեքը, խոր համեմատության ենթարկում հնագույն ժողովուրդների արվեստների հետ և նշում հիշյալ ձեռագրի մանրանկարների յուրահատկությունները[65]։

Գարեգին Ա Կաթողիկոսի գիտական բազմաթիվ ուղևորությունները անսպառ նյութ ընձեռեցին Իրեն՝ առաջին անգամ ուրվագծելու համար հայ մանրանկարչական արվեստի ընդհանուր պատմությունը։ Նա բազմաթիվ հայ նշանավոր նկարիչների օգնությամբ պատրաստել էր տվել հայ մանրանկարչության գլուխ-գործոցների գունավոր պատճենահանումները։ Այս առումով մեծապես սատարել է հատկապես նկարիչ Եղիշե Թագեոսյանը, որն ընկերացել էր Իրեն, նույնպես հայ նկարիչներ Վարդգես Սուրենյանը, Ֆեռվաճյանը և ուրիշներ։

Նրա գլուխ-գործոցն էր լինելու «Քարտեզ հայ մանրանկարչության» երկը, որը եզակի էր լինելու իր տեսակի մեջ։ Սակայն դժբախտաբար ինչ-ինչ պատճառներով այդ գործը ևս մնաց անտիպ վիճակում։ 1914 թվականի սկզբին էր, որ Գարեգին վարդապետ Հովսեփյանցը էջմիածնից մեկնում է Թիֆլիս, այնտեղից Եվրոպա ուղևորվելու համար, բայց Իր հետ ունեցած արկղը, որի մեջ էր գտնվում նաև հայ մանրանկարչության պատմության նվիրված Իր մեծարժեք գործը, մոռանում է կայարանում, սակայն բարեբախտաբար երկաթուղու հայ պաշտոնյաները գտնում և Իրեն են հանձնում այն[67]։ Իր հիշյալ գործի կորուստը և գնտվելը մեծ տրխրություն և ուրախություն են պատճառում նույնիսկ հեռավոր վայրերում ապրող և մեծ գիտնականին ճանաչող մարդկանց։ Այսպես, 1914 թվականի փետրվարի 14-ին Ուրմիայից Խորեն վարդապետ Լազարյանը Գարեգին վարդապետ Հովսեփյանցին գրում էր. «Ձեմ կարող անտարբեր մնալ Պարսկաստանի՝ Ուրմիո այս խուլ և խավար անկյունից չարտահայտել և՛ իմ տրտմությունը և՛ ուրախությունը՝ Ձեր կորուստի և գյուտի մասին։ Սածուկ չէ և ինձ համար, թե Դուք այդ Ձեր ընտրած մասնաճյուղին՝ որչա՞փ զոհողությունները, զրկանքները, նյութական նեղությունները և ֆիզիկական տանջանքներ կրած եք, միմիայն Ազգին ծառայություն մատուցանելու և մեր նախնիքների փառք ու պարծանքի արժանի գեղեցիկ արվեստն ի լույս ընծայելու...»[68]։

Մաղաքիա արքեպիսկոպոս Օրմանյանն ևս իր անսահման ուրախությունն էր հայտնում իր գրած նամակում Գարեգին վարդապետ Հովսեփյանցին և կորած աշխատության գյուտի մասին իր ոգևորիչ խոսքն էր արտահայտում. «Այժմ այլևս հաղթական շրջանը կրնաս կատարել և հաջողության տարիներ բարդել բազմավաստակ գլխուդ»[69]։

Նույն չարաբաստիկ 1914 թվականին Գարեգին վարդապետ Հովսեփյանցը մեկնում է Բեռլին՝ հայ մանրանկարչության նվիրված Իր գործերը հրատարակելու նպատակով։ Նա Իր մեկենաս Պ. Ղուկասյանին գրում էր. «Ես նորից Բեռլին գնացի Լայպցիգից և Ալբերտ Ֆրիշ նշանավոր ֆիրմայի հետ պայման կապեցի մեր գործի տպագրության համար... Տպարանը պետք է 18 ամսվա ընթացքում պատկերների մասը տպագրեր...»[70]։ Սակայն շուտով համաշխարհային պատերազմն էր պայթել և Ինք Փոքր Ասիայում կատարած գիտական ուղևորությունից մեծ դժվարությամբ հազիվ կարողացել էր ձեռնունայն վերադառնալ Հայրենիք։ Գարեգին վարդապետ Հովսեփյանցն այս կապակցությամբ իր մեկենասին հայտնում էր նաև հետևյալը. «Աշխատանքս էլ մնացել է Բեռլինում, 5 000 մարկ էլ նախավճար եմ տվել ըստ պայմանագրի, այսուհետև տեղեկություն չունիմ, բայց հույս ունիմ, թե պատերազմից հետո՝ գործը դարձյալ կանոնավոր կշարունակվի, թեև մի քիչ ուշ կվերջանա, քան պայմանով որոշված է...»[71]։

Եվ այսպես անցան տարիները, սակայն այդ գործը մնաց անտիպ...։

Գարեգին Ա Կաթողիկոսը 1947 թվականի դեկտեմբերի 21-ին գրած Իր նամակում հայտնում էր այն մասին, որ Բեռլինում մնացած ձեռագիրը «տարիներ հետո հազիվ կարողացա հետ ստանալ, ձեռք վերցնելով իմ 5 000 մարկից։ Ապա հանձն առավ [այն] տպագրել Նյութական կուլտուրայի Ակադեմիան (իմա՛ Լենինգրադում— Ս. Ք.)։ Այն ժամանակ էլ արտասահման ելա իբրև նվիրակ։ Ապա հարկ եղավ մնալ Ամերիկա-

---

66 Գարեգին վարդապետ Հովսեփյան, «Նախնյաց հիշատակներս», «Արարատ», 1910, էջ 77—87, 245—260։

67 «Տարազ», Թիֆլիս, 1914, № 2, էջ 37։

68 Հայկական ՍՍՌ Մեսրոպ Մաշտոցի անվան Պետական Մատենադարանի դիվան, Թղթապանակ Գարեգին արքեպիսկոպոս Հովսեփյանի, № 95, վավերագիր № 404։

69 Նույն տեղում, Թղթապանակ № 96, վավերագիր № 1509։

70 Նույն տեղում, Թղթապանակ № 96, վավերագիր № 427։

71 Նույն տեղում։

յում մինչև կաթողիկոսության կոչվելը...»[72]։

Գարեգին Կաթողիկոսի այս կոթողական գործը այնպես էլ չտպագրվեց, հակառակ, որ հեղինակը այն տպագրելու համար ապրեց իր անկարագրելի ոգիսականը։ Մեծանուն հեղինակն իր կյանքի վերջալույսին գրում էր. «Այս քարտեզը յուր մեծ պատմությունն ունի, որ կարելի կլինի հրատարակել, դարձյալ մեր կյանքի, ապրումների և տառապանքի հետ կապված դրվագներ...»[73]։

Սակայն աննկուն գիտնականը, որ հանդրստանալու մասին գաղափար իսկ չուներ և մյուս կողմից էլ իր ձեռք բերած պաշարով բնավ իսկ բավարարվողը չէր, տարիներ շարունակ ամեն տեղ որոնեց նորանոր ձեռագրեր և անհամար նոր նյութերով ճոխացրեց Իր արդեն իսկ նշանավոր համարված աշխատությունը։

Ինչպիսի՞ մեծ ոգևորությամբ և անսահման ջանասիրությամբ էր նա աշխատում Իր այս գործի վրա։ Գարեգին Ա Կաթողիկոսի գիտական գործունեության և նրա մաքրամաքուր նկարագրի վրա մեծապես հիացողներից մեկը,— և արդյո՞ք կար մեկը, որ չհիանար նրա վրա,— Վիեննայի Մխիթարյան բազմավաստակ բանասեր Հ. Ն. Ակինյանը, որ 1912 թվականին էր ճանաչել Գարեգին վարդապետ Հովսեփյանցին, իսկ 1925—1928 տարիներին աշխատել էր միասին Էջմիածնի Մատենադարանում, հետևյալ ձևով է խոսում իր հուշերում մեծ գիտնականի աշխատանքային եղանակի մասին.

«...Այս միջոցին կտարածվին սեղանի վրա թղթեր, լուսանկարներ. անոնք պիտի համեմատվին ձեռագիրներու հետ, պիտի ճշտվին թղթահամարները, մյուս անդամ պիտի նկարագրվին և չափագրվին մանրանկարները, պիտի բաղդատվին համացեղ նկարներու հետ...։

Սրբազանը յուր բովանդակ էությամբ նվիրված է հայ մանրանկարչության պատմության։ Կդասավորե հավաքած նյութերը, կճոխացնե դանոնք նոր տվյալներով, երևան կհանե նոր մանրանկարիչներ, ծաղկողներ, կնույնացնե, կպարզե անոնց անձնավորությունները, կհամադրե նկարչական արտադրությունները, կուսումնասիրե արվեստը, կհետազոտե արվեստին ծագումը, ազդեցությունները, ներշնչումները»։

Հիացնում է մանավանդ աննկուն գիտնականի ձեռագրերի վրա կատարած աշխատանքը. «Ձեռք կառնե մեկը, խորախորհուրդ կբսրձրացնե վեր, կպատչաճեցնե լույսին, կզննե, կքննե, կդատե... կդիմե խոշորացույցի՝ մանր գծիկներն անգամ պարզելու, լուսավորելու, ըմբռնելու։ Վրձինի մեն-մի շարժում կհետաքրքրե զինքը։

Սքանչանք, հիացմունք կկարդացվին յուր աչքերու մեջ. կզվարթանա գեմքը։ բացականչություններ կլսվին Իր բերնեն։ Անպայման նոր գյուտի մը, հաջող մանրանկարի մ՚առաջին է Սրբազանը։ Եվ ահա բարձած բազուկներու վրա մեծափոր հատոր մը՝ ինչպես մի մայր գորովագութ յուր աղեզավակը թևերու վրա օրորելով՝ կուգա կմոտենա ինձ, զիս ալ ոգևորելու, հափշտակելու, հազորդակից ընելու Իր հիացմունքինու։ Հ. Ն. Ակինյանը իր հիացմունքն է կիսում Գարեգին եպիսկոպոս Հովսեփյանցի հետ։ Եվ Ակինյանը շարունակում է իր հուշերը.

«Ու պետք է տեսնել զվարթ հոսանքը զգացումներու Իր աչքերու մեջ... Կթողնե զիս Սրբազանը և կփութա արձանագրել տպավորությունները։ Ժամերով կապրի նա այս տպավորություններու տակ. ուրախ է օրը, երբ նա նոր գյուտերու, նոր տեսություններու հասած է»։

Իր աշխատասենյակում նույնն է Գարեգին եպիսկոպոս Հովսեփյանցը. նա ամբողջովին կլանված է Իր աշխատանքներով։ Մեծ է նրա ձեռք բերած ատաղձը, որի վրա կառուցում է Իր հոյակապ գործը։ Դարձյալ Հ. Ն. Ակինյանը գրում է. «...Անոնք մասնագիտական գործեր են. մեծավ մասամբ գեղարվեստի պատմության վերաբերյալ. անոնց շարքին մեջ են շեղջ-շեղջ կապոցներ, տուփեր— ասոնք Սրբազանին ձեռագիր, անտիպ աշխատանքներն են և հարյուրավոր լուսանկարներ։ Տարներեն մի քանին կկրեն վերտառություն. Նյութեր հայ մանրանկարչության վերաբերյալ»։

Նկարագրելուց հետո այնտեղ հավաքված անսպառ նյութերը, Հ. Ն. Ակինյանը գրում է, որ «Այս ատաղձները ըստ մեծի մասին մշակված են արդեն և դասավորված ըստ շրջանների, բաղդատությամբ համացեղ նյութերու և գրականությամբ։ Ոչ միայն Հայ Աշխարհի պատկերա-զարդաքանդակներն և ձեռագրական մանրանկարչությունն կողքկողքի համեմատության առնված են, այլև հայ ժողովուրդի արդի տարազները ցուցադրված են հոն, միագույն և բազմագույն։ Բանասեր Հ. Ն. Ակինյանը հիշյալ հոդվածում կոչ էր ուղղում բովանդակ հայության, որպեսզի հնարավորություն ստեղծվի մեծանուն գիտնականի գործերը տպագրելու համար, քանի որ, ըստ հոդվածագրի դիպուկ արտահայտության, «նախնյաց փառքը՝ հայտնա-

72 Հ. Ոլական, «Արևելահայ բանասիրությունը և Էջմիածին. Գարեգին Կաթողիկոս Հովսեփյան», 1948, Անթիլիաս, էջ 74։

73 Նույն տեղում։

ԼԵՎՈՆ Գ-Ի ԸՆՑԱՆԻՔԸ

րերված Գարեգին Սրբազանի ջանքերով, պարծանքն է նայ անվանը[74]։

Նոր ուժերի նկատմամբ միշտ քաջալերող և ոգևորող, սակայն Իր գործերի նկատմամբ չափազանց խստապահանջ եղող գիտնականը տարիներ շարունակ կուտակեց Իր նյութերը Իր նշանավոր գործը անթերի դարձնելու մտադրությամբ։ Հայ մանրանկարչական դպրոցների և առանձին հայ մանրանկարիչների ստեղծագործություններին նա նվիրեց հմտալից ուսումնասիրություններ և ավելի ճոխացրեց Իր իսկ հիմնադրած հայ մանրանկարչության ուսումնասիրության գործը։

Գարեգին Ա Կաթողիկոսի հայ մանրանկարչության նվիրած հոյակապ աշխատության բովանդակության իմացության մասին խիստ ուշագրավ է Նրա «Համառոտ զեկուցում հայ մանրանկարչության նվիրած մեր աշխատանքի մասին» հոդվածը, ուր, բացի երգնկայի մանրանկարչության երկու նմուշների մասին Իր կատարած ուսումնասիրությունից, ծրագրային կարևոր տեղեկություններ է հաղորդում ընդհանրապես Իր պատրաստած հայ մանրանկարչության պատմության գործի մասին։ Հեղինակը հիշյալ հոդվածում նշում է, որ Ինք նյութեր է հավաքել ԺԴ—ԺԷ դարերի վերաբերյալ, մեծ թվով գունավոր և սև լուսանկարներ է կուտակել զանազան դպրոցների, նշանավոր վարպետների մասին, և որ այդ մանրանկարներից մի մասը ոչ միայն արվեստի տեսակետից կարևոր նշանակություն ունեն, այլև պատմական-ազգագրական արժեք ունեն, քանի որ բազմաթիվ երևելի հայ մարդկանց դիմանկարներն էլ են պատկերում։ Նա հայտնում է նաև այն մասին, որ մանրանկարչության նվիրված հիմնական Իր գործը բաղկանալու էր հետևյալ երեք մասերից՝

ա. Հայ մանրանկարչությունը Մեծ Հայքում, մինչև Բագրատունյաց անկումը, և նորա հետևանքով՝ մինչև ԺԲ դարի կեսերը։ Այդ մասում շոշափել ենք և ավելի հին շրջանը, հետագայի արտանկարներից դատելով։

բ. Կիլիկյան շրջանը, որ հայ գրչության և մանրանկարչության ոսկեդարն է, հին ավանդների պահպանությամբ, և քաղաքական-տնտեսական նոր պայմանների հետևանքով նոր տարրերի յուրացմամբ։

գ. ԺԳ դարի վերածնունդը բուն Հայաստանում, հին ավանդների պահպանությամբ և կիլիկյան արվեստի յուրացմամբ։ Սորա երկրորդ մասում տրված են ԺԷ դարի վերածնունդի փորձերը և եվրոպական ազդեցության թափանցումը Ս. Գրքի նկարազարդության մեջ[75]։

Ինչպես գրում է ներհուն հեղինակը, «այս մեծածավալ գործը վերջնական և ամբողջական լրացման հասցնելուց առաջ, կատարել ենք և կատարում ենք մենագրական ուսումնասիրություններ այս կամ այն դպրոցի կամ անհատ արվեստագետների մասին, որոնցից մի քանիսն արդեն հրատարակված են»[76]։

Գարեգին Կաթողիկոսի հրատարակած մենագրական ուսումնասիրություններն ընդգրկում են հայ մանրանկարչության զարգացման գրեթե բոլոր գլխավոր դարաշրջանները և ամենակարևոր դպրոցները։ Սկսած Հաղբատի (տե՛ս հեղինակի «Հաղբատի դպրոցի մի գլուխ-գործոց (Գետաշենի Ավետարանը)»[77], «Մի ձեռագիր Ավետարան (սեփականություն Ռաֆայել Սթոռայի, այժմ Չիկագոյի համալսարանի մատենադարանում)»[78], Անի-Հոռոմոսի («Հիգնատիոս ման-

[74] Հ. Ն. Ակինյան, «Գարեգին արքեպիսկոպոս Հովսեփյան, հուշերս», «Մաթեն», տարեկիրք գրականության և արվեստի, Զ տարի, 1930, Հալեպ, էջ 374—382։

[75] «Անի», ամսագիր գրականության և արվեստի, Բեյրութ, 1948, № 12, VII, էջ 618։

[76] Նույն տեղում, էջ 620։

[77] «Նյութեր և ուսումնասիրություններ...», պրակ Ա, էջ 41—75։

[78] Նույնը, պրակ Բ, էջ 45—69։

ղանկարիչ և Շոթոռկանց տոհմը»[79], «Դարձյալ Իգնատիոս Հոռոմոսցի մանրանկարչի մասին»[80] մանրանկարչական դպրոցներից մինչև Կիլիկիայի հանճարեղ մանրանկարիչների գործերի ուսումնասիրումը («Կոստանդին Ա Կաթողիկոս որպես հայ մանրանկարչության մեծ հովանավոր»[81], Հեթում Ա-ի նկարազարդ Ավետարանի մնացորդները»[82], «Ստեփանոս Վահկացի»[83], «Մի կարևոր ձեռագիր Նյու-Յորքի Հանրային մատենադարանում»[84], Երզնկայի դպրոցից («Համառոտ զեկուցում հայ մանրանկարչության նվիրված մեր աշխատանքի մասին»[85], «Երզնկայի մանրանկարչական դպրոցը» (որ հեղինակի կենդանության օրոք տպագրության էր հանձնված), մինչև Սյունիքի մեծատաղանդ մանրանկարիչները («Խաղբակյանք կամ Պռոշյանք հայոց պատմության մեջ», հատոր Բ, «Մոմիկ նկարիչ և քանդակագործ»)[86], հասնելով Վանա լճի մոտ ծաղկող Խիզանի դպրոցը («Մի էջ Խիզանի գեղարվեստական պատմությունից»)[87] և այլ բազմաթիվ մենագրությունների մեջ կյանք են ստացել և մոռացության փոշիներից հառնել բազմաթիվ հայ նշանավոր նկարիչներ, հայ մանրանկարչության հովանավորողներ և պատվիրատուներ։

Ավելացնենք նաև այն, որ մեծանուն հեղինակի մանրանկարչության նվիրված գործերը միայն գիտական մեծ պաշարով և խոր հմտությամբ գրված երկեր չեն, այլև հայրենասիրական լերմ զգացումներ դաստիարակող ներշնչարաններ են հանդիսանում, Գարեգին Կաթողիկոսի նման տիպի գործերը կարդալիս դժվար չի լինում հասկանալ, որ նրա համար հայ մանրանկարչությունը, հայ ճարտարապետության հետ միասին, ազգային մեծ արժեք լինելուց բացի, հանդիսանում են նաև մեր ժողովրդի համար մի սքանչելի անձնագիր՝ համաշխարհային մշակույթի տաճարից ներս մտնելու և այնտեղ կարևոր դիրք գրավելու համար։ Հայ մանրանկարչությունը ճարտարապետության հետ, ըստ մեծանուն գիտնականի հեղինակավոր կարծիքի, հանդիսանում է նաև «Առաջավոր Ասիայի քաղաքակիրթ ազգերի, նաև որոշ չափով Եվրոպական ազգերի նման արվեստների փոխազդեցության և հասկացողության մի կարևոր նպաստ»[88]։

Մեծանուն գիտնականը, հակառակ իր առաջացած տարիներին, անսպառ եռանդով շարունակում է նորանոր հետազոտություններով ճոխացնել հայ մանրանկարչության պատմության նվիրված իր եզակի գործը։ Օրօրի հազարավոր թղթի կտորների վրա նա սովորություն ուներ թողնել իր նորանոր նկատողությունները, լրացուցիչ ծանոթագրությունները և իր բեղուն միտքը հազարավոր թելերով միշտ կապված էր մնում իր անտիպ գործերի հետ։ Ի՞նչ փույթ, թե նա վաթսուն տարի ոգի ի բռին աշխատել, տքնել և նույնացել էր իր թանկագին գիտական աշխատությունների հետ, հասարակական, եկեղեցական ծանր գործերը մինչև վերջ չէին կարողացել խանգարել նրա ստեղծագործելու թափը։ Շարունակ որոնում և ուսումնասիրում էր հայերեն ձեռագրերի մագաղաթյա խունացած էջերը, նոր գյուտեր, նոր լրացումներ էր անում և այդ բոլոր թանկագին նկատողությունները նպատակ ուներ հաշվի առնել և միայն այդ բոլորից հետո տպագրության հանձնել հայագիտության կողմից այնքան սպասված իր կոթողական գործը։

Սակայն ավա՜ղ, Վեհը մի օր զարնվեց իր Սրտից և այլևս ընկավ անկողնում... Բժիշկները խստիվ արգելել էին նրան գիտական աշխատանքով զբաղվելը։ Իսկ ի՞նչպես ապրել, չէ՞ որ Իր սիրելի գործերը Իր կյանքի իմաստն էին հանդիսանում։

Նրան խնամող հիվանդապահուհու օրագրում գրի առնված տողերից երևում է, որ 1951 թվականի գարնանը, երբ Նա մի քիչ կազդուրված էր, շատ էր սիրում գնալ իր աշխատասենյակը, որի չորս պատերը գրքերով ծածկված էին, իսկ Իր սեղանը լեփ-լեցուն էր իր ձեռագրերով, որոնցից բաժանված մնայր Նրա մեծագույն տառապանքն էր։ Նա հաճախ նստում էր Իր բազկաթոռին և ժամեր շարունակ դիտում էր Իր գրքերն ու մանավանդ Իր ձեռագրերի կույտերը։ Երբ իրեն խնամողը հարցնում էր, թե հոգնեցա՞ք, Վեհափառ Տեր, նա պատասխանում էր.

— Ի՞նչ եմ անում, դիտում եմ միայն։ Ես՝ հեղինակս՝ ձգել եմ իմ այսքան գործերը, և դատարկ նստել։ Ջե՞մ հասկանում...»[89]։

Եվ այսպես էլ նա մի օր հանգավ, առանց տեսնելու հայ մանրանկարչության պատմու-

---

79 «Նյութեր և ուսումնասիրություններ...», պրակ Ա, էջ 15—40։

80 Նույնը, պրակ Բ, էջ 60—66։

81 Նույնը, պրակ Բ, էջ 5—44։

82 «Պայքար», նոր տարվա թացառիկ, 1949, էջ 7—11։

83 «Հասկ հայագիտական տարեգիրք», Բ, 1949/1950, էջ 58—64։

84 «Նոր գիր», Նյու-Յորք, 1944, Ա, էջ 6—24։

85 «Անի», ամսագիր, 1948, № 12, VII, էջ 618—623։

86 «Նայիրի», 1947, № 4—5։

87 «Հայաստանյայց Եկեղեցի», 1944, № 1, ժ, էջ 7—27։

88 Գարեգին Կաթողիկոս, «Դեպի լույս և կյանք», էջ 241։

89 «Հասկ», 1952, էջ 415։

թյան նվիրված, ինչպես նաև մյուս կոթողական գործերի հրատարակությունը։ Սակայն առանց իսկ դեռևս հրատարակված լինելու, Գարեգին Կաթողիկոսի այդ հոյակապ գործը, դատելով միայն նրա թողած տպագիր գործերից, նա դարձյալ արդար կերպով վաստակեց հայ մանրանկարչության ուսումնասիրության հիմնադիրը անվանվելու մեծ պատիվը։

Մեծանուն հայագետ, ակադեմիկոս Ստեփանոս Մալխասյանցը, Գարեգին Ա Կաթողիկոսի ծննդյան 80-ամյա հոբելյանի առիթով հրատարակած իր հոդվածում իրավացիորեն գրեց հետևյալը. «... Տ. Գարեգինը ոչ միայն միակ և ամենահմուտ մասնագետն է եղել հայ մանրանկարչության, այլև նրա անվիճելի հիմնադիրն է...»[90]։

Վերջինիս նույնահնչյուն է նաև հայ մանրանկարչության և բյուզանդագիտության հարցերի անվանի մասնագետ օրիորդ Սիրարփի Տեր Ներսեսյանի հեղինակավոր կարծիքը, ըստ որի Գարեգին Կաթողիկոսը «հիմքերը դրավ հայկական մանրանկարչության ուսումնասիրության և ճամբան լուսավորեց ապագայի գիտնականներուն»[91]։

Անվանի գիտնականը ո՞վ գիտի ինչքան պիտի ոգևորվեր եթե իմանար, որ հայ մանրանկարչության իր լուսավորած ուղիներով այսօր շնորհակալ գործ են կատարում ոչ միայն արտասահմանում, այլև մասնավորապես Իր այնքան սիրելի Հայրենիքում, ուր, հարազատ պետության ընձեռած միջոցների շնորհիվ և Հայկական ՍՍՌ արվեստի վաստակավոր գործիչ Լ. Ա. Դուռնովոյի գլխավորությամբ, ոչ միայն մեծածախս ալբոմներ և մենագրություններ են լույս տեսնում՝ նվիրված հայ մանրանկարչության, այլև նորանոր ուժեր են պատրաստվում այդ դժվարին ասպարեզին նվիրվելու համար։

Դեռևս լույս չի տեսել Գարեգին Ա Կաթողիկոսի հայ մանրանկարչության պատմության հանրագումարը, սակայն նա մնում է այդ ասպարեզի խիղճ հիմնադիրն ու անդուգական ոգևորողը։

***

Գրչության արվեստը բազմապիսի աշխատանքների և տարբեր անձնավորությունների գործակցության շնորհիվ է զարգացել։ Այնտեղ իրենց մասնակցությունն են բերել ոչ միայն գրիչն ու մանրանկարիչը, այլև թուղթ ու մագաղաթ կամ թանաք ու ներկեր պատրաստողները, ինչպես նաև կազմարարները և ոսկերիչները։ Այստեղից էլ պարզ է, որ Գարեգին Կաթողիկոսը, իբրև հայ ձեռագրագիտության բազմահմուտ գիտնական, իր ուշադրությունը պիտի կենտրոնացներ նաև միջնադարյան մեր ձեռագրերի կազմարարական արվեստի վրա։

1930 թվականին Հալեպում լույս տեսնող «Տաթև» տարեգրքում և ապա առանձին գրքույկով, իբրև մատենաշար «Տաթև»-ի, թիվ 1, լույս տեսավ Գարեգին Հովսեփյանցի «Մի էջ հայ արվեստի և մշակույթի պատմությունից» գործը[92], որը և առաջին ուսումնասիրությունը հանդիսացավ հայ կազմարարական արվեստին նվիրված։ Իբրև մեծ մասամբ անկոխ գետինների ուսումնասիրող բազմահմուտ հեղինակի այս գործը ևս ուշագրավ երևույթ հանդիսացավ։ Վկայակոչելով Զ դարի վերջի և Է դարի սկզբի մատենագիր Վրթանես Քերթողի «Ցաղագս պատկերամարտից» գրվածքը, ուր նա նկարագրել է, թե ձեռագիր Ավետարանները իր ժամանակ կազմվում էին ոչ միայն ոսկով և արծաթով, այլև փղոսկրով և կարմիր կաշիով, ուսումնասիրողը նշում է, որ միջնադարում դեռևս հին ժամանակներից Հայաստանում մեծ զարգացման էր հասել կազմարարական արվեստը. նա ընթացել է երկու ուղղությամբ՝ իբրև պահպանության և իբրև արվեստի միջոց։ Միանգամայն, անհրաժեշտ համարելով արվեստի այս ճյուղի հատուկ ուսումնասիրումը, նա գրում էր հետևյալը. «Մեր մանր արվեստի ոչ մի ճյուղը այնքան մնացորդներ չէ պահել, որչափ ձեռագիրների կազմը՝ քանդակագործության (մետաղների վերա), պատկերագրության և օրնամենտի, ինչպես և մշակույթի ուրիշ ճյուղերի նկատմամբ»[93]։ Այս գործում հեղինակը ուսումնասիրել է էջմիածնում (այժմ Մեսրոպ Մաշտոցի անվան Երևանի Պետական Մատենադարան), Երուսաղեմում, Սեբաստիայի Ս. Նշանում, այդ ժամանակ Նոր-Նախիջևանի Ս. Լուսավորիչ եկեղեցում պահվող միջնադարյան մի շարք կարևոր կազմեր։ Նման տիպի ուշագրավ ուսումնասիրություն է նաև նրա «Հարձրբերդի Ավետարանի ոսկերչական կազմը (սեփականություն Կիլիկիո Կաթողիկոսական Աթոռին)» հոդվածը[94]։ Հայկական ձեռագրերի կազմերին վերաբերող բազմաթիվ կարևոր և ուսանելի նկատողություններ կան ցանցնված նաև Գարե-

[90] Ս. Մալխասյանց, «Տանն Կիլիկիո Վեհափառ Կաթողիկոս Տ. Տ. Գարեգին Ա-ի ծննդյան 80-ամյա հոբելյանը», «Էջմիածին», 1947, № 1—2, էջ 20։

[91] «Հասկ», 1958, № 7—9, էջ 274։

[92] Գարեգին արքեպիսկոպոս Հովսեփյան, «Մի էջ հայ արվեստի և մշակույթի պատմությունից», 1930 թ., 56 էջ։

[93] Նույն տեղում, էջ 2։

[94] «Հայքարա», նոր տարվա բացառիկ, 1951, էջ 250—255։

գին Կաթողիկոսի «Քարտեզ հայ հնագրության», «Հիշատակարանք ձեռագրաց» և այլ ձեռագրագիտական գործերում։

Գարեգին նա էր, որ առաջինը իր ուշադրությունը բևեռեց հայ ձեռագրական աշխարհի հետ կապված մի այլ կարևոր հարցի՝ ձեռագրերի ներսում փակցված դիպակների վրա։ Նրա այդ ուսումնասիրությունը վերնագրված է «Սասանյան կերպասի կտոր էջմիածնի թիվ 1759 № ԺԸ ձեռագրի կազմի մեջ»[95]։ Ըստ նրա հմտալից ուսումնասիրության, հիշյալ կերպասի կտորը պատկանում է ԺԲ—ԺԱ դարերի արվեստին և հավանաբար պետք է, որ կապված լինի արաբական Միջագետքի և կամ սիրիական կենտրոնների հետ։ Գարեգին Կաթողիկոսի այս գործը ևս կարևոր նշանակություն կարող է ունենալ դեռևս հայ ձեռագրագիտության մեջ ամենից ավելի քիչ ուշադրության արժանացած դիպակների և զարդագաջ կտորների ուսումնասիրության հարցով զբաղվողների համար։

***

Մի այլ հարց, որ մենք ցանկանում ենք բարձրացնել այս գլխի ներքո, հանդիսանում է այն մղումը, որ Գարեգին Կաթողիկոս Հովսեփյանցը հանդես բերեց մեր ժամանակակից արտադրությունների մեջ հայ մանրանկարչության և հայ արվեստների լավագույն ավանդները օգտագործելու ուղղությամբ։ Նրա կյանքի ուսումնասիրությունը կարող է բերել այն եզրակացության, որ ներհուն գիտնականը, լինելով հանդերձ հայ մանրանկարչության և ընդհանրապես հայ արվեստի մեծանուն ուսումնասիրողը, չէր բավականանում սոսկ նրանց հայտնաբերման և արժեքավորման մեծարժեք գործերով, այլ դրանք համարում էր անսպառ աղբյուր նաև ներկայի իմաստով։ Դեռ շատ վաղ նա հայ մանրանկարչության լավագույն ավանդները ներկայի համար օգտագործելու մեծ սեր ու եռանդ էր ցուցաբերել։ Այսպես, օրինակ, Մատթեոս Բ Կաթողիկոսի առաջին կոնդակը մեծ վարպետությամբ ինքն էր, որ ստեղծեց երբ դեռ վարդապետ էր, համադրելով էջմիածնի մատենադարանի թանկարժեք մի քանի ձեռագրերի չքնաղ մանրանկարներից։ Այստեղ հետաքրքրությունից զուրկ չէ նշելը, որ այդ կոնդակի իրը զարդանկարչություն համադրել էր զարդագրություններ և նկարներ ներսես Լամբրոնացու 1173 թվականին ստացված նարեկից, Թորոս Ռոսլինի դպրոցին պատկանող Արքայական Ճաշոցից և Թորոս Տարոնացու նկարազարդած Նայլ։

Նշեցու Աստվածաշնչից, ինչպես նաև այլ հնագիտական նյութերից[96]։

Նույնպիսի վերաբերմունք է ցույց տվել նա նաև հոգևոր զգեստների վերաբերմամբ։ Գարեգին Կաթողիկոսի,— այն ժամանակ արքեպիսկոպոս և հոգևոր առաջնորդ ամերիկահայ թեմերի,— պատարագի զգեստով հիացան շատերը։ Այն ինքն էր պատրաստել տվել հատուկ խնամքով, ձեռագրերում նկարված զգեստներից համադրելով։

Գարեգին Կաթողիկոսի վերջին իդեան էր տեսնել Անթիլիասի Կաթողիկոսարանը ոչ միայն իբրև հայ մշակույթի նոր մի Գլաձորյան համալսարան, այլև բոլոր հայկական եկեղեցիներից ավելի գեղեցիկ որմանկարներով զարդարված։ Նրա մտասևեռումն էր Տաճարը զարդարել ձեռագրերի զարդանկարչական հրաշալի նմուշներով։

Այստեղից էլ նրա համար հայկական մանրանկարչությունը սոսկ ուսումնասիրության նյութ չէր ճանաչողական իմաստով, այլև մեր առօրյա կիրառական արվեստների համար մի անսպառ աղբյուր։

Բացի մանրանկարչության և զարդարվեստի հնագույն ավանդներից, Վեհի մտասևեռումն է եղել նոր վերածնվող Հայրենիքում ուսումնասիրել հայկական բովանդակ արվեստը իր բոլոր մասնաճյուղերով և ի սպաս դնել նրա լավագույն ավանդները ստեղծվող նոր արվեստի հիմքում։

«Որչա՜փ նյութեր կան,— գրում էր անվանի գիտնականը,— կահ-կարասիքի, անոթների, ասեղնագործության, գորգագործության, կտավեղենների և մետաքսեղենների մշակության համար, որ մինչև այժմ կատարյալ անուշադրության են մատնված մեր կողմից։ Ապրում ենք պետական նոր կյանքով, որ խրախուսում է ազգային մշակույթների պահպանությունն ու զարգացումը. պետք է որոնենք և գտնենք այն ուղիները, որ նոր արվեստի ծագման և ծաղկման հիմունքներն են կազմում»[97]։

Գարեգին Կաթողիկոսի հիշյալ կարևոր ցուցմունքներն այսօր էլ չեն կորցրել իրենց թարմությունը և ուսանելի են մեր կիրառական արվեստով զբաղվող մասնագետների համար։

---

[95] «Հանդես ամսօրյա», 1935, էջ 252—263։

[96] Գարեգին վարդապետ Հովսեփյանց. «Մ. Հայրապետի անդրանիկ կոնդակի զարդանկարչությունը...», «Արարատ», 1910, էջ 158—162։

[97] Գարեգին արքեպիսկոպոս Հովսեփյան. «Մի էջ հայ արվեստի և մշակույթի պատմությունից», էջ 56։

(Շարունակելի)

ՊԱՐԳԵՎ ՎԱՐԴԱՊԵՏ ԳԵՎՈՐԳՅԱՆ

(Հոգևոր ճեմիվ Մոսկվայի նայոց)

ՀՈՎՍԵՓ ԱՐՔԵՊԻՍԿՈՊՈՍ ԱՐՂՈՒԹՅԱՆԻ ԵՐԿՈՒ ՆԱՄԱԿ-ՁԵԿՈՒՅՑԱԳՐԵՐԸ ՈՐՊԵՍ ՀԱՅ ԺՈՂՈՎՐԴԻ ՊԱՏՄՈՒԹՅԱՆ ՍԿԶԲՆԱՂԲՅՈՒՐՆԵՐ

Հովսեփ արքեպիսկոպոս Արղությանը ԺԸ դարի վերջին քառորդի հայ ազատագրական պայքարի պատմության խոշոր դեմքն է, մեկը այն եկեղեցական-քաղաքական գործիչներից, որոնք հայ ժողովրդի բախտն ընդմիշտ կապեցին ռուս մեծ ժողովրդի կյանքի հետ։

Քսան և ավելի տարիներ Արղությանը շարունակեց հայ ազատագրական պայքարի ռահվիրաներ Իսրայել Օրու, Եսայի կաթողիկոսի, Հովսեփ Էմինի և մյուսների հայրենասիրական գործը։

Մեծ և ծավալուն էր Հովսեփ արքեպիսկոպոսի գործունեությունը Ռուսաստանում՝ որպես եկեղեցական և քաղաքական գործչի։ Ռուսաստանում վարած նրա առաջնորդական պաշտոնի մեջ մտնում էին, բացի եկեղեցական գործերից, նաև Ռուսաստան գաղթած հայերի համար քաղաքներ հիմնելը, նրանց մշակույթի և տնտեսական առաջադիմության համար դպրոցներ և տպարան բաց անելը։

Հովսեփ արքեպիսկոպոս Արղությանը թղթակցում էր աշխարհի բոլոր մասերում գտնվող հայ կենտրոնների հետ, որպեսիք են, օրինակ, Վրաստանը, Ս. Էջմիածինը, Կոստանդնուպոլիսը, Իսպահանը, Մադրասը, Քարուլը, Երուսաղեմը, Զմյուռնիան և այլ հայաբնակ տեղերը։

Նամակների թիվը, որոնք Արղությանը սովորություն ուներ արտագրել առանձին դրքերում, հասնում է ութը հազարի։ Այդ նամակների մեկ մասը կորել է, իսկ մնացածները խնամքով պահվում են Երևանի պետական մատենադարանում, Մոսկվայի և Լենինգրադի պետական արխիվներում։

Արղությանի ընդարձակ նամակագրությունները բազմարովանդակ բնույթ են կրում։ Մանավանդ արժեքավոր են ԺԸ դարի վերջին քառորդի հայ-ռուսական հարաբերությունների մասին թողած նրա գրությունները, որոնց մի մասը օգտագործել և հրապարակել են ռուս և հայ պատմաբանները՝ Մսեր Մսերյանը, Ալեքսանդր Երիցյանը, Լեոն, Գյուտ ավագ քահանա Աղանյանը, Ա. Ռ. Հովհաննիսյանը, Ն. Դուբրովինը, Պ. Բուդկովը և ուրիշներ։ Չնայած նրա գրագրությունների այդպիսի լայն օգտագործման, դեռ զգալի թվով նամակներ, որոնք հայ ժողովրդի պատմության կարևոր սկզբնաղբյուրներ են տվյալ ժամանակաշրջանի համար, մնում են չուսումնասիրված և ոմանք էլ անհայտ։ Այդպիսի գրությունների թվին են պատկանում Արղությանի երկու նամակները, որոնցից մեկը Ղրիմի հայ գաղութի համառոտ պատմությունն է, որը գտնվում է ՍՍՌՄ Արտաքին գործերի միներստրության արխիվում,[1] իսկ մյուսը, որ մանրամասն ակնարկ է Ղարաբաղի հայ մելիքների պատմության սկսած ԺԸ դարի սկզբից, պահպանվում է հին փաստաթղթերի Պետական կենտրոնական արխիվում[2]։

Պատմական փաստերը, որոնց վրա հիմնված՝ ապացուցում են հայերի գոյությունը Ղրիմում, շատ կցկտուր և թերի են։ Չկան մանրամասն տեղեկություններ Ղրիմ գաղթող հայերի թվի, նրանց որտեղից և ո՞ր ժամանակներում գալու մասին։ Հայ առևտրականները դեռ ԺԱ դարից, թերևս դրանից էլ առաջ, գաղութներ էին հիմնել Ղրիմում։ Այդ են ապացուցում պատմական հուշարձանների, վանքերի և խաչքարերի վրա եղած հայերեն արձանագրությունները[3]։ Որպես

---

[1] Տե՛ս АВПР, сношения России с Арменией (1764—1800), дело 462, л. л. 61—64.

[2] Տե՛ս ЦГАДА, Кавказск. дела, разряд XXIII, ч. III, № 13 ед. хр. л. л. 321—329.

[3] Տե՛ս Куликовский «Прошлое Тавриды», Киев, 1914, стр. 114.

որինակ կարող է ծառայել Թեոդոսիայի հնությունների թանգարանի մի խաչքարի վրա եղած հետևյալ հայերեն արձանագրությունը. «Բարեխաւս է սուրբ Նշանմս Գրիգորին և իր զաւակին», թվականն է ՆՀԶ (1027)[1]։ Այդ փաստերը հաստատում են նաև գրավոր աղբյուրները. հայտնի է, որ 1062 թվականին Կիևի իշխան Իզյասլավ Յարոսլավիչը պոլովցիների դեմ մղած կռիվներում օգնության է հրավիրել Ղրիմի հայերին[5]։

ԺԳ դարի կեսերին թաթարները ավերեցին Անի քաղաքը։ Անիից և Շիրակի զանազան կողմերից դուրս եկավ գաղթականների մի մեծ խումբ և գնաց դեպի հյուսիս-արևելք ու բնակություն հաստատեց Աստրախան, Աքսարա և Կազան քաղաքներում։ Այստեղ որոշ ժամանակ ապրելուց հետո, չդիմանալով թաթարական վայրագությունների, նրանք բանակցություններ վարեցին Ղրիմի Ջենովական իշխանությունների հետ, և ԺԴ դարի 2-րդ քառորդին զենքը ձեռքներին ճեղքեցին ճանապարհը փակող թաթարների շղթան, հասան Ղրիմի թերակղզին և բնակվեցին Կաֆա, Սուրխաթ և Կաղարեթ քաղաքներում։

Այս ժամանակաշրջանին Ղրիմում ապրող զանազան ազգությունների գաղութների մասին քիչ գրքեր և հոդվածներ չեն գրվել, բայց հայ գաղութի պատմությամբ հետաքրքրվող բոլոր բանասերների համար հիմնական աղբյուրը հանդիսացել է Սեստրենցևի Բոդուշ կաթոլիկ միտրոպոլիտի կողմից գրված Տավրիդայի պատմությունը[6]։

Ղրիմի հայ գաղթականության պատմությունն Արղությանը գրել է հիմք ունենալով այն 190 գրչագիր ձեռագրերի հիշատակարանները, որ 1799 թվականին իրենց հետ բերել էին Ղրիմից Նոր-Նախիջևան գաղթած հայերը[7]։

Արղությանի աշխատությունը, որը չափազանց արժեքավոր սկզբնաղբյուր էր Ղրիմի հայ գաղթականության պատմության, մեզ չի հասել. այդ բացը մասամբ լրացնում է մեր կողմից հայտնաբերված վերոհիշյալ նամակը, որ նա գրել է իշխան Գ. Ս. Պոտյոմկինին։ Նամակը հավանաբար գրված է 1783 թվականին՝ Ղրիմից գաղթող հայերի Նոր-Նախիջևան հասնելուց չորս տարի հետո։ Պահպանվել է նամակի ռուսերեն պատճենը։

ԺԸ դարի 80-ական թվականներին ռուսական արքունիքը լուրջ կերպով զբաղված էր պարսկական իշխանության ենթակա հողերից հայկական պետություն ստեղծելու գործով, որի սահմանները հետագայում պետք է ընդարձակվեին ի հաշիվ Թուրքիայի կողմից գրավված հայկական նահանգների։ Հայկական պետություն ստեղծելու նախագիծը բխում էր Ռուսաստանի արտաքին քաղաքականության առօրյա խնդիրներից, որի նպատակն էր գրավել Կասպից ծովի ափերը և Անդրկովկասը, այսպիսով ստեղծելով նոր քրիստոնեական պետություն, որ Վրաստանի հետ միասին պետք է ամուր հենարան լիներ Ռուսաստանի համար Կովկասյան լեռնաշղթայի մյուս կողմում։ Գործը առաջտանելու համար մի կողմից. Արղությանի, Հովհաննես Լազարյանի և մյուս կողմից Գ. Ա. Պոտյոմկինի, Սուվորովի ինչպես և այլ պետական պաշտոնյաների միջև շարունակ բանակցություններ էին տեղի ունենում։ Մշակվում էին պատերազմական գործողություններ վարելու ծրագրեր։

Բոլոր այս հարցերը, որոնք դուրս են մեզ հետաքրքրող խնդրից, ամենայն մանրամասնությամբ պատմում է հայագետ Ա. Ռ. Հովհաննիսյանը ռուս և հայ հարաբերություններին նվիրված իր մի ուսումնասիրության մեջ[8]։ Այստեղ մեզ հետաքրքրողն այդ ժամանակաշրջանին վերաբերող այն նամակ-զեկուցագիրն է, որ 1783 թվականի հունվարի 28-ին Արղությանը գրել է Կովկասյան գծի հրամանատար Պավել Սերգեևիչ Պոտյոմկինին, նրա իսկ խնդրանքով։ Դա մի ընդարձակ պատմական ակնարկ է, որ որպես Ղարաբաղի մելիքների պատմության կարևոր սկզբնաղբյուր, մեծ հետաքրքրություն և արժեք է ներկայացնում, մանավանդ որ մինչև հիմա չի հրատարակվել և լայն կերպով չի օգտագործվել հայ ժողովրդի պատմությունն ուսումնասիրողների կողմից[9]։

Զեկուցագրում Արղությանը պատմում է 1722 թվականին Պետրոս Մեծի դեպի Դեր-

---

1 Տե՛ս Պետրոս Թումանյան. «Ղրիմի հայերը», «Արոր», Թիֆլիս, 1911 թ., № 9, էջ 76—77։

5 Е(пископ) К(урион), «Колонизация армян юго-западной России». Каменец—Подольск, 1903, стр. 1.

6 Ղրիմի հայ գաղթականության պատմության մյուս կարևոր աղբյուրը 1690 թվականին Ղրիմում գրված «Ճամփաւորքս»-ի նշանավոր հիշատակարանն է, որից Արղությանն օգտվել է, սակայն, ձեռքի տակ ունենալով այլ ձեռագրերի հիշատակարաններ, նա ոչ բոլոր դեպքերում է հետևում հիշատակարանում շարադրված պատմական դեպքերին և նրանց թվականներին։

7 Տե՛ս Եղանեղ Նոճեզիզ. «Նոր-Նախիջևանի ձեռագրերը», «Լումա», 1902 թ.։

8 А. Р. Иоаннисян, «Россия и армянское освободительное движение в 80-х годах XVIII столетия», Ереван, 1947 г.

9 Բացառություն է կազմում Ա. Ռ. Հովհաննիսյանը, որ արխիվային նյութեր ուսումնասիրելիս առանձամ որոշ նյութեր է քաղել սույն նամակ-զեկուցագրի վերջին հատվածներից և այն օգտագործել իր հիշյալ աշխատության մեջ, էջ 40։

բենտ կատարած արշավանքների ժամանակ Ղարաքաղում և Վրաստանում տեղի ունեցող իրադարձությունները, այնուհետև շարադրում է մելիքների պայքարը օսմանական հրոսակների դեմ։

Մանրամասնորեն խոսվում է նաև մելիքների միջև տեղի ունեցող ներքին խռովությունների պատճառով, Ջիվանշիր Թափառական ցեղերի առաջնորդ Փանահ խանի կողմից Շուշու բերդի կառուցման և դրա հետևանքով մելիքների դինվորական ուժի քայքայման, ինչպես և նրանց կողմից Փանահ խանի դեմ մղված պատերազմների և այլ հետաքրքիր դեպքերի մասին։

Հովսեփ արքեպիսկոպոս Արղությանի այդ զեկուցագիրը գրված է պատմական լավատեղյակ աղբյուրների հիման վրա։ Բոլոր նկարագրվող իրադարձությունների ճշգրտությունը հաստատվում է հայ և ադրբեջանցի պատմաբանների կողմից։ Որոշ պատմական դեպքերի Արղությանը տալիս է նոր լուսաբանումներ։

Հին փաստաթղթերի Պետական կենտրոնական արխիվում պահպանվել է զեկուցագրի հայերեն պատճենը։

Ստորև բերում ենք Արղությանի հիշյալ երկու նամակ-զեկուցագրերը.

Ա. ՔԱՂՎԱԾՔՆԵՐ ՔԱՐԹԱԼԻՆԱՅԻ ՄԵԾ ԹԱԳՈՒՀԻ ԹԱՄԱՐԻ ԹԱԳԱՎՈՐՈՒԹՅԱՆ ԺԱՄԱՆԱԿ ՏԵՂԻ ՈՒՆԵՑՈՂ ԻՐԱԴԱՐՁՈՒԹՅՈՒՆԻՑ

Դժբախտությունները այցելում են մեր հայրենիքին Սարդսի որդի ամիր սպասալար Զաքարիայի մահվանից հետո. այրիացած ողջ Քարթալինիայի՝ նրա հայրենակիցների, [ինչպես և] մեծ թագուհի Թամարի արցունքները և վիշտը տալիս են գնահատական նրա արիության և գերազանց ձիրքերին՝ որպես անփոխարինելի զորապետի և այլն։

Բացի դրանից, վերագրում են նրան և այն, որ նրա տոհմն առաջացել է Արտաքսերքսեսից, ուրեմն երկայնաբազուկից[10]։

[Փանի որ] Զերդ Պայծառափայլությունը բարեհաճել է իմանալ այս երկրամասերում ապրող հայերի տոհմաբանությունը, ապա Ես համարձակվում եմ նրանց գաղթեցման սկզբից մինչև մեր ժամանակները ներկայացնել [Ձեզ]՝ վերցնելով այն մեր պատմությունից։

Մեր տոհմի մասին քիչ չի խոսվում հայոց պատմության մեջ. առավել ևս վրացականում, որ Նորին Մեծության վրացական Հերակլ թագավորի կողմից բացահայտորեն ցույց է տրվում վկայական հրովարտակում. բայց թողնելով այս, կպատմեմ մեր թշվառությունների մասին։

Մեծ իշխան Զաքարիա ամիր սպասալար (генерал фельдмаршал) երկայնաբազուկը և նրա եղբայր Իվանե Աթաբեկը, շատ հերոսական գործեր կատարելուց հետո, Թամար թագուհու ժամանակ, ժառանգել են իրենց՝ այս թագուհու ուժերով՝ Զաքարեն՝ հայ Բագրատունի թագավորներից հռչակավոր թագավորանիստ Անի քաղաքը և Արարատի մի մասը, երբ նրա հայր Սարգիսը քշեց այդտեղից պարսիկների բոլոր ցեղերին՝ զենքով և մեծ հարձակումներով, իսկ նրա եղբայր Իվանեն ժառանգեց Ախլցխան և նրան պատկանող բոլոր մարզերը, որից՝ Իվանեից, անընդհատ ծագում են Աթաբեկ անվանյալ տերերը և ներկայի Սուլթյման փաշան այդ նույն տոհմից է սերում։

Զաքարեի մահից հետո, նրա որդի մեծ իշխան Շահինշահը, ըստ ժառանգության, նստում է Անիում մինչև ծերությունը, որից նույն քաղաքը, նրան պատկանող նահանգների հետ միասին, վրացական Դավիթ Սոսլան կոչված թագավորի ժամանակ, առավ թաթարական Հուլավու խանը և սպանեց Զաքարեի որդուն[11]։

1262 թ. [Հուլավու խանը] նվաճեց ամբողջ Հայաստանը և տիրեց 54 տարի, իսկ 1319 թվականին, նա նույն քաղաքի բնակիչներին գաղթեցրեց իր երկիրը[12]։

[10] Նույնը ասվում է նաև Հերակլ թագավորի կողմից ոստաց արքունիքին ներկայացված տոհմագրության մեջ, որևէ փաստ չկա Արղությանների այդքան հին ծագումն ստուգելու համար։ Ճշմարիտն այն է, որ Արղությանի նախորդները Թամար թագուհու ժամանակ Վրաստանում հռչակված Զաքարյան հայ իշխաններն էին, որոնք, ըստ հայ պատմիչներ Վարդան վարդապետի և Կիրակոս Գանձակեցու, քրդական ծագում ունեին (Հ. Մանանդյան, «Քննական տեսություն հայ ժողովրդի պատմության», Երևան, 1952 թ., էջ 128)։

[11] Հուլավուի կողմից 1261 թվականին սպանվել է ոչ թե Շահինշահը, այլ նրա որդի Զաքարեն (Մանանդյան, «Քննական տեսություն հայ ժողովրդի պատմության», էջ 288)։

[12] Հուլավուն չէր կարող 1319 թվականին հայերին որևէ տեղ գաղթեցնել կամ Հայաստանի վրա իշխել 54 տարի, որովհետև նա մեռել էր 1265 թվականին։ Թաթարների կողմից Անիի բնակիչներին բռնի կերպով դեպի Աստրախան և նրա մոտակա տեղեր գաղթեցնելը վիճելի խնդիր է։ Եթե իրոք հայերը բռնի կերպով գաղթեցվել են, այդ, ինչպես Արղությանն է վկայում, պետք է տեղի ունեցած լինի 1319 թվականին, որովհետև այդ թվականին Ոսկե Հորդայի Խան Ուզբեկը (1313—1335) բազմաթիվ զորքե-

Անիում եղել են հազար ու մեկ եկեղեցիներ, որոնցից մի քանիսը այժմ գոյություն ունեն, իսկ տներ (ընտանիքներ), մինչև հարյուր հազար, իրենց ունեցվածքով և եկեղեցական ամբողջ կայքով հանգերձ, ներառյալ դռների և գրակալների[13], [թաթարները] գաղթեցրել են իրենց երկիրը, տանելով Դերբենտի վրայով Աստրախան, և բնակեցրել են Վոլգայից այն կողմ, Աստրախան քաղաքից 80 կմ. հեռավորության վրա գտնվող թաթարական Ախսարա քաղաքում, որտեղից բնակիչները տարածվել են մինչև Կազան, ուր նրանք շատ եկեղեցիներ են կառուցել, և հենց Կազանում այժմ կան նրանց կողմից կառուցված երկու եկեղեցիներ, առաջինը Ս. Աստվածամոր [անունով], երկրորդը՝ Ս. Գրիգոր Լուսավորչի և մնացել են [այդ երկրում], որպես թաթարների հպատակ, 12 տարի։

Վշտացած թաթարների վայրագություններից, [հայերը] դեսպաններ են ուղարկել Ղրիմ՝ Ջենովական իշխանավորի մոտ, որն այն ժամանակ նստելով Կաֆա քաղաքում, տիրում էր Ղրիմին, որպեսզի [նա] իրենց օգնության ձեռք մեկնի և այնտեղից տանի [Ղրիմ]։ [Հայերը այդ օգնությունը] ստանում են նրանից, 1340 թվին դուրս են գալիս թաթարների մոտից և [գնալով Ղրիմ], ընդունվում են Ջենովական կառավարիչ Շիրինի կողմից։

Նա սիրալիրորեն [նրանց] համար բնակության վայրեր է հատկացրել Ղրիմ-բազարից մինչև Սուդակ, և մինչև Կաֆա. քանի որ այդ տեղերը քիչ են եղել այդքան մեծաթիվ ժողովրդի համար, ուստի նրանց կեսը գաղթել են Ցասսի, Բաղուշան և մոլդավական այլ քաղաքներ։ Հետագայում այս գաղթականներից ոմանք անցել են Լեհաստան և Հունգարիա, որտեղ և այժմ գտնվում են։

Իսկ նրանք, որոնք մնացել են Ղրիմում, Կաֆայում (Թեոդոսիա), Կազարեթում (հին Ղրիմում) և Սուրխաթում (Սուդակ), կառուցել են քաղաքներ, շատ գյուղեր, եկեղեցիներ, վանքեր և մենաստաններ՝ նման մեր Անի քաղաքին[14]։ [Բացի դրանից] ամրություններ են կառուցել Կաֆայում, արտաքինից այն շրջափակելով պարսպով, որը և ներկա ժամանակում էլ իր գոյությունը պահպանում է։

Ազատվելով թաթարական ասպատակություններից, ամբողջ 120 տարի ապրել են խաղաղ և հարուստ, նրանց մեջ գտնվել են հայ թագավորների, իշխանների և ազնվականների գերդաստաններ, որոնց հետնորդներն այժմ չեն մնացել։ բացի մի քանիսից. որոնք հիմա ապրում են Նոր-Նախիջևանում։

Կազանում մնացող հայերը ռուսների կողմից Կազանը գրավելիս՝ ոչնչացվել են, իսկ փրկված 10 ընտանիքները գաղթել են Աստրախան և համարվում են [այնտեղի] ժամանակակից հայ գաղութի հիմնադիրները։

1453 թ. Սուլթան Մահմուդի կողմից Կոստանդնապոլիսն գրավելուց հետո, թշնամություն է առաջացել Ջենովական կառավարչի. որը, ինչպես վերևում ասված է, նստավայր ուներ Կաֆայում, և Թաթար խանի միջև, որ նույն ձևով նստում էր Բաղչիսարայում։

Ջենովական կառավարիչը աղջիկ է ունեցել։ իսկ Թաթար խանը՝ տղա։ Թաթար խանը իր տղային ամուսնացրել է Ջենովական կառավարչի աղջկա հետ, և Թաթար խանի տղայի ամուսնության միջոցով՝ նրանց միջև բարեկամություն է հաստատվել, սակայն կապը երկար չի տևել. [նրանք] ձգտել են խարդախ կերպով։ իրենց զավակների միջոցով, մեկը մյուսին սպանել։ Եվ որովհետև ջենովական իշխանավորը ավելի շատ է երկյուղ կրել [Թաթար խանից], հետևաբար բռնել է իր փեսային՝ և նստեցրել է հսկողության տակ Ֆրանկ-Ասար կոչված ամրոցում։ Բայց [քանի որ] Թաթար խանը չի կարողացել ազատել իր տղային, այդ պատճառով դեսպաններ է ուղարկել Կ. Պոլիս

րով մտնում է Դերբենդի վրայով Անդրկովկաս և Թալանի, ավերածության և դերեվարության ենթարկում տեղի ժողովրդին։

[13] Նրանք Անիից իրենց հետ բերած են լինում նաև հնություններ, որոնցից երկուսը՝ մեկ դաշույն և մեկ թուր, որպես հիշատակ նվեր տալիս են իրենց առաջնորդող Հովսեփ արքեպիսկոպոս Արղությանին։ Դաշույնի վրա գրված է լինում. «Ռուբէն որդի Գագկայ։ Սոնամ եղիցի առնալ զԿլայն Կոսսիր։ Կատարութեամբ Աստուծոյ տի մեռոյ թուին ՇԻԸ. 1265 յամի Տեառն»։ Իսկ սուսերի վրա գրված է եղել արծաթանիշ տառերով այսպես. «Զոն լեռոմ բազաուռին հայոց Արշակայ, և ճարճ իսոյ Վասակայ. ոռ եմ զօրավար Մուշեղ Բալ ճակային. ՆԹՐ. թուին։ Ստացեալ եղէ ես Աշոտ եկեղեցոյ՝ որդի Արասայ, ձեռամբ կայսերացն՝ մեծի Վասիլի և Յ.Ճանէնս Ցմշկակայ. թուին հայոց ՆԿԶ» (Ս. Ջալալյան, «Ճանապարհորդություն ի Մեծն Հայաստան», 2-րդ մաս, ի Տփխիս, 1857 թ., էջ 462)։

[14] Արղությանի այս խոսքերը չափազանցություններ են, ինչպես երևում է նրանց կառուցած եկեղեցիներից, վանքերից և թողած գրչագիր ձեռագրերից, նրանք կարճ ժամանակում այնպիսի ճոխության և հարստության են հասնում, որ ոտար պատմիչները Կաֆային «Armenia maritima» («Ծովային Հայաստան») անունն էին տալիս, իսկ Եվգենիոս Դ պապը, երևի հայերին սիրաշահելու մտքով, իր կոնդակում Սուդակը նույնիսկ «Մեծ Հայաստան» է անվանում (Տե՛ս Պետրոսյան. «Ղրիմի հայերը», «Արորա», Թիֆլիս, 1911, № 9, էջ 85)։

Սուլթանի մոտ, խնդրելով նրան օգնել ծովից՝ Կաֆան վերցնելու և իր որդուն աղատելու համար, [միաժամանակ] պարտավորվելով քաղաքը թողնել Սուլթանի իշխանության ներքո։

Այսպիսով, իմաստուն սուլթան Մահմուդը նախապատրաստեց Քյուրթակ փաշային[15], հանձնեց նրան բազմաթիվ զինված նավեր և կարգադրեց, որ Կաֆան վերցնելիս, անմիջապես սպանել Թաթար խանին, իսկ նրա տղային ուղարկել Կ. Պոլիս։ Հիշյալ փաշան նավերով գալով՝ հարձակվում է [Կաֆայի վրա] ծովից, իսկ Թաթար խանը՝ ցամաքի կողմից։

Շատ [պատերազմական] գործողություններից հետո չկարողանալով դիմադրել, Ջենովական կառավարիչ Շիրինը խորամանկորեն փախավ քաղաքից, իսկ քաղաքը մնաց հայերի ձեռքում, որոնց Քյուրթակ փաշան խաբեց, և բազում խարդախություններով վերցրեց Կաֆան, ուր կային շատ եկեղեցիներ և հոյակապ տներ։ [Կաֆան] վերցնելու ութերորդ օրը, 1460 թվին [Քյուրթակ փաշան] բոլոր նշանավոր հայ մարդկանց հրավիրեց հյուր՝ Ֆրանգ-Ասարա ամրոցի վերին հարկում, իսկ խնճույքից հետո մեկ-մեկ բաց թողեց բոլորովին նեղ տեղով, որի վերջում դահիճներ էին կանգնած, որտեղ յուրաքանչյուր ցած իջնողի գլուխը կտրում և ծովն էին գցում։ Նրանց բոլորին կոտորելուց հետո հրամայեց [զինվորներին] զենք վերցնել և ամենուրեք՝ Կաֆայում, Հին-Ղրիմում, Սուդակում և մոտակա տեղերում։ առանց բացառության, ոչ ծերերին, և ոչ էլ սեռին նայելով, անխնա կոտորել բոլորին։ Նույն օրը արյունը առվակներով հոսեց փողոցներում։

Սուլթանի հրամանով [Քյուրթակ] փաշան չմոռացավ սպանել [նաև] Թաթար խանին, և ավերեցին ամեն տեղ բազմաթիվ հոյակապ շինություններ և եկեղեցիներ, իսկ դրանցից ամենալավերը դարձրին իրենց աղոթատներ (մզկիթներ)։ Բացի այն սպանվածներից, 40 000 երկսեռ փոքրահասակ գերիների, Թաթար խանի տղայի հետ, ուղարկեց Կոստանդնուպոլիս։

Իմաստուն սուլթանը հիշյալ Թաթար խանի տղային նշանակեց Ղրիմի խան՝ նրանից վերցնելով երեք պարտավորություններ։

Որպեսզի՝ ա. ինքը խանը և նրա հաջորդները, ինչպես և նրա տիրապետությունը, կախման վիճակի մեջ լինեն Բարձր Դռնից (от Порты):

բ. Կաֆա քաղաքը և բոլոր ամրոցները Ղրիմում ու նրա մոտ գտնվողները լինեն Սուլթանի և նրա հաջորդների իշխանության ներքո։

գ. Պատերազմի ժամանակ որքան էլ որ զորք պահանջվի, մթերապաշարի հետ, տալ. որոնք (երեք պարտավորությունները) պահպանված են եղել մինչև Ռուսաստանի առաջին պատերազմը Բարձր Դռան (Թուրքիայի) հետ։

Արդեն հայտնի է, որ Թաթարները հայերին գաղթեցրել են Անի քաղաքից, իմ նախորդների իշխանությունից, որոնք հետո բնակվել են զանազան տեղերում Ղրիմում և Մոլդավիայում։ Այդ ժամանակվանից 450 տարի անց, Աստուծո նախախնամությամբ, խոնարհությունս, նույն տոհմից, շնորհիվ մեծ Կայսրուհու առատաձեռնությունների, առանձնապես Ձերդ Պայծառափայլության, մեր խնամակալի բարեհաճության, ընդունեցի ես այդ ժողովրդին, որ հանված է եղել իմ նախածնողների կողմից [իմ] հողոնոր հոտի մեջ։

Այժմ իմ հարազատները՝ իմ ավագ եղբայր Բեժանը իր գերդաստանով—երեխաներով, եղբորորդիներով—ապրում են Վրաստանում՝ իրենց հայրենական կալվածքում, որ գտնվում է վրաց Թագավոր Հերակլի տիրապետության ներքո, և բոլորը հարգված են նրա [Թագավորի] և նրա իշխանների կողմից։

Խոնարհ ՀՈՎՍԵՓ ԱՐՔԵՊԻՍԿՈՊՈՍ
[առաջնորդ] Ռուսաստանում
բնակվող բոլոր հայերի

Բ. ԱՐՂՈՒԹՅԱՆԻ ՆԱՄԱԿԸ ԳԵՆԵՐԱԼ ՊՈՏՅՈՄԿԻՆԻՆ

1

Սիրելյալդ հոգւոյ իմոյ, Բարձր Գեներազաղգոյն Պաւլ Սարգէիչ Պոտեմկին, քաջ զորապետ և շնորհաւոր Տէր և բարերար։

Ի Յեկատերինայի Կրեպոստն գալով իմ պխայությունեամբ հարեալ, ոչ կարացեալ զորպիսութիւն Ղարաբաղու Մելիքանցն և նոցին դասաւորութեանցն ի տեղեկութիւն Վսեմամտութեան Ձերոյ և ցանկութեան գրել, այժմ զպակասն նորին լնում ըստ մերում չափ, ըստ Ձերդ բազձանաց, և ըստ իմս յօժարութեան։

Հնգեքին մելիքքն այնոքիկ, ի բազմաց հետէ ինքնագլուխ էին և ոմանք ոչ ունէին ղհնազանդութիւն, այլ իւրաքանչիւրքն զժողովուրդս իւրեանց հովուէին, և դոյն ինչ կերպիւ նայէին Գանջու խանին։ Այնքան ունէին ազատութիւն, մինչ զի յորժամ երանութեանցն արժանաւոր Մեծ Կայսրն Պետրոս յորժամ հաճեցաւ այցելութիւն առնել տա-

[15] Թուրքական աղբյուրներում Քյուրթակ փաշան կոչվում է Ահմադ Կեդիկ Կապուտան փաշա (տե՛ս Кондураки, «Универсальное описание Крыма», части 14, 16, 17:

բարախտ երկրին մերոյ և դիմեաց ի Դարբանդ, յուեալ նոցա զայս երջանիկ լուրս ազատութեան, համաձայնեալ ամենեքեան 18 հազար երիտասարդ արք պատերազմականք, քաջք և արիասիրտք՝ նախանձաւորք իւրեանց հայրենեաց և սիրողք ցանկալի անուանն Մեծին Պետրոսի, եկին ընդ յառաջ նորա մինչև ի յանցս Կուր գետոյն և մի մի անցանէին ի գետն և աճապարէին իբրև զարծուիս առ մեծ կայսրն, և վրաց արքայն Վախտանգ իւրով բաւական զօրօք եկեալ էր և նա Գէնջայ և նա գնաց ընդ յառաջ նորա ի լուանալ առաւաւուն լուր դառն անբախտութեան եհաս առ նոսա. որպէս թէ Մեծն Պետրոս վասն վրդովման Սեղեկն յերկրի իւրոյ յետս դարձաւ. և խորհուրդ նորա մնաց անկատար։ Ողորմելի եղեալ մերայինքն և յուսահատ ի փրկութենէ, որ զրկեցան յանկարծ պատահեալ բարեբախտութեանցն։ Ի սմին միջոցի օսմանցիքն տիրեալ էին երկրին մերոյ և մելիքացն։ Ապա սոյն 18 հազար ժողովեալ քաջասիրտ արքն պատերազմականք, յետ դարձեալ ի Կուր գետոյն, յարեան ի վերայ զօրացն օսմանցոց, ի սուր սուսերի մաշեցին զնոսա և զմնացեալսն ի բաց հալածեցին ի Ղարաբաղու, ի Ղաբանու և ի Սիսիանու։ Եւ ի մէջ իւրեանց նստուցին զոմն իբր թագաւոր և անուանեցին զնա Շրուան շահ։ Ապա անմիաբան լեալ ի մէջ իւրեանց՝ սպանին զնոր նստուցեալ շահն իւրեանց և ընդ իրեարս պատերազմեցան վասն սոպութեան և անիմաստութեան իւրեանց[16]։ Յորոց երևելի գլխաւոր զօրացն, բազումք եկին ի Հաշտարխան առ Մեծն Պետրոս, թէպէտ չարժանացան տեսութեան նորին, սակայն ի փոխանորդաց Աթոռոյ նորա, գտին զողորմութիւնս. յորոց յառաջինն էր ոմն Աւան խան կոչեցեալ։ Եւ մինն անէրն պօղպօլկովնիկ Միրզաբեգ Վահանովիչն և այլք։ Իսկ մնացեալքն անգլուխ լեալ, ցիր ու ցան եղին առատ և անդ։

2

Յետ այսորիկ դարձեալ մելիքացն այնոցիկ, տիրեցին իւրաքանչիւրքն հայրենեաց իւրեանց խաղաղութեամբ, յաւուրս Նատր Շահին։ Անուանք գաւառաց մելիքացն այնոցիկ են սոքա. Ա. Իգրմիդորդ[17], որ է մելիք Յովսեփինն, որ այժմ նորին որդի մելիք Ապովն տիրէ։ Բ. Ջարաբերդ, որ է մելիք Ադամին։ Գ. Խաչեն, որ է մելիք Միրզախանին, որ այր է ծեր։ Դ. Վարանդ, որ է Մելիք Շահնազարին, արդ է գիւղն Շուշի և ամրոցն նորա, որ կոչի Շուշի-բերթ և նմա նստեալ խանն Շուշի խան։ Ե. Դուզաղ, որոյ մելիք էր մելիք Եսային՝ որդի մելիք Եսայեանի, որ նատր Շահն զնա հայր իւր կոչէր և մեծ յարգանս ցուցանէր։ էր այր իմաստուն, խաղաղարար և լի հարստութեամբ, մինչև զի նատր Շահն բոլոր զօրօքն իւրովք կերակրեաց միայնակի բազում աւուրս։ Եւ այս հնգեքին գաւառս մելիքաց ի մէջ կոչի Արցախ աշխարհ. իսկ այժմ առհասարակ Ղարաբաղ և զխանն՝ Ղարաբաղա կամ Շուշու խան։

3

Զկնի մահուան Նատր Շահին, այլայլեցաւ բոլոր տունն պարսից և բազումք եղեն ինքնագլուխք, որոց գոյր զօրութիւն նմանապէս և սոյն մելիքքս։ Վախճանեցաւ և մելիք Եգանն և որդի նորա մելիք Եսային նստաւ ի տեղի նորա։ Ցիւրաքանչիւրքն ի նոցանէ կարծիւր ինքն մեծ լինիլ և ցանկայր գործով յառաջանալ։ Մելիք Ադամի, մելիք Յովսէփի և մելիք Եսայու խորհուրդն մի էր, բայց ի մէջ նոցա որպէս թէ խտրոցէր մելիք Շահնազարն, որ է այր խորամանկ, թերահաւատ և ամենայն գործս բարեաց անպիտան, նենգաւոր և դաւաճանող եղբարց։ Ի Ղարաբաղ գոյր էլ ինչ որպէս յերկրիս նորայինքն՝ խորանաշրջիկ, որ կոչիւր Ջվանշիր, որոյ գլխաւորի անունն էր Փանայ խան։ Խորամանկն ի չարիս մելիք Շահնազարն զնա կոչեալ ի յօգնութիւն իւր, կամաւ հնազանդեցաւ և զբերթն իւր ետ նմա. և զտունն Եգանի ետ աւար առնել և հնազանդեցուցանել. ընդ նմին հնազանդեցոյց և զմելիք Միրզախանն Խաչենու։ Եւ սկսաւ նոքաւ պատերազմել ընդ եղբարս իւր ընդ մելիք Ադամին և ընդ մելիք Յովսեփին յամս քսան։ Թէպէտ փոքր էին սոքա թուով, բայց զրաղում անգամ զյաղթութիւնն արարին և զօրս Փանայ խանին և մելիք Շահնազարին հալածականս արարին, և մինչ նուազեցան այս երկոքին մելիքքս և յուստեքէ օգնութիւն ինչ ոչ գտին

---

16 Մեզ հայտնի ոչ մի աղբյուրում չի հիշվում, թե ԺԸ դարի առաջին քառորդին Ղարաբաղում տեղական խաների և օսմանցիների դեմ մղած կռիվների ժամանակ, հայերը, որևէ մեկին Շիրվան Շահ անվանելով, թագավոր ընտրած լինեն և հետո, անմիաբան լինելով իրար մեջ, սպանեն նրան։ Շատ հավանական է, որ այստեղ խոսքը վերաբերվում է Մխիթար սպարապետին, որը 1730 թվականին տմարդի կերպով սպանվեց իր դինակիցների կողմից։ Ինչպես երևում է, Արղությանը այդ մասին տեղեկություններ չունի, թեև նրան հայտնի էր Դավիթ Բեկի կռիվների պատմությունը, որ նա երբեմն գրում կամ պատմում էր Գրիգորի Պոտյոմկինին, մյուս ռուս իշխաններին և այլ պինյորական պաշտոնյաներին։

17 Այս մելիքությունը 24 գյուղերից բաղկացած լինելու պատճառով կոչվել է Իգրմիդորդ (տե՛ս Սարգիս episkopos Ջալալյան, «Հանապարհորդութիւն ի Մեծն Հայաստան», մասն Ա, էջ 173)։

և ոչ ևս կարացին դէմ ունիլ, փախստական գնացին ի առնն Վրաց առ արքայն Հերակլ ամենայն ժողովրդովք իւրեանց. ի նմանէ ոչ զտեալ յօգնութիւն վասն ամայութեան երկրին, ոչ հաճեցան մնալ անդ, այլ չուեալ ի Գանձակ գնացին ի Գանձայ. միջնորդս առաքեցին առ իրեարս մելիքքս և Փանայ խանն, որ ի մէջ մի լիցի յիշումս անցիցն յառաջնոց, այլ թէ խաղաղութեամբ դարձեալ ի երկիր իւրեանց, հնազանդ լիցին Փանայ խանին, որպէս այլ երեք մելիքքն Ուտի և սոքա հաճեալ գնացին ի տեղիս իւրեանց, զամայացեալ գաւառս նորոգեցին և եղեն հնազանդ նմա մինչև ցայսօր ժամանակի։ Բայց մինչ կենդանի էր Փանայ խանն, երկոքին մելիքքս այսօքիկ յԱղամ և Յովսեփ ոչ հաճեցան ի Շուշի բերթն առ Փանայ խանն վասն երկիւղի իւրեանց. և նա ևս ոչ բռնադատէր։ Այլ զկնի մահուան նորա, որդի նորա Մահմադ խանն երդմամբ հաճեցոյց գնալ առ ինքն, որ և արարին թէպէտ զկամս նորա, բայց միշտ զկասկածանս ունէին։ Մելիք Շահնազարի և Շուշու խանի խորհուրդն և կամքն մի է. խանն համարի զնա հաւատարիմ իւր և նա որպէս թէ իւր արարեալ։ Մելիք Եսային սպանեալ է սոյն խանս խորհրդով մելիք Շահնազարին[16]. այժմ չգիտեմ թէ ո՞ է ի տեղի նորա. և մելիք Միրզախանն այր խղճաբարոյ է, ոչինչ օգնութիւն կարէ ի նմանէ յառաջանալ մեզ։ Իսկ մելիք Ադամն և մելիք Յոսեփն և այժմ որդի նորա, միշտ միախորհուրդք են և համամիտք։ Եւ ներքին դիտումն նորա առ քրիստոնեայսն և հանապազ հնար խնդրեն վասն ազատութեան իւրեանց, որպէս բազմիցս խօսեցեալք են ընդ իս։ Այս երկու մելիքաց գաւառքն մերձ գոլով Հերակլին, Շուշու խանն ոչ այնպէս կարէ նուաճել զսոսա որպէս զայլ երեքին մելիքսն, մանաւանդ գիտէ և զմիաբանութիւն նոցա, որ եթէ ճնշէ փախչելոց են առ արքայն Հերակլէս։ Բայց ի մելիք Շահնազարէն և ի տանէն իւրմէ, այլ մելիքքն և բոլոր բնակիչքն հնգերքին գաւառացն և հոգևորքն սոցա, եթէ գտին առիթ ինչ օգնութեան, ապստամբելոց են ի խանէն։ Իսկ եթէ յառաջակայ նոր կարգաւորութիւն հաստատեսցի, անկասկած եմ նոցա հնազանդ լինելոյն և հաւատարմութիւն գործելոյ առ այն կարգաւորութիւնս պատկանեալս։ Հաւատամք, որք ի տաճկաց ևս բազումք ցանկան տիրապետելոյն Ձերոյ վասն այն զի ի ձեռաց բարբարոսացն ոչ ունին զյանդորր և զապահով կեանս, յազգս կեղեքելոյն նոցա, կամ մշտապէս պատերազմացն։

4

Փանայ խանն յօրըստօրէ զօրացեալ, տիրեաց հինգ գաւառացն մելիքաց և այլ տաճիկ էլիցս։ Նաև զբաղում գաւառս ի նախիջևանու խանն առ ինքն կորզեաց, որպէս զՍիսիան, զՂարաբաղ և զայլ գաւառս, որ են անուանի գիւղորայք հայոց, որպէս Տաթև, Ջևինդուր, Հալաւձոր, Խնձորէքս և այլք, որոց բնակիչք հայք են քաջասիրտք, հզօրք և պատերազմօղք, որոց մինն կարող է բազմաց դէմ ունել։ Սոյն խանն Շուշու ի ունիլն պատերազմ առ դրացի խանսն որպէս զմելիքսն և զօրս նոցա, նմանապէս և զսոյն գիւղացիսն զինուորեցուցանէ տալ պատերազմն թշնամեաց իւրոց, որովք արարեալ է բազում անգամ զբաղում պատերազմունս յաղթանակութեամբ։ Ցաթալի խան ոմն պարսիկ 22 յամաւ յառաջ քան զայս զօրացեալ ի յԱտրպատական աշխարհին, այսինքն ի յԱդրբէջան, զբաղում խանս հնազանդեցոյց։ Եկն ի վերայ Շուշու, նստաւ ի բազում ժամանակս հանդէպ ձորոյն, որ յարևելեան կողմանէ հանդէպ նորա կայ, ոչ կարաց առնուլ զբերթն, այլ թէ զբազում զօրս կորոյս ի ձեռաց հայոց։ Եւ ապա գնացեալ ի գիւղն Տաթև, խնդրեաց զամրոցն նորա, ոչ ետուն, և զօրութեամբ ոչ կարաց առնուլ վասն ամրութեան։ Երդմամբ հաւատացոյց նախագահ մետրոպոլիտին հայոց Տեառն Յովանէսի. և հաւատացեալ նմա հտ զամրոցն վանից, ուր է նախագահ Աթոռ մետրապոլիտութեան Ազգիս մերոյ. և յետ առնելոյն ընդ թիւր օրինաց իւրեանց, ստեաց երդման իւրոյ, կոտորեաց զմիբանսն հուշկաւոր վանիցն այնմիկ։ Հրացեալ շամփրաւ յարչարեաց զեպիսկոպոսն, ցուցանել նմա զգարանս ևս զգանձս վանիցն, որ և նա չկտրելով տանիլ վշտացն, ցուցեալ էր։ Աւասիկ ասպատակեաց զվանս Տաթևու, որ հազար չորս հարիւր ամ էր կոյս և անարատ մնացեալ ի մէջ այնքան յարուցմանցն յաղագս ամրութեան իւրոյ։ Բարձին զամենայն գանձս նորա և զգիւղն գերեալ տարան ի Ցորմի քաղաք հայոց. և անդ ցրուեալ ապականեցին։ Զօրացեալ Քերիմ խանն եկեալ ըմբռնեաց զապականիչ Ցաթալի խանն և սպան զնա և ինքն տի-

[16] Արդութեանի այս տեղեկութիւնը Մելիք Եսայու սպանության մասին հաստատում է նաև թուրք պատմիչ Միրզա Ջամալը (Տե՛ս Мирза Джамал, «Карабаг», стр. 14)։ Սակայն, ըստ Միրզա Ջամալի, մելիք Եսայուն սպանել է ոչ թե Մահմեդ խանը (այդ անունով խան Ղարաբաղում չի եղել, Փանահ խանին հաջորդել է նրա որդի Իբրահիմ խալիլ խանը 1763 թվականին), այլ Փանահ խանը։ Երկու հեղինակներն էլ սխալվում են, որովհետև մելիք Եսայու տապանաքարը, որ մնացել է Տող գյուղում, ցույց է տալիս, որ նա վախճանվել է 1781 թվականին, մինչդեռ Փանահ խանը մեռել է 1762 թվականին (տե՛ս «Հայոց պատմություն», Երևան, 1946 թ., էջ 836)։

բեաց յամենայն կողմանցն յԱտրրպատականու և հնազանդ արարեալ, գնաց ի Շիրազ։ Այս համառօտ պատմութիւնս վասն այն դրեցի, զի գիտասցես անսայթաք զամենայն որպիսութիւն կողմանցն այնոցիկ, որք առաւել գլխաւորականութիւն ձեր զօրացուցանել, զբազում հնարս իմաստութեան վասն նոցա յօրինել ըստ այսմ։ Իսկ մնացեալն ի յառաջին գրեցելոցն կարող ես գիտել։ Մեր խորհուրդն այժմ, մի միայն ընդ մէջիք Ադամին պարսի լինել և ոչ ըստ այլ ումեք, մինչև տացէ հզօր Աչն Բարձրելոյն բացայայտեալ լինիլ նորոգ կարգաւորութեանն։

5

Իսկ հոգևորականացն դասուց ոչ գոյ մեզ երկբայութիւն ինչ երբեք, զի յորժամ և կամիցիմք որպիսի և իցէ կերպիւ, մեք ի նոցանէ կարող եմք և զխնդիրս բերել, բայց զինչ օգուտ, մինչ առ նոսա երկմտութիւն ինչ ոչ գոյ և ոչ մի կասկած ինչ զնոցանէ։

6

Յորժամ տացէ Տեր յաջողութիւն Զերում Գերազանցութեան հասանիլ ի Հայաստան և ի յԱրարատ ի քաղաքն Երևան և Պատրիարգարան ամենայն հայոց ի Վաղարշապատ քաղաքն որ այժմ կոչի Էջմիածին վասն լինելոյն նորա Մայր Հայաստանեայց։ Թէպետ անդ Ազգի մեր յոյժ սակաւք են և ի հալածմանէ և ի կեղեքմանէ պարսից զրկեալք, սակայն յոյս նոցա կախեալ է ի հայրենեացն։ Իսկ բազումք ժողովուրդք մեր՝ մերձ Արարատայ ի Քրդստան կոչեցեալ երկրոյն, յայնկոյս լերինն Արարատայ, յոյժ յոլովք են հայք, քաջասիրտք և յաղթանդամք, սիրողք և ցանկացողք անուանն Ռուստաց։ Շատ կարելի է որ ի նոցանէ բազումք եկեսցեն առաքել՝ ի զինուորիլ։ Եւ մանաւանդ գոն անդ ազգ ինչ մարաց, որք կոչին եէզիտիք խորանաբնակք և որպէս թէ սատանապաշտք, զի հայհոյելն զսատանայ մեզք համարին, թէ Աստուծոյ պատուական ծառան էր, թէպետ բարկացաւ նմա, կարելի է որ դարձեալ ողորմութիւն առնէ, վասն որոյ ոչ է հարկ անարգել զսատանայն. այս է օրենք նոցա։ Գիր ոչ ունին, ամենայն օրենքն բանիւ ունին աւանդեալ. սոքա ևս յոյժ քրիստոնայասէր են և մինչև զի յառաջի մեծ պատերազմին բազումք ի մեծամեծաց նոցին Սրբազան Հայրապետին աւետիք գրէին, թէ Աստուծով ոուսքն այս ինչ յաղթութիւն արարեալ են, իցէ թէ գան և փրկեն զմեզ ի ծառայութենէ օսմանցոց։ Կարծեմ որ սոքա մինչ զքաղցրութեան ձերոյ ախորժ համբաւն լսեն, ժողովին առ ձեզ, զի են յոյժ պատերազմօղք, զրահաւորք և տիգաւորք։ Այժմ կոչին նոքա եուզրդի քուրդք։ Գրեցի և զայս պարզապէս, զի գիտասցէս, թէ և այսպիսիք դոն անդ։

7

Եւ յորժամ բանն ի գլուխ եկեսցէ, հարկէ և մեզ գնալ ի Թիֆլիզ և ի յԱրարատ՝ յաղագս զանազան պատճառաց, առնելով ընդ իս և ոմն ձերայնոց, վասն որոյ եթէ պատշաճ տեսցէ Գերազանցութիւն Ձերոյ հաւատարմաց, ըստ ժամանակին Պայծառափայլ քնեազին դրեսցես, մեզ ևս իմացումն արասցես, որ մեք ևս գերեալ հրաման խնդրեսցուք միշոց ինչ անդ գտանիլ։ Վասն հացի պատրաստութեան և կամ յառաջակայ ամս աւել սերմանելոյ՝ ես գրեալ եմ Հերակլ արքային, Սրբազան Հայրապետին և մէջիք Ադամին։ Աստուծով ամենայն նշանն այնպես երևի՝ որպէս թէ ի Կովկաս անցեալ, ըստ զօրավարին Պոմպեի Հռոմայեցւոց, տիրեալ իցես բարեհաջակ և վայելչադիր աշխարհին Հայոց։

Եւ յաղագս Հերակլ արքային շատ լիցին յառաջին գրեցեալքս, այլ թէ կալ զնա քեզ միշտ բարեկամ։ Պրիմեր մայոր Ստեփան Գրիգորիչ Սումբատովն, որ է յԱզգէն մերմէ, կարծեմ որ ճանաչես զնա։ Պայծառափայլ Քնեազն լաւ ճանաչէ։ Ես պատշաճ տեսանիմ յայսմ միշոցի լինիլ նորա ընդ Գերազանցութեան Քում վասն լեզուագիտութեան։ Եթէ հաճեսցիս ունիլ զնա ի ծառայութեան Ձեր գրեսցես Պայծառափայլ Քնեազն խնամակալին մերոյ՝ ուր և իցէ բերել և առ քեզ առաքել, զի ի Ղարաբաղու մէլիքացն բազումք են նորա ազգականք։

Եւ ես յամենայն ժամ մնամ Բարձր Գերազանցութեան քում մշտայօժար բարեկամ և գբարեյաջողութիւն ձեր հայեցող և կենաց Ձերոց աղօթարար ծառայ, ի Տէր՝

ՅՈՎՍԵՓ ԱՐՔԵՊԻՍԿՈՊՈՍ ՀԱՅՈՑ

1783, յունվարի 28

Ի Նախիջևան



Հ. ԵՂԻԱԶԱՐՅԱՆ

ԵՂՎԱՐԴԻ ՄԵԾ ԵՎ ՓՈՔՐ ՎԱՆՔԵՐԸ ԵՎ ԳԵՈՒՊԻ ՄԵՌԻՍ ԿԱՐԵՎՈՐ ՀՈՒՇԱՐՁԱՆՆԵՐԸ

Ա. ՊԱՏՄԱԿԱՆ ՀԱՄԱՌՈՏ ԱԿՆԱՐԿ

Եղվարդ գյուղը գտնվում է այժմյան Աշտարակի շրջանում, պատմական Հայաստանի Արարատյան նահանգի Արագածոտն գավառում։ Երբեմն նա մտել է նույն նահանգի Նիգ գավառի և որոշ ժամանակ Կոտայք գավառի կազմի մեջ։ Գյուղը տեղավորված է մի ընդարձակ, լայնածավալ սարահարթի վրա, նրա հյուսիսային մասում, որն արևելյան կողմից եզերվում է Հրազդանի, իսկ արևմտյան կողմից Քասախի խորունկ ձորերով։ Հյուսիսային կողմից Արայի լեռն է, իսկ հարավից «Ուշքափալարա լեռնագագաթները։

Տեղում պահպանված բազմաթիվ և խիստ արժեքավոր հնության մնացորդները վկայում են, որ Եղվարդը եղել է Հայաստանի հնագույն և նշանավոր բնակավայրերից մեկը։ Մատենագրական աղբյուրներում նշվում է որպես քաղաքավան, գյուղաքաղաք, մեծ դաստակերտ և նույնիսկ քաղաք։ Եղվարդը առաջին անգամ հիշատակվում է Զ դարում որպես հայրենիք Մովսես Բ կաթողիկոսի։ Այդ առթիվ Ստեփանոս Տարոնացի և Հովհաննես Դրասխանակերտցի պատմիչների մոտ կարդում ենք.

«Եւ զկնի Տեառն Ներսիսի եկաց կաթուղիկոս Հայոց Տէր Յովհաննէս ի գաւառէ Գարեղենից, ի գեղջէ Սիւնեցեղնոյ, ի վանականութենէ Թաթլոյ վանից՝ ամս ԺԵ։

Եւ զկնի սորա Տէր Մովսէս ի գաւառէ Արագածոտնէ, ի գեղջէ Եղիվարդոյ՝ ամս Լ»[1]։

«Յետ սորա (Հովհաննես Գարեղենեցուց—Հ. Ե.) ապա զՄովսէս զայրն Աստուծոյ, որ յԵղիվարդ գեղջէ (որ և սնեալ և ուսեալ ի Հայրապետանոցին Սրբոյ), կացուցանեն յԱթոռ Սրբոյ Գրիգորի»[2]։

Դրասխանակերտցին տեղեկացնում է նաև, որ այդ նույն Մովսեսի հայրապետության տասներորդ տարում և նրա իսկ հրամանով էր, որ 552 թվականին Դվին քաղաքում հրավիրված եկեղեցական ժողովը որոշում ընդունեց Հայոց առանձին տոմար-տարեթիվ սահմանելու մասին[3]։ Այդ նույնի մասին պատմում է նաև Ուխտանես եպիսկոպոս պատմիչը. «Իսկ երանելի Հայրապետն Մովսէս՝ նմանեալ մեծին Մովսիսի նախամարգարէին՝ քաղցր և հեզ առ ամենեսեանս։ Սա էր ի գաւառէ Արագածոտնէ, ի գեղջէ Եղիվարդոյ։ Սա կացեալ յԱթոռ իւրոյ Հայրապետութեան ամս երեսուն։ Ի սորա տասներորդի ամի աթոռակալութեանն՝ ի սորին հրամանէ եղաւ թուականութիւնս Հայոց Թորգոմեան՝ և պատճէն տոմարի հայ ամսոյ»[4]։

Եղվարդ գյուղի սահմաններում պահպանված հուշարձանների բազմաթիվ մնացորդները վկայում են, որ նա որպես բնակավայր գոյություն է ունեցել դեռ շատ դարեր առաջ։ Այդ նույն Զ դարի վերջերին հիշ-

1 Ստեփանոսի Տարօնացւոյ Ասողկան «Պատմութիւն տիեզերական», Ս. Պետերբուրգ, 1885 թ., էջ 83։

2 Յովհաննու կաթողիկոսի Դրասխանակերտացւոյ «Պատմութիւն Հայոց», Թիֆլիս, 1912 թ., էջ 65։

3 Նույն տեղում։

4 Ուխտանէս Եպիսկոպոս, «Պատմութիւն Հայոց», հատված երկրորդ, Վաղարշապատ, 1871 թ., էջ 5—6։

վում է Եղվարդի ավագ երեցը՝ Հավիտյան անունով։

Այնուհետև Եղվարդը հիշվում է է դարի սկզբներին՝ հույն-պարսկական պատերազմների կապակցությամբ։ Սեբեոս պատմիչը տեղեկացնում է, որ հունական զորքը բանակ էր դրել Եղվարդում, իսկ պարսկական զորքը՝ Դվին քաղաքում[5]։

Եղվարդն ավելի բարգավաճեց ու պայծառացավ է դարի երկրորդ կեսում, երբ կառուցվեց Եղվարդի վանքը։ Հովհաննես կաթողիկոս Դրասխանակերտցին, խոսելով Գրիգոր Մամիկոնյան իշխանի կողմից (որը մարզպան էր դարձել Մավիա ամիրապետի համաձայնությամբ, փոխարինելով իր եղբայր Համազասպին), Արուճ ավանում (այժմյան Թալիշ գյուղը Աշտարակի շրջանում) չքնաղ եկեղեցի և արքունի պալատ կառուցելու մասին, ավելացնում է, որ «Շինեալ նահ նուիրանոց ուխտի կրօնաւորական դասուց. յորում և եկեղեցի պայծառապաճոյճ ի նմա յարդարեալ ըստ յարեալեցի կուսէ դաստակերտին մեծի Եղիվարդայ՝ տուն բնակութեան կուսակրօնից ղնա հաստատէ ի փրկութիւն հոգւոյ իւրոյ»[6]։

Այնուհետև Եղվարդը հիշվում է Թ դարում, Մաշտոց կաթողիկոսի կապակցությամբ, որը նույնպես Եղվարդ գյուղաքաղաքից էր։ Գրիգոր քահանայի որդին, ինչպես այդ մասին տեղեկացնում է Ստեփանոս Տարոնացի պատմիչը. «Յաւուրս Սմբատայ՝ յՅԽԶ (897) թուականին վախճանի Տէր Գէորգ կաթողիկոս հայոց և փոխանորդէ յԱթոռ Հայրապետութեանն այրն Աստուծոյ Մաշտոց։ Սա էր հայրենեաց յԱրագածոտն գաւառէ, ի գեղջէ Եղիվարդայ»[7]։

Տարոնացու տված տեղեկություններից հետո, ոչ մի հիշատակություն չկա Եղվարդի մասին մինչև ԺԲ դարի վերջերը։ Թե ինչ վիճակում են եղել ավանն ու վանքը արաբական և սելջուկյան արշավանքների ժամանակաշրջանում, պարզ չէ։ Վանքի վրա փորագրված մի արձանագրությունից իմացվում է, որ 1191 թվականին շեն ու հաստատ էր վանքը։ Ահա այդ արձանագրությունը.

ԵՂՎԱՐԴԻ ՄԵԾ ՎԱՆՔԻ ԿԱՆԳՈՒՆ ՄԱՍԻ ԱՐՏԱՔԻՆ ՑՆՔԸ

[5] «Պատմութիւն» Սեբէոսի Եպիսկոպոսի ի Հերակլիոս, Թիֆլիս, 1913 թ., էջ 116։

[6] Դրասխանակերտցի, էջ 90—91։

[7] Ասողիկ, էջ 159—160։

«Այս գիր արձանի է Արտաշրի՝ որդի Վարշարա, որդւոյ Ապլվարդայ, ի թվ. ՌԽ: Կամեան Աստուծոյ ես Արտաշիր անարժան ծառայ Քրիստոսի եռու զիմ գանձագին այգիսն ի սուրբ տանարս վասն փրկութեան ճոգւոյ իմոյ: Եւ առաջնորդք սորա ճաստատեցին ի տարեջն ԺԷ աւր ժամ՝ զԺԲ. ինձ և զե. Սսին: Եթէ ոք խափանէ զանէծս զՅուդայի առցէ»:

Ապա շուրջ մեկ և մի քառորդ դար տեղեկություններ իսպառ բացակայում են Եղվարդի մասին։ 1318 թվականին Եղվարդում գրված մի ձեռագիր Ավետարանի հիշատակարանից իմացվում է, որ Եղվարդ ավանը և Եղվարդի վանքը մեծ չափով տուժել են մոնղոլական արշավանքների առաջին շրջանում՝ քանդվել, ավերվել և ամայացել են և նորից վերականգնվել, ինչպես ասվում է հիշատակարանում։ Անհրաժեշտ ենք համարում մեջ բերել այդ հիշատակարանի համապատասխան մասը.

«... Արդ, դրեցաւ սայ ի թուականութեանս Հայկազեան տոմարիս եաթն հարիւր և վաթսուն և եաթն (1318), ի խնդրոյ հրաշափառ և հաւատարիմ ծառայիցն Քրիստոսի՝ պարոն Ազիզպէկին և ամուսնոյ իւրոյ պարոն Վախախին...

... Եկեալ տեսին զբնակութիւն նոցա աւերեալ և կործանեալ. և զաւանս իւրեանց զեղիվարդ՝ բնակութիւն աւազակաց. և կամակցութեամբն ամենակալին Աստուծոյ զամենայն զպարտսն հատուցին և վերստին նորոգեցին ըստ բազում տղնութեամբ չարչար վրտանկաւք, մի մի ժողովել զցրուեալսն. բազում և յոլով աշխատութեամբ ծառայութիւն կատարելով մեծափառ տէրանց իւրեանց՝ մեծին Շահինշահի և Խոյանդղային, և հեզարար և հնազանդարար շրջէին ընդ նոսա, մինչև ամենայն զիմաւք հաստատեցին զմեծ մենաստանս՝ ղեղիվարդ, շինել զամենայն քանդեալս։ Եւ յետ այսր ամենայնի Հոգին Սուրբ շարժեաց ընդնոսայ, և սկսան արդիւնս մեծամեծս մի մի յաւելոյր աստուածատիպ շնորհ ողորմածութեանն և կամք շինութեան գտուս հոգւոյ և մարմնոյ»[8]։

Հենց այդ նույն ժամանակ է, որ վերը նշված Ազիզբեկ և Վախախ ամուսինները ձեռնամուխ են լինում երկրորդ վանքի կառուցմանը Եղվարդում, անվանելով այն Փոքր վանք, որովհետև Գրիգոր Մամիկոն-



ԵՂՎԱՐԴԻ ՄԵԾ ՎԱՆՔԻ ԳԱՆԳՈՒՆ ՄԱՍԻ ՆԵՐՍԻ ՏԵՍՔԸ

[8] Լ. Ս. Խաչիկյան, «ԺԴ դարի հայերեն ձեռագրերի հիշատակարաններ», Երևան, 1950 թ., էջ 139—140։

յան իշխանի կողմից կառուցված վանքը անվանվում է «Մեծ մենաստան Եղիվարդ»։ Այդ նոր վանքի կառուցման մասին խոսվում է մեջ բերված հիշատակարանի շարունակության մեջ հետևյալ ձևով.

«Քաղցրատես և ողորմագութ պարոնէրս մեր Ազիզպէկն և Վախախն սկսան շինել վանս ի կորոյ՝ զուխտն Սրբոյն Յակոբայ՝ յանուն սուրբ առաքելոցն և զարդարեցին գնայ մեծամեծ վայելչութեամբ, ստացան բաղում այգիս շուրջ գրնակութեամբն ուխտին։ Եւ դներքս եկեղեցոյն զարդարեցին քանդակով. նաղաշութեամբ ձեռացուցին զպատկեր Ամենափրկչին, և զմաւրն իւրոյ Աստուածածնին, և զառաքելոց, և զմարգարէից, միջնորդ արարեալ զնոսա առ բարեգութն Աստուած։ Եւ մեծագին գրեանս ազգի ազգի, և մեծագին գդեստիւք զարդարեցին զնայ և արարին զնա բնակութիւն կուսանաց, և եռուն զամենայն պէտս զգեստից և կերակրոց. և ոչ ինչ կարաւոք եղեալ յամենայնէ, զոր ինչ պիտոն էր՝ հոգևոր և մարմնաւոր։ Եւ բարեպաշտ պարոնն Ազիզպէկ և աստուածասէր տիկինն մեր Վախախն՝ ուրախութիւն և ցնծութիւն մեծ արարին բաղում գաւառաց և մեծ մենաստանիս Եղիվարդայ...

Արդ. գրեցաւ Սուրբ Աւետարանս ձեռամբ մեղսասէր քահանայի Ներսեսի, ի յԱյրարատեան գաւառիս, ի մեծ մենաստանիս յԵղիվարդ, ընդ հովանեաւ Սուրբ Աստուածածնիս, և Սուրբ Գրիգորիս, և Սուրբ Յակոբիս, և այլ միահամուռ սրբոց առաքելոց։ Հրամանաւ և արդեամբք պարոն Ազիզպէկին և Վախախին, յիշատակ ինքեանց և ծնողաց իւրեանց՝ Աւագ պարոնին և Թամարին, Խաթ Ասլանին և Ըռուղուքանայ, և զաւակաց իւրեանց...»[9]։

Ազիզպէկ և Վախախ ամուսինները չեն սահմանափակվում Եղվարդ ավանը և Մեծ վանքը վերականգնելով ու վերահաստատելով, ինչպես և Փոքր վանքը կառուցելով, այլև ձեռնամուխ են լինում հին ջրանցքի վերականգնմանը, նպատակ ունենալով բնակչությանը ապահովելու խմելու և ոռոգելու ջրով։

Պատմությանը հայտնի է, որ դեռ Ուրարտացիների տիրապետության ժամանակ հատուկ ջրանցք է փորված եղել Քասախ գետից մինչև Եղվարդ, որի որոշ մասն անցնելիս է եղել գետնուղով։ Սակայն հետագայում այդ ջրանցքը քայքայվել ու անգործադրելի էր դարձել։ Ահա այդ ջրանցքի վերականգնմանն է, որ ձեռնամուխ են լինում հիշյալ ամուսինները, ինչպես այդ մասին տեղեկացվում է վերը մեջ բերված հիշատակարանում»[10]։

Դրանից հետո, շուրջ մեկ դար, ոչ մի տեղեկություն չկա Եղվարդի մասին։ 1413 թվականին Եղվարդում ավարտված մի ձեռագրի հիշատակարանում հիշվում է Եղվարդի վանքի առաջնորդ Սիմեոն բարեպաշտ։ Այդ նույն Սիմեոն առաջնորդի մասին հիշվում է նաև 1414, 1427, 1428, 1444 թվականներին Եղվարդում գրված հիշատակարաններում։

Ապա 1464 թվականին Եղվարդում գրված մի Մաշտոցի հիշատակարանում Եղվարդի վանքի առաջնորդ է հիշվում Մանվել արքեպիսկոպոսը. «Արդ. գրեցաւ սա ի գաւառիս Արարատեան, ի գեղաքաղաքիս Եղիվարդ, ընդ հովանեաւ Սուրբ Աստուածածնիս, և Սուրբ Յակոբիս, և Նշխարհաց սուրբ կուսանաց, և կենսունակ լուսատու սուրբ Նշանիս, յառաջնորդութեան տեղւոյս Տէր Մանուէլ արհեպիսկոպոսի, որդի պարոն Աւագի և Թոռ պարոն Ազիզբէկին...

Գրեցաւ ձեռամբ անարհեստ և փծուն գրչի Մաթէոսի, ի թուականութեան մեր ՋԺԳ, ի կաթուղիկոսութեան Տէր Զաքարիին, ի յԱթոռ Սուրբ Էջմիածնին Վաղարշապատուս»[11]։

Այդ նույն Մատթեոս գրիչը 1465 թվականին Եղվարդում գրում է մի այլ Ավետարան, որի հիշատակարանը հավաստում է. «Եւ արդ, գրեցաւ Սուրբ Աւետարանս ի գաւառս Արարատեան, ի փառաւոր վանքն Եղիվարդայ, ձեռամբ յոգնամեղ և փծուն գրչի Մատթէոսի, ի կաթողիկոսութեան Տեառն Յովսեփի, որ յայսմ ամի նստաւ յԱթոռ Հայրապետութեան... իշխանութեան Ջհանշի՝ որդւոյ Ուսուֆի, ի վերակացութեան երկրիս պարոն Վիշելի. ի մեծ թուականիս Հայոց ՋԺԴ...»[12]։

Հիշատակագրական աղբյուրների վկայությունները պարզ երևում է, որ ԺԵ դարը համեմատաբար խաղաղ և ստեղծագործ աշխատանքի մի ժամանակաշրջան է եղել Եղվարդ ավանի և նրա վանքերի պատմության մեջ, մանավանդ Սիմեոն և Մանվել արքեպիսկոպոսների առաջնորդության ժամանակ։

Բազմաթիվ գրիչ-մատենագիրներ իրենց ձեռագիր գրքերը սկսելով մի որևէ վայրում, քաղաքական աննպաստ պայմաններում, թափառել են այլևայլ վայրեր, կյանքից հալածված, իրենց հետ տանելով անավարտ մատյանները, ի վերջո ավարտել են դրանք Եղվարդի վանքերում։ Այդ մասին որոշակի

---

9 Լ. Ս. Խաչիկյան, «ԺԴ դարի հայերեն ձեռագրերի հիշատակարաններ», էջ 110—112։

10 Նույն տեղում։

11 Լ. Ս. Խաչիկյան, «ԺԵ դարի հայերեն ձեռագրերի հիշատակարաններ», երկրորդ մաս (1451—1480), Երևան, 1955 թ., էջ 215։

12 Նույն տեղում, էջ 232։

և պարզ գաղափար է տալիս 1469 թվականին գրված «Մեկնութիւն Կաթուղիկէից Սարգսի Շնորհալւոյ» վերտառությունը կրող ձեռագրի հիշատակարանը[13]։

Մինչև ԺԷ դարի սկիզբները տեղեկությունները Եղվարդի մասին խոպան բացակայում են։ Զաքարիա սարկավագը պատմելով ԺԵ դարի սկիզբներին, պարսից Շահաբաս մեծի ժամանակ տեղի ունեցած թուրք-պարսկական պատերազմների մասին, տեղեկացնում է, որ այդ պատերազմի հետևանքով մեծ ավերածություններ, կոտորած, ավար և գերեվարություն տեղի ունեցավ նաև Եղվարդում[14]։

Փոքր վանքի ներսում, մկրտության ավազանի եզրին փորագրված մի փոքր արձանագրությունից էլ հասկանալի է դառնում, որ վերը նշված թուրք-պարսկական պատերազմների ժամանակ մեծ չափով տուժել է

ԵՂՎԱՐԴԻ ՓՈՔՐ ՎԱՆՔԸ ՀԱՐԱՎ-ԱՐԵՎՄՈՒՏՔԻՑ

13 Լ. Ս. Խաչիկյան, «ԺԵ դարի հայերեն ձեռագրերի հիշատակարաններ», էջ 283։

14 Զաքարիա սարկավագի «Պատմութիւն», հատ. Ա, Վաղարշապատ, 1870 թ., էջ 85։

նաև այս վանքը, որը 1628 թվականին նորոգել է ոմն Հովսեփ. «Աւսէր նորոգեաց. թվ. ՌՀԷ»:

Եղվարդ ավանը և վանքը առավել մեծ չափով տուժեցին Թուրք-պարսկական 1638 թվականի պատերազմի ժամանակ։ Գրիգոր Դարանաղեցու վկայությամբ, պարսկական զորքը բանակել էր Եղվարդ գյուղում, Թուրքերը հարձակվում են նրանց վրա, մեծ կոտորած սարքում, չարաչար պարտություն մատնելով պարսիկներին։ Ապա այրում են Եղվարդի վանքը, մեծ ավերածություններ կատարում Եղվարդում և շրջակա գյուղերում, կողոպտում ու կոտորում դրանց բնակիչներին, մի մասին էլ գերի վարում և շարունակում իրենց արշավանքը Ապարանի վրայով դեպի հարավ Կարին. «Եւ ապա յԵղիվարդոյ դեղչէն չուեալ գնացին, բայց գԵղիվարդի վանքն այրեցին, որ զարմանալի շէնք ունէր, որ Երևանու Երկերեսին կու նմանէր։ Եւ գնացին աւարաւ և գերութեամբ ի վերայ Ապարանից վերայովն դէպ ի Կարս և ի յԱրզրումն, որ լցաւ երկիրն ազաղակաւ»[16]։

Թուրք-պարսկական այս պատերազմի հետևանքով է, որ քայքայվում է Եղվարդի վանքը և դադարում այնուհետև եպիսկոպոսանիստ հանդիսանալուց։

ԺԷ դարի կեսերին Եղվարդը հիշատակվում է ոռոգելի չրի պատճառով Եղվարդեցիների և զարաչորանցիների կամ սև-ավերցիների միջև տեղի ունեցած վեճերի կապակցությամբ, որի ժամանակ Ղարաչորանի տեր Հապուշ Ղասումը, որը պարսից Ղաջարների թագավորական տոհմից էր, սպանում է Եղվարդցի Ավագին, ինչպես այդ մասին տեղեկացնում է Զաքարիա սարկավագ պատմիչը[18]։

Նույն Զաքարիա պատմիչի վկայությամբ, Գողթն գաւառի Շահկերտ գյուղի գյուղապետ Մալխասը իր դուստր Թամամին բռնությամբ կնության է տալիս Նախիջևանի խան Մահմադ-Ըոզա խանի որդի Մուրթուզ-զուլի խանին, որը Երևանի խանի տեղապահն էր։ Երբ Թամամին բերում են Երևան, նա գիշերը իրեն խանի պալատից ցած է գցում Հրազդանի ձորը և գաղտագողի գնում ու պատըսպարվում է Եղվարդում։ Սակայն գյուղապետ Սահակի կողմից բռնվում և խեղդամահ է արվում։ Ապա գյուղի Մկրտիչ անուն երեցը նրա դին թաղում է Փոքր վանքի հարավային կողմում, 1691 թվականին[17]։

ԺԸ դարի սկիզբներին Եղվարդի վանքի առաջնորդ է հիշվում Կիրակոս վարդապետ Եղվարդեցին, որին հայոց Ալեքսանդր կաթողիկոսը եպիսկոպոս է ձեռնադրում 1708 թվականին, չնայած այն բանի, որ Եղվարդը դեռ նախորդ դարի կեսերից դադարել էր եպիսկոպոսանիստ վայր լինելուց[18]։

Պատմական աղբյուրների տեղեկություններից պարզ է դառնում, որ Եղվարդը ռազմական ընդհանուր թատերաբեմ է հանդիսացել Թուրք-պարսկական հսկա զորաբանակների միջև նաև ԺԸ դարի առաջին կեսում։ Այդ ժամանակաշրջանի առաջին ճակատամարտը Թուրք-պարսկական բանակների միջև տեղի է ունեցել 1725 թվականին, մարտ ամսին, որի ժամանակ պարսկական բանակը մեծ պարտություն է կրում, տալով տասնյակ հազարավոր սպանվածներ միայն։

Հաջորդ ճակատամարտը տեղի է ունենում 1735 թվականին, ուր փառավոր հաղթանակ են տանում պարսիկները։ Պատերազմական գործողությունները սկսվում են հունիսի 8-ին, նախ Եղվարդին մոտիկ գտնվող Մուրադ-Թափա կոչվող բլուրի սահմաններում, որի վրա իր արքայական վրանն էր խփել պարսից Նադիր-Շահ Թագավորը, ապա հետզհետե ծավալվելով, ընդգրկում է մի հսկայածավալ տարածություն՝ Հրազդան գետից մինչև Ախուրյան գետը։ Թուրքական բանակը ծանր պարտություն է կրում, տալով ավելի քան 40 000 միայն սպանվածներ, սպանվում է նաև բանակի գլխավոր հրամանատար Քյոփրուլու Արդուլլա փաշան։

Աբրահամ Կրետացի կաթողիկոսը, որն ականատես է եղել 1735 թվականի Թուրք-պարսկական պատերազմին, նկարագրում է Եղվարդի մոտ տեղի ունեցած այդ ճակատամարտը[19]։

Թուրք-պարսկական այդ պատերազմները աղետալի հետևանքներ ունեցան Եղվարդի համար։ 1735 թվականին Եղվարդի մոտ տեղի ունեցած խոշոր ճակատամարտի հետևանքով, ավերվում ու ամայանում է նաև Եղվարդի վանքը, դադարելով այնուհետև որպես մենաստան գոյություն ունենալուց։

Ավելի ուշ վանքի ավերակներին մոտիկ փոքրիկ գյուղ է հիմնադրվում։ Եվ որովհետև ամեն տարի վանքի ավերակների մեջ անհամար ադամանդներ բույն էին դնում, ձու

---

[16] Գրիգոր վարդապետի Կամախեցոյ կամ Դարանաղեցոյ «ժամանակագրութիւն», Երուսաղեմ, 1915 թ., էջ 579։

[16] Զաքարիա սարկաւագի «Պատմութիւն», հատ. Բ., Վաղարշապատ, 1870 թ., էջ 116—117։

[17] Նույն տեղում, էջ 128—129։

[18] Հ. Ղ. Ալիշան, «Այրարատ», Վենետիկ, 1890 թ., էջ 199։

[19] Աբրահամ կաթողիկոսի Կրետացոյ «Պատմութիւն տնցիցն իրոյ և Նադր-Շահին Պարսից», Վաղարշապատ, 1870 թ., էջ 18—19։

ածում և ձագեր հանում, ուստի գյուղի բնակիչները, ինչպես վանքը, այնպես էլ իրենց հիմնադրած նոր գյուղը կոչում են Ղարդա (ադոավի) վանք։

Մատենագրական աղբյուրներում չի նշվում այն մասին, թե Եղվարդի վանքը, բազմաթիվ այլ վանքերի ձևով, ունեցել է իր հատուկ հոգևոր դպրոցը։ Սակայն հիշատակագրական աղբյուրներից պարզ երևում է, որ Եղվարդի վանքում, ամենօրյա եկեղեցական արարողություններին և ծիսակատարություններին զուգընթաց, մեծ և բեղմնավոր աշխատանքներ են տարվել նաև գրչագրության և ուսումնա-կրթական գործերի ուղղությամբ։ Բազմաթիվ ձեռագրեր գրվել են Եղվարդի վանքում։ Բացի ինքնուրույն գրչագրությունից, կատարվել է նաև այլ վայրերում գրված գրչագրերի նվիրատվություն Եղվարդի վանքին։ Այդ մասին են վկայում 1466 և 1468 թվականներին գրված Ավետարանների հիշատակարանները, որոնց համապատասխան հատվածները մեջ ենք բերում ստորև։

«... Արդ, եղև սկիզբն և աւարտ գրչութեան սորա ի գեղաքաղաքն Եղիվարդ, ի կաթուղիկոսութեան Տեառն Գրիգորի, ի թվ. Հայոց ՋԺԵ. (1466), ի ղանութեան Ջհանշահին։ Զոր ցանկացող եղեալ յայս հոգիարուխ Սուրբ Աւետարանիս ոմն քրիստոսասէր քահանա Մատթէոս անուն, բազում ջանիւք և աշխատութեամբ, ծախեալ զամենայն ինչս իւր և գնեալ զՍուրբ Աւետարանս՝ յիշատակ հոգոյ իւրոյ...»[20]։

«... Արդ, եղև աւարտ գրչութեան սորա ի գեղաքաղաք Եղիվարդ, ի կաթուղիկոսութեան Տեառն Գրիգորի, ի թվ. Հայոց ՋԺԵ. (1468), ի ղանութեան Ջհանշահին, ի խնդրոյ Մատթէոս քահանայի...»[21]։

Թե ե՞րբ է սկիզբ առել գրչության գործը Եղվարդի վանքում, հայտնի չէ ստույգ կեր-



ԵՂՎԱՐԴԻ ԳՅՈՒՂԻ ԿԱԹՈՂԻԿԵ ԵԿԵՂԵՑԻՆ ՀԱՐԱՎ-ԱՐԵՎԱՄՈՒՏՔԻՑ

պով։ 1427 թվականին Մեծոփա վանքում գրված «Մեկնութիւն Աւետարանին Ղուկասու՝ Սարգսի Կունտիս» վերտառությունը կրող ձեռագրի հիշատակարանում ասվում է, որ այն ընդօրինակված է 230 տարի առաջ Եղվարդի վանքում գրված օրինակից, որն իր հերթին ընդօրինակված է եղել առաջին ձեռագիր օրինակից[22]։

Հիշատակարանում ցույց է տրվում ոչ միայն ձեռագրի գրչության ժամանակը՝

20 Լ. Ս. Խաչիկյան, «ԺԵ դարի հայերեն ձեռագրերի հիշատակարաններ», երկրորդ մաս, էջ 244։

21 Նույն տեղում, էջ 272։

22 Նույն տեղում, առաջին մաս, էջ 359—360։

1427 թվականից 230 տարի առաջ, այսինքն 1197 թվականին, այլն նշվում են նրանց դրիչները՝ Դավիթը և Ներսեսը, որոնք Սարգիս վարդապետի աշակերտներն էին։ Պարզ է, որ այդ ժամանակ, ԺԲ դարի վերջերին, Եղվարդի վանքում զբաղվում էին ոչ միայն դրչագրությամբ, այլև կազմակերպված էր ուսուցման գործը, կային ուսուցիչներ և աշակերտներ, հետևապես գոյություն ուներ և դպրոց։

Հետագա դարերում հիշատակվում են Ներսես քահանան՝ 1318 թվականին գրված հիշատակարանում. Հովհաննես Եղնկացին՝ 1413 թվականին գրված ձեռագրի հիշատակարանում· Մատթեոս արիզան՝ 1465, 1469 թվականներին գրված ձեռագրերի հիշատակարաններում և ուրիշներ։

Եղվարդի վանքի ուսուցիչներից, բացի վերը հիշված Սարգիս վարդապետից, հիշատակության արժանի են նաև Մանվել եպիսկոպոսը և Սիմեոն բարունապետը։ Մի շարք հիշատակարաններում շատ գովեստով է խոսվում Սիմեոնի մասին, որպես մեծ գիտունի և ուսուցչապետի[23]։

Առանձնապես հետաքրքիր և ուշագրավ է 1444 թվականին գրված Հայսմավուրքի հիշատակարանը, ուր գովեստով խոսվում է Սիմեոնի մասին և ուր նշվում են Եղվարդի վանքում ուսումնասիրվող առարկաները. «... Բաղում կրօնաւորս և աշակերտեալ մանկունս եկեղեցւոյ ժողովեալ յուսացանել զՀինն և զնոր մատեան Աստուծաշունչ Գրոց, զսուրբ և զարտաքին փիլիսոփայութիւն՝ ամս տասնս»[24]։

Հիշատակագիրը Սիմեոնին անվանում է «մեծ վարժապետ Հայոց»։ Դա ինքնին վկայում է ոչ միայն հատուկ դպրոցի գոյության մասին Եղվարդի վանքում, այլև այդ դպրոցի մեծության ու հռչակի մասին։

Այդ Սիմեոն վարդապետը հետո իբրև ուխտավոր գնում է Երուսաղեմ և վերադառնում Այրի վանք, ապա հաստատվում Զագավանքում։ Վախճանվում է 1428 թվականին։

Բ. ՀՈՒՇԱՐՁԱՆՆԵՐԻ ՊԱՏՄԱ-ՃԱՐՏԱՐԱՊԵՏԱԿԱՆ ՆՇԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆԸ

1. Եղվարդի Մեծ վանքը.—Գտնվում է գյուղից երեք կիլոմետրաչափ դեպի հյուսիս-արևելք, Արայի լեռան ստորոտներում։ Բաղկացած է միայն մի եկեղեցուց, որն արձանագրությունների մեջ կոչվում է Ս. Զորավար, իսկ հիշատակարաններում՝ Ս. Թեոդորոս։ Այդպես օրինակ, Մաշտոց կաթողիկոսի վարքի մասին նրա աշակերտ Ստեփանոսը 894 թվականին գրել է, թե նա էր «ի ժառանգաւորաց մենաստանին՝ որ անուամբ Սրբոյն Թէոդորոսի էր. և ի զօրանալ բռնակալութեանն տաճկաց ի վերայ Գաւառին (յորում էր Եղվարդն), ելեալ հայր նորա ի տիս մանկութեան և գնաց բնակեցաւ պանդխտութեամբ ի դաւառին Սոգիոյ»[25]։ Մի ուրիշ հիշատակարանում, գրված 1427 թվականին Մեծոփա վանքում ասվում է. «Եւ աւրինակն գրեալ էր ի սուրբ Եղիվարդու, ի դուռն Սրբոյ Թէոդորոսի»[26]։

Եկեղեցու կառուցման ճիշտ տարեթիվը հայտնի չէ. պատմական աղբյուրների վկայությամբ այն կառուցել է Գրիգոր Մամիկոնյան իշխանը։ Վարդան վարդապետը տեղեկացնում է, որ Գրիգոր Մամիկոնյան իշխանը, Անաստասի կաթողիկոսության ժամանակ, կառուցում է Արուճի կաթողիկեն և Եղվարդի վանքը.

«Վախճանեալ Ներսիսի մեծի պատրիարքի, թաղի յիւրում ձեռակերտին, և առնու զԱթոռ Անաստաս, սենեկապետն Ներսիսի, որ էր Ակոռոյ, որ նորին հրամանաւ շինէր զՍուրբ Գրիգորն։ Մինչ էր նա ի Տայս Յաւուրս սորա շինեաց Գրիգոր Մամիկոնեան զկաթողիկէն Արճոյ, և զվանքն Եղիվարդայ»[27]։

Սեբեոս պատմիչի վկայությամբ, Անաստասը հայոց կաթողիկոս է դառնում 120 (671) թվականին, «Իսկ Ներսիսի կացեալ ամս տասն, յաջորդէ զԱթոռն Անաստաս ի 120 թուին, որ էր սենեկապետ Ներսիսի, ի գաւառեն Մասեաց ոտոյ, ի գեղջէ Ակոռոյ»[28]։

Կիրակոս Գանձակեցի պատմիչն էլ իր հերթին տեղեկացնում է, որ Գրիգոր Մամիկոնյան իշխանը Արուճի տաճարը կառուցում է Անաստասի կաթողիկոսության հինգերորդ տարում, այսինքն 125 (676) թվականին[29]։

Ուրեմն Գրիգոր Մամիկոնյանը Եղվարդի վանքը կառուցած պետք էլինի 676 թվականից հետո։ Եվ որովհետև Գրիգոր Մամիկոնյանը Հայաստանի կառավարիչ է եղել մինչև իր մահը, 682 թվականը, ապա դրանից պարզ է դառնում, որ Եղվարդի վանքը պետք է կառուցված լինի 676—682 թվականների ժամանակամիջոցում։

---

25 Հ. Ղ. Ալիշան, «Այրարատ», էջ 199։

26 Լ. Ս. Խաչիկյան, «ԺԵ դարի հայերեն ձեռագրերի հիշատակարաններ», էջ 360։

23 Լ. Ս. Խաչիկյան, «ԺԵ դարի հայերեն ձեռագրերի հիշատակարաններ», առաջին մաս, էջ 134։

24 Նույն տեղում, էջ 560—561։

27 «Հնաւրէնութեան պատմութեան Վարդանայ վարդապետի յուսաբանեալ», Վենետիկ, 1862 թ., էջ 70։

28 Սեբեոս, էջ 285։

29 «Պատմութիւն Հայոց արարեալ Կիրակոսի վարդապետի Գանձակեցւոյ», Թիֆլիս, 1909 թ., էջ 60։

Եղվարդի Մեծ վանքը կամ Ս. Զորավար. Ս. Թեոդորոս կոչվող եկեղեցին կենտրոնագմբեթ ձևի մի կառուցվածք է, որի հատակագիծը ընդհանուր առմամբ կլոր է, ներսից վարդաձև-աբսիդային՝ ութ կիսակլոր աբսիդներով, իսկ արտաքուստ դրանց համապատասխան ութակող։ Գեպի արևելք, արևմուտք, հյուսիս և հարավ դարձած կողերի մեջ բացվում են մեկական մեծ լուսամուտ՝ կամարակապ գագաթով և քանդակազարդ պսակներով. իսկ մյուս չորս կողերի մեջ փորված են կամարակապ դագաթով շատ մեծ խորշեր։



ԵՂՎԱՐԴ ԳՅՈՒՂԻ ՄԻԱՆԱՎ ԲԱԶԻԼԻԿԱՅԻՊ ԵԿԵՂԵՑՈՒ ՄՆԱՑՈՐԴՆԵՐԸ

Աբսիդների միացման եզրերից ձգվում են կիսասյուներ՝ ամբողջական քարերից կազմված բներով, խարիսխներով ու խոյակներով։ Կիսասյուների բները գլանաձև են, խարիսխները ստորին մասում քառակուսի, վերևի մասը գնդաձև՝ ծայրերից քիչ սեղմված ձևով։ Խոյակները հատվածքում նույնպես քառակուսաձև են, իսկ կողերը պայտաձև։ Կիսասյուները միանում են աղեղնավոր կամարներով, որոնք եզերում են աբսիդների կոնխերը։

Ամենաարևելյան աբսիդը համեմատաբար մեծ է, ուր տեղադրված է բեմը՝ մեկ մետր բարձրությամբ։ Հնորոշ է այն, որ այդ աբսիդի եզրերի կիսասյուների խարիսխները դրված են բեմի վրա։

Գմբեթը, որից պահպանվել է թմբուկի հյուսիսային մասը և մասամբ արևելյան ու արևմտյան մասերը, ութակող է՝ եկեղեցու արտաքին կողերին համապատասխան և անմիջապես հենվում է ներսի աբսիդների կոնխերը եզերող կամարների վրա, ուստի անհամեմատ լայնանիստ է։ Գմբեթի վերարը ամբողջովին քանդված լինելու պատճառով, նրա իսկական ձևը որոշ չէ։

Հուշարձանը ավերակ վիճակում է՝ քանդված է հարավային մասը երեք աբսիդներով. պահպանվել են մյուս երեք կողերի պատերը հինգ աբսիդներով։ Պահպանված մասերը շարված են գորշ գույնի մաքուր տաշված քարերով, կրաշաղախի միացությամբ։ Քիվերը պատած են զամբյուղահյուս, շղթայաձև, խաղողի տերևաձև զարդաքանդակներով։ Ներսից ծեփված է եղել կրաշաղախով, որը մեծ մասամբ թափված է, պահպանված մասերի վրա նկատելի են որմանկարների և ներկագիր արձանագրությունների հետքեր։ Պատերի վրա նկատելի են Ա. Թ. ժ. տառերի ձևով նշաններ, որոնք

հավանաբար կառուցող վարպետների նշանները լինելու են։

Արտաքուստ, արևմտյան մուտքի երկու կողմերում, պատերի վրա նկատելի են պատի հետքեր և կրաշաղախի մնացորդներ, որոնք ենթադրել են տալիս, թե հետագայում այդ մուտքի առջևում կառուցվել է սրահ կամ ժամատուն։ Հավանական է, որ այդ սրահ-ժամատունը կառուցված լինի նրա ընդհանուր վերանորոգման ժամանակ 1318 թվականին, ինչպես այդ մասին մանրամասն տեղեկացնում է վերը բերված հիշատակարանը։

2. Գերեզմանատունը.—Գտնվում է վանքի արևմտյան կողմում, հիսուն մետրանոց հեռու։ Գերեզմանաքարերի մի մասը անմշակ է՝ բնական սալերի ձևով. մնացած մասը մշակված է դանդաղ ձևերով։ Գերեզմանատանը կան բազմաթիվ մահարձաններ, որոնց պատվանդանի մասերն են պահպանվել կիսավեր վիճակում, իսկ խաչքարերը վայր են ընկել ու շարդոտվել մանր կտորների։ Հին գերեզմանաքարերը թաղված են գետնի մեջ, մյուսները տեղահան են եղած։ Գերեզմանոցում կա մի փոքրիկ սովորական մատուռ՝ կիսավեր վիճակում։ Ինչպես այդ մատռան, այնպես էլ մահարձանների կառուցման ու մշակման ձևերը բնորոշ են ԺԳ—ԺԴ դարերին։

3. Հին բնակատեղին տարածվում է եկեղեցու շուրջը, ուր շենքերի հիմնապատերն են պահպանվել՝ ոմանք քարուկիր, ոմանք էլ առանց շաղախի շարվածքով։ Շենքերից ոմանք շատ մեծ են՝ սրահի ձևով։

4. Փոքր վանքը.— Գտնվում է գյուղի մեջ։ Սա նույնպես բաղկացած է մի եկեղեցուց, որը ձեռագրերի հիշատակարաններում կոչվում է Ս. Աստվածածին։ Ս. Հակոբ, Ս. Նշան, Ս. Ադաքելոց, Ս. Կուսանաց և Ս. Գրիգոր անուններով։ Եկեղեցու ստորին հարկի արևմտյան պատի վրա, մուտքից հարավ փորագրված արձանագրություններ նույնպես հաստատում է, որ եկեղեցին կոչվել է առաքյալների անունով. «Յիշեցէք զմիաբան սուրբ առաքելոցն»։ Նույն մուտքի հյուսիսային կողմում փորագրված արձանագրությունից էլ իմացվում է, որ եկեղեցին կամ վանքը կոչվելիս է եղել նաև Ս. Աստվածածին. «Շնորհիւն Աստուծոյ ես, ու Սարգիս միաբան[ներեցաք] սուրբ ուխտիս] և տվեալ



ԵՂՎԱՐԴԻ ԳՅՈՒՂԻ ՄԵՋ ԳԵՐԵԶՄԱՆՈՑԻ ՄԱՀԱՐՁԱՆՆԵՐ

տրդիւես ի յԱ[ստուածածին և սպ[ասատարս խոսոտց[ան :Բ: տր պատարագ] :Ա: Սարգսի :Ա: Խորիշա[նի]...»:

Այդ եկեղեցու կառուցման մասին ունենք և՛ վիմագրական և՛ մատենագրական տեղեկություններ։ 1318 թվականին գրված ձեռագրի հիշատակարանում, որը մեջ ենք բերել վերևում, ասվում է, որ Աղիզբեկ և Վախախ ամուսինները հիմքից «ի կորդոյ» կառուցում են Ս. Աստվածածնի կամ Ս. Հակոբի վանքը։ Եկեղեցու մուտքի վերևում փորագրված է. «Թվ. ՉԼ (1321) շինեցաւ եկեղեցիս», իսկ նույնի գմբեթի ներսում ներկագրով գրված է «ի թվին ՉՀԷ (1328) շինեցաւ»։ Այսպիսով ստացվում է, որ նրա հիմնադրումը տեղի է ունեցել 1318 թվականին և ամբողջ շենքի շինարարությունը ավարտվել է 1328 թվականին։

Եկեղեցին կենտրոնագմբեթ ձևի եռահարկ մի կառուցվածք է, որի ստորին հարկի հատակագիծը արտաքուստ ուղիղ քառանկյունի է, ներսից խաչաձև՝ ուղղակյուն խաչթևերով։ Արևելյան խաչթևն աբսիդային է, ուր տեղադրված է բարձր, խիստ ներս շեշտված բեմը։ Աբսիդի երկու կողքերին կան սովորական ձևով կառուցված խորաններ, որոնց մուտքերը բացվում են աբսիդի մեջ՝ իրար դիմաց։ Միակ մուտքը արևմտյան կողմից է՝ գեղեցիկ պարակալով և ճակատակալ մեծ քարով։ Ցուրաքանչյուր պատի մեջ բացվում է մեկական փոքր, կամարակապ գաղաթով լուսամուտ։

Երկրորդ հարկի հատակագիծը խաչաձև է՝ ուղղանկյուն խաչթևերով։ Ներսից, խաչթևերի միացման անկյուններից ձգվում են գլանաձև բներ, խարիսխներ ու խոյակներ ունեցող կիսասյուներ, որոնք միանալով կամարներով՝ իրենց վրա են կրում սյունազարդ գմբեթը։ Դուռն արևմտյան կողմից է՝ գեղեցկազարդ պարակալով, ուր բարձրանալիս են եղել փայտյա շարժական սանդուղքով։ Երկրորդ հարկի արևելյան, հարավային և հյուսիսային պատերի մեջ բացվում են փոքրիկ լուսամուտներ. հարավային պատի լուսամուտը զույգ է՝ բաժանված միջնասյունով։

Եկեղեցու գմբեթը հետագայում ծառայել է որպես զանգակատուն, ինչպես այդ երևվում է «Մեկնութիւն Կաթուղիկէից Թղթոց Սարգսի Շնորհալւոյ» վերտառությունը կրող ձեռագրի հիշատակարանից, որը մեջ ենք բերում ստորև.

«ի հայրապետութեան էջմիածնի Տէր Ռստակիսի (1465—1473) և իշխանութեան Ջհանշի (1437—1467), ի գաւառին Արարատեան, ի գիւղաքաղաքն Եղիվարդ, որ կայ առ ոտս հարաւ [Արայի լերին], ընդ հովանեաւ սուրբ և կմբեթային և խարսխայատակ և հաստակառոյց վիմօք շինեալ սուրբ զանկակատունս, որ յանուն սուրբ կուսանաց և աստուածընկալ յուսատու սուրբ նշանիս, յառաջնորդութեան վանիցս Նմին Տէր Մանուէլի և եղբօրն՝ Բեշքենի»[30],

Հուշարձանը շքեղորեն զարդարված է տարբեր ձևերի քանդակներով և զանազան կենդանիների ու թռչունների բարձրաքանդակներով, որոնք ճարտարապետ Թ. Թորամանյանի ասելով՝ «Հայաստանի 13 և 14 դարերի արվեստագետներին և ճարտարապետներին մեծ պատիվ կբերի»[31]։ Ամբողջ շենքը շարված է կարմրագույն տուֆի սրբատաշ քարերով, կրաշաղախի միացությամբ։ Արևմտյան կողմում, կից, ի դարի սկզբներին սկսել են կառուցել նոր եկեղեցի, որը սակայն մնացել է անավարտ։

5. Կաթողիկե եկեղեցին.—Գտնվում է գյուղի մեջ։ Շենքի կանգուն մնացած մասերը և տեղում պահպանված բեկորները ցույց են տալիս, որ նա հայկական ճարտարապետության հիանալի և անզուգական կոթողներից մեկն է եղել։ Կառուցել է Մովսես Եղվարդեցի կաթողիկոսը 541—566 թվականների ժամանակամիջոցում։ Եռանավ բազիլիկ տիպի խոշոր կառուցվածք է. ներսում պահպանվել են երկու շարք լոբսական մույթերի հիմնամասերը և դրանց հանդեպ հարավային և հյուսիսային պատերին կից ձգվող ուղղանկյուն որմնամույթերը։ Արևելյան կողմից ունի դուրս շեշտված աբսիդ՝ ներսից կիսակլոր, արտաքուստ հնգակող։ Աբսիդի երկու կողմերում կան մի-մի խորան, արևելյան կողմից ընդհանուր բացվածքով՝ սրահի նմանությամբ, իսկ արևելյան կողմից՝ կիսակլոր փոքրիկ աբսիդներ։

Ունի 7 հատ մուտքեր, որոնցից երեքական հատ բացվում են հարավային և հյուսիսային պատերից և մեկ հատ էլ արևմտյան պատից։ Ավերակ վիճակում է՝ քանդված են ծածկը, պատերի վերի մասերը, արևելյան աբսիդը և մույթերը. պահպանվել են պատերի ստորին մասերը մինչև երկու մետր բարձրությամբ։

Պատերն արտաքուստ շրջափակել է խոշոր տաշերով փորագրված կառուցողական արձանագրությունը, որից առանձին, անշան կտորներ են պահպանվել։ Պատերի պահպանված մասերը շարված են սև ու կարմիր գույնի խոշոր քարերով՝ կրաշաղախի միացությամբ։

---

30 Լ. Ս. Խաչիկյան, «Ժե դարի հայերեն ձեռագրերի հիշատակարաններ», երկրորդ մաս, Երևան, 1955 թ., էջ 232—233։

31 Թորոս Թորամանյան, «Նյութեր հայկական ճարտարապետության պատմության», հատ. երկրորդ, Երևան, 1948 թ., էջ 127։

6. Եկեղեցի.— Նույնպես գտնվում է գյուղի մեջ, Կաթողիկե եկեղեցուն մոտիկ՝ դեպի հյուսիս-արևելք։ Ավերակ վիճակումն է՝ պահպանվել են պատերի ստորին մասերը՝ մինչև մեկ և կես մետր բարձրությամբ։ Երբեմնի այդ հետաքրքիր հուշարձանը կառուցված է միանավ բազիլիկ ձևով։ Կողերի պատերը ներսից ունեն երկուական ուղղանկյուն որմնասյուներ, որոնց խարիսխները զարդարված են գծավոր քանդակներով, իսկ եկեղեցու ներսում ընկած մի որմնախոյակ ունի հավասարաթև խաչի և արմավենու զարդաքանդակներ։ Արևելյան

7. Գերեզմանատուն.— Բավականին ընդարձակ տարածություն բռնող այդ գերեզմանատունը գտնվում է գյուղի արևմտյան կողմում, բարձունքի ընդարձակ հարթության վրա։ Գերեզմանաքարերը սև և կարմիր գույնի տուֆից են, որոնց մեծ մասը մշակված է՝ ոմանք տափակ-հարթ երես ունեցող ձևով, ոմանք սուրանկյուն եռանկյան նման տանիք ունեցող ձևով և այլն։ Կան նաև անմշակ գերեզմանաքարեր՝ բնական սալաքարերի ձևով։

Գերեզմանատանը կան բազմաթիվ մահարձաններ, ոմանք խմբական, բաղկացած



ԵՂՎԱՐԴ ԳՅՈՒՂԻ ՄԵՍ ԳԵՐԵԶՄԱՆՈՑԻ ՄԱՀԱՐՁԱՆՆԵՐ

կողմից ունի կիսակլոր մեծ աբսիդ՝ շենքի ամբողջ լայնությամբ։ Երեք մուտքերից երկուսը բացվում են հարավային կողմից, իսկ մեկը՝ արևմտյան։ Պատերի պահպանված մասերը շարված են սև ու կարմիր գույնի տուֆի սրբատաշ քարերով՝ կրաշաղախի միացությամբ, որոնք արտաքին կողմից ծածկված են հողով։ Իր կառուցման ոճով և մշակման ձևերով բնորոշ է Ե դարին։ Այդ հուշարձանի մասին ճարտարապետ Թ. Թորամանյանը նույնպես ասում է, որ «միանգամայն 5-րդ դարի գործ է»։

պատվանդաններից ու կոթողներից։ Պատվանդանները գլխավորապես երկու կարգից են, ստորին կարգը ցածրադիր է, վերինը բարձրադիր ու քիվավոր։

Մահարձանների կոթողի մասերը կամ խաչքարերի ձևով են, կամ էլ մասսիվ ձևով շարված, որի արևմտյան կողմը խիստ գոգավոր է, ուր ագուցված է քանդակազարդ խաչքար։ Թոլոր խաչքարերն ու որոշ գերեզմանաքարեր ներկված են կարմիր գույնի ներկով։

Գերեզմանոցը քայքայված վիճակում է՝ գերեզմանաքարերը մեծ մասամբ թաղված

են գետնի մեջ, ոմանք ծածկված հողով։ Մահարձանները նույնպես մեծ մասամբ քանդված են, խաչքարերը վայր ընկած ու ջարդոտված, մի մասն էլ անհայտացած։ Գերեզմանատունը 6 դարից է։

8. Եկեղեցի.—Գտնվում է վերոհիշյալ գերեզմանատանը։ Միանավ բազիլիկ տիպի փոքրիկ կառուցվածք է՝ ամբողջապես ավերակ վիճակում։ Պահպանված պատերի ստորին մասերը և ներսում թափված բազմաթիվ բեկորները հավաստում են, որ շենքի հիմնապատերը շարված են անտաշ որձաքարերով, իսկ պատերի մնացած մասերը և ծածկը, որը թաղակապ է եղել՝ սև տուֆի տաշված քարերով՝ կրաշաղախով։ Արևելյան կողմից նկատելի են կիսակլոր աբսիդի հետքերը՝ շենքի ամբողջ լայնությամբ։ Ներսում կանգնեցված են սև գույնի տուֆից պատրաստված երկու հատ քառակող կոթող, որոնք բերված են այլ տեղից։ Թ. Թորամանյանի կարծիքով, դա հայկական հնագույն եկեղեցիներից է՝ բնորոշ Դ—Ե դարերին[31]։

9. Մահարձան-կոթող.—Գտնվում է գյուղի հյուսիս-արևմտյան եզրին, մեծ գերեզմանոցի դիմաց, ճանապարհի եզրին։ Բաղկացած է երկու մասից՝ պատվանդանից և կոթողից։ Պատվանդանը երկկարգ է, քառակուսի հատակագծով. վերի մասը, որը ծառայում է կոթողի մասին որպես հիմք, մի խորանարդաշափ ամբողջական քար է. կոթողը, որը հավասար քառակողմ ձև պետք է ունեցած լիներ, այժմ տեղում չէ։ Մահարձանը կառուցված է սև տուֆի տաշած քարերով։

10. Եղվարդի սահմաններում տարածվում են բազմաթիվ միգալիթյան հուշարձաններ՝ զոլմենների ու կրոմլեխների ձևով, որոնցով այնքան հարուստ է եղել առհասարակ Արագածոտն գավառը։

---

31) Թորոս Թորամանյան, «Նյութեր հայկական ճարտարապետության պատմության», հատ. երկրորդ, էջ 12։

Նկարագիր տեսարանի

ԱՄՐՈՑ ԱՌԱՆՑՔԻ ՄՈՒՏՔԻ ՎԵՐԻՆ ԿՈՂՄԻ, Գ—ի ԳԻՐՔԻՆ

ՀԱՅԵՐԻՆ ՍԵՓԱԿԱՆ ՀՈԳԻՆԵՐԻՆ ՀԱՄԱՐ



ԱՄԲԵՐԴԻ ԵԿԵՂԵՑԻՆ
ԿԱԹՈՒՂԻԿԱՆ 1026 ԹՎԱԿԱՆԻՆ ՎԱՀՐԱՄ ՊԱՀԼԱՎՈՒՆԻ ԻՇԽԱՆԻ ԿՈՂՄԻՑ

Նկարիչ՝ Գրիգոր Ավագյան

Գ. ՀԱԿՈԲՅԱՆ

ՎԱՐԴԱՆԱՆՑ ՀԵՐՈՍՆԵՐԻՆ ՆՎԻՐՎԱԾ «ԱՆՔԱՌԱՄ ՍԻՐՈՅ ԾՆՈՒՆԴՔ» ՊԱՐԱԿԱՆՈՆ ՇԱՐԱԿԱՆԻ ՀԵՂԻՆԱԿԸ

Վարդանանց նվիրված երգերն ու շարականները սկսվել են դրվել ԺԲ դարից և դեռ շարունակվում են մինչև մեր օրերը։ Առաջին անգամ արևելյան Հայաստանում Հովհաննես Սարկավագ վարդապետն է Ղևոնդյանց նվիրում իր նշանավոր, բովանդակալից «Պայծառացան այսօր»[1] շարականը։ Այնուհետև, նույն շրջանում, Կիլիկիայում, Ներսես Շնորհալին է գրում Վարդանանց քաջերին ձոնված մի քանի շարականներ, որոնց մեջ հայտնի են «Նորահրաշ պսակաւորս» և «Արիացեալք»[2] հոգևոր երգերը՝ հայրենասիրական բուռն ոգևորություններով[3]։

Մեր պարականոն կամ անվավեր կոչված շարականների մեջ, այրուրենի կարգով գրված, ծավալով բավականին մեծ, Վարդանանց նվիրված ուրիշ մի գեղեցիկ շարական ևս կա «Անքառամ սիրոյ ծնունդք» վերնագրով։ Հովհաննես Սարկավագ վարդապետի և Ներսես Շնորհալու վերևում հիշված շարականները մեր հին գրականության մեջ հայտնի են և մտել են ժամակարգության մեջ։ Սակայն պարականոն շարականների մեջ ընկած այս թե՛ արժեքավոր պոեմը, և թե՛ նրա հեղինակը դժբախտաբար մինչև օրս մնում են անհայտության մեջ և չեն ուսումնասիրված։

Բանասեր Սահակ վարդապետ Ամատունին 1894 թվականին «Արարատ» ամսագրի «Շարականների ուսումնասիրությունն» ընդհանուր խորագրի ներքո իր հոդվածներից մեկում[4] փորձում է ցույց տալ, որ «Անքառամ սիրոյ ծնունդք» շարականի հեղինակը Հովհան Օձնեցին է։ Այսպիսի մի կարծիքի հիմք են հանդիսացել Սարգիս երեցի «Տօնացոյց»-ի հետևյալ խոսքերը. «Ղևոնդեանց Անճառելի բանդ Աստուածն», Վարդանանց «Անքառամ սիրոյ

1 Տե՛ս «Պայծառաց շարական», Վաղարշապատ, 1888 թ., էջ 437։

2 Նույն տեղում, էջ 431—432։

3 Գ. Հակոբյան «Ավարայրի ճակատամարտին նվիրված Ներսես Շնորհալու երկու շարականները», «Սովետական գրականություն», 1957 թ., № 6։

4 «Արարատ», 1894 թ., № 4, էջ 120—127։

ծնունդքնս Յոհաննու քահանայի է ասացեալ»[5]։ Ամատունին ենթադրում է, որ այս Հոհանը, Հովհան կամ Օհան Օձնեցին է։

Բայց թե ինչո՞ւ Սարգիս երեցը չի ասում պարզապես «Յովհան Օձնեցի» կամ «Յովհան կաթողիկոս», այլ «Յովհան քահանայ», այս հարցին Սահակ Ամատունին պատասխանում է այսպես. «Այս սխալանքը, եթե արել է մեր գրիչը, մենք այդ վերագրում ենք միայն այն դեպքին, որ ինչպես շատ գրիչներ ծանոթ չլինելով մեր ազգի մատենագիրների իսկական անվան... մի բան արտագրելու ժամանակ շփոթել են իրար հետ և ընծայել մի գրվածք մյուսին, մանավանդ, եթե նրանց հեղինակները եղել են միևնույն անվան տեր մարդիկ»[6]։

Այնուհետև Ամատունին գտնում է, որ եթե Հովհան Օձնեցին գրել է Ավագ կամ Մեծ տոների շարականները, Վարդանանց տոնն էլ փոքր տոներից չէ, ուստի պիտի ենթադրել, որ «Անթառամ սիրոյ ծնունդք» Վարդանանց շարականն էլ դրել է Հովհան Օձնեցին։

Վերջապես Սահակ վարդապետ Ամատունին այս շարական-պոեմը Հովհան Օձնեցուն վերագրելու նպատակով, մեջ է բերում Օձնեցու ճառերից և այս շարականից համապատասխան տեղեր, համեմատում դրանց նմանությունները, ոճը և հարազատությունը ցույց տալու համար։

Նախ պետք է ասել, որ Սարգիս երեցը գրագետ քահանա է եղել և ոչ աննշան գրիչ։ Եթե մեկ հոգևորական գրում է Տոնացույց, փորձում է ցույց տալ մեր բազմաթիվ շարականների հեղինակները, դժվար թե նա չկարողանար տարբերել Հովհան քահանան և Հովհան Օձնեցին։ Բացի այդ, Օձնեցին հայտնի է նաև որպես կաթողիկոս, եկեղեցական նշանավոր գործիչ ու հրապարակախոս։ Ինչպիսի անտեղյակ գրիչ էլ լիներ արտագրողը, այնուամենայնիվ չէր կարելի շփոթել կաթողիկոսի և քահանայի անունները։

Եթե խոսքը միայն «Հովհան» անվան շփոթելու մասին է, ապա ինչպե՞ս հասկանալ քահանա և կաթողիկոս բառերի շփոթումը։

Բացի այդ, ինչո՞ւ անպայման կարծել, որ Սարգիս երեցի ասած Հովհանը ոչ թե Հովհան Մանդակունին է կամ Հովհաննես Դրասխանակերտցի կաթողիկոսը կամ Հովհաննես Սարկավագը, որը Ղևոնդեանց էլ նվիրել է «Պայծառացան այսօր» հայտնի շարականը, այլ Հովհան Օձնեցին է։

Այնուհետև երկրորդ ենթադրությունն էլ անհիմն է։ Ահա թե ինչո՞ւ Ճիշտ է, Հովհան Օձնեցին գրել է «զկարգ Մեծ տօնիցն», բայց այս տոների մեջ չի մտնում Վարդանանց տոնը, թեև Հայ Եկեղեցին փոքր տոն չի համարել Վարդանանց օրը և միշտ տոնել է շքեղությամբ ու հանդիսավորությամբ, ինչպես իրավացի կերպով նկատում է Ամատունին։

Հովհաննես Սարկավագ վարդապետից ու Ներսես Շնորհալուց առաջ, Վարդանանց քաջերին նվիրված շարական հայտնի չէ, ուրեմն այս կարգի շարականները սկսվում են ԺԲ դարից և հավանաբար Վարդանանց տոնն էլ իր շքեղությունն ու հանդիսավորությունն ստացել է ԺԲ դարից։

Այժմ տեսնենք, թե ո՞րքան նման և հարազատ են Հովհան Օձնեցու ճառերից և «Անթառամ սիրոյ ծնունդք» շարականից կտարված քաղվածքները։

«Օձնեցին,— ասում է Ամատունին,— առանց մի քայլ անգամ շեղվելու յուր պերճախոս լեզվից, յուր զեղուն բառ ու բանից և միանգամայն յուր քրիստոնեական բուռն սիրուց և վառ ոգևորությունից, եթե կարելի է այսպես ասել, կազմել է յուր գրած շարականներից ճառեր, իսկ յուր գրած ճառերից՝ շարականներ»[7]։ Ահա այդ ճառերից ու շարականներից մի քանի նմուշ.

Ճառերից[8]	Շարականից
1. Տնկագործողին տնկեալ զդրախտն և ի նմա դնելով զմարդն, հրամայեաց անդուստ վայելել նմա։	1. «Տնկագործ Ադին դրախտին, որ տնկեցեր յերկրի զիսաչնա։
2. «Գեղեցկագոյն հաւատով ոտիւք առ ճշմարտութիւնն ի վերս կանգնեալ»։	2. «Տենչմամբ վառեալք ի կենցաղումս առ ի ստացումն փութացեալք երազաքայլ ոտիւք հոգւոյ»։
3. «Ի բաց վանել զչարութիւն բանսարկուին և զբոլոր տիեզերս հնազանդեցուցեալ ընդ առաքելական քարոզութեամբնս»։	3. «Երկնաւոր թագաւորին զինուորեցեալք արիաբար առ ի վանումն բանսարկուին... նահատակեալք քաջութեամբ արկիք տապաստ զմոլորեալսն»։
4. «Դնելով յիմաստութեանց մերոց պարսատիկս... ջաղխեսցուք զվեհագոյնս... ի նոսա անդամս... աւար առնելով և գերելով զհպարտացեալ նոցա խորհուրդսն»։	4. «... Նորասքանչ զարմանալեօք ընտրեսն ծառայս քեզ և վկայս, և գործակցեալ նոցա ի մարտ գերեսն զամուրս և դիսորհուրդսն»։

[5] Սահակ վարդապետ Ամատունի, «Պարականոն շարականներ», էջ 165։

[6] «Արարատ», 1894 թ., № 4, էջ 126։

[7] Նույն տեղում։

[8] Յովհան Իմաստասէր, 1833, Վենետիկ, էջ 67։

5. «Անյողդողդելի հաւատով զնորայն հիմնեցուցին զեկեղեցի»։

6. «Մեծագոչ հընչմամբ աղաղակեմք ի յընդհանուր... արարածոց տեսակս ասելով. Օրհնեցեք ամենայն գործք Տեառն զՏէր»։

5 «... ամրացուցեր զեկեղեցի վկայից քոց բազմութեամբ ի քեզ յոգեայ առաքինեաց»։

6. «Զայնեցեր զհեռացեալսն մեծագոչ փողոյն ձայնիւ գալ ի տաճար... ի սեանց եօթանց հաստատելոց»։

Համառոտակի քննենք այս 6 համեմատություններն առանձին-առանձին։

Առաջին համեմատության մեջ քաղվածքներն իրենց մտքերով բոլորովին տարբեր բաներ են։ Ճառից մեջ բերվածի իմաստն այն է, որ Աստված տնկել է դրախտը մարդու համար և դնելով այնտեղ նախամարդուն, այսինքն Ադամին, հրամայել է վայելել ու ապրել։

Իսկ շարականից մեջ բերվածն, ինչպես տեսանք, բոլորովին այլ իմաստ ունի։ Այստեղ պոեմի հեղինակն արդեն նկատի ունի ոչ թե դրախտն ու Ադամը, ինչպես ճառից մեջ բերվածը, այլ Հիսուսը, որ Նա միաժամանակ Աստված և մարդ է։ որ Նա այդ դրախտ երկրում տնկել է Իր խաչը։ Իր հոժար կամքով բարձրացել է այդ խաչի վրա և դարձել փոխաբերական մտքով ասված՝ «պտուղ հասարակաց»։

Ավելի պարզ դարձնելու համար մեր առարկությունն այս համեմատության դեմ, մեջ բերենք շարականի 20-րդ տունն ամբողջապես, որից կատարված է մեջբերումը։ Բանաստեղծը, դիմելով Հիսուսին, ասում է.

«Մորենեաց եղեր մշակ Աստուած և մարդ համանդամայն,
Ի պտղաբեր փոխեալ բնութիւն, ի բնութենէ աւտարացեալդ.
Տնկագործ Ադին դրախտին, որ տնկեցեր յերկրի զխաչն,
Եւ բարձրացար կամաւք ի նա, եղեալ պտուղ հասարակաց»[9]։

Երկրորդ համեմատությունն իմաստի ու հարազատության տեսակետից նույնպես անհաջող է։ Եթե առաջին համեմատության համար բանաստեղծն հիմք են հանդիսացել միայն «տնկագործ» և «դրախտ» բառերը, ապա այստեղ միայն «ոտիւք» բառն է։ Ճառի մեջ այլաբանորեն ասված է, որ հավատի ոտքով է դիմված դեպի ճշմարտությունը, իսկ շարականի մեջ դարձյալ բոլորովին այլ է փոխաբերության միտքը։ Այստեղ հեղինակն ասում է, որ Վարդանանց նահատակները իրական կյանքում վազվզում էին երկնի ծածուկ գանձից բաժին ստանալու տենչանքով և այն՝ այդ բանական գանձը ստանալու համար, հոգու արագաթռիչ ոտքերով դիմում էին դեպի մահը։ դեպի երկինքը։ Համեմատությունները ոչ միայն բոլորովին այլ իմաստ ունեն, այլ ճառում քաղվածքի միտքը վերացական է ու անորոշ, իսկ շարականում՝ կոնկրետ ու որոշակի. խոսքը վերաբերում է միայն Վարդանանց, այնպես որ այստեղ ևս ոչ մի հիմք չկա «Անթառամ սիրոյ ծնունդք» պոեմը վերագրելու Հովհան Օձնեցուն։

Երրորդ համեմատությունն էլ իր էությամբ նույնն է, ինչ որ երկրորդը։ Այստեղ էլ նման է միայն «բանսարկուին» բառը, ուրիշ ոչինչ։ Ճառից արված քաղվածքի իմաստն այն է, որ առաքյալների քարոզների միջոցով ամբողջ տիեզերքն հնազանդվել է քրիստոնեության վարդապետության ն դրանով վանվել, հեռացվել բանսարկուի՝ այսինքն սատանայի լարությունը։ Բոլորովին ուրիշ իմաստ ունի շարականի մեջբերումը։ Այստեղ բանաստեղծը երգում է, որ Ավարայրի հերոսները արիաբար զինվորագրվեցին Երկնավոր Թագավորին՝ բանսարկու Թշնամուն՝ Հազկերտին երկրից վանելու և մարդկանց մոլորությունից փրկելու համար։ Մի տեղ խոսքը առաքելական քարոզի, իսկ մյուս տեղ դարձյալ Վարդանանց զինվորների մասին է։ Սա էլ չի կարող ապացույց լինել, որ այդ շարականը գրել է Օձնեցին։

Հետևյալ համեմատության մեջ ճառից կատարված քաղվածքը այնքան շատ է կտրատված ու բազմակետ դրված, որ ընթերցողը դժվարանում է նույնիսկ ըմբռնել, թե ինչ է ուզում ասել ճառի գրողը։ Այս տողերի իմաստն, ըստ Օձնեցու, այն է, որ Թշնամու գաղափարախոսությունն ու խորհուրդը կդնենք մեր իմաստության պարսատիկը և ջարդ ու փշուր կանենք այն, ավար առնելով ու գերի վերցնելով նրանց հպարտացյալ խորհուրդները։ Այստեղ դարձյալ խոսքը քրիստոնեության վարդապետության և նրա Թշնամի խորհուրդների մասին է ընդհանրապես։ Մինչդեռ շարականի քաղվածքի իմաստն է՝ Քրիստոսը զարմանալի կերպով լավ է ընտրել Իր հավատասեր վկաներին՝ այսինքն Վարդանանց մարտիկներին։ Ինքը՝ Քրիստոսը, Ավարայրի ճակատամարտում գործակցել և օգնել է այդ մարտնչողներին և նվաճել ու գերել են Թշնամու ամրոցներն ու խորհուրդները։ Դարձյալ նմանությունը միայն նման, բայց այլ առումով գործածված մի երկու բառի մեջ է, ուրիշ ոչինչ։

[9] Սամսոն Վարդապետ Ամատունի. «Պարականոն շարականներ», էջ 287—288։

Նախավերջին համեմատության՝ ճառի քաղվածքի միտքն այն է, որ ընդհանրապես անհողդողդ հավատով է հիմնվել Քրիստոնեական Եկեղեցին. իսկ շարականի այդ երկու տողն ասում են, որ Հիսուսը Իր վերոհիշյալ վկաների՝ Վարդանանց մարտիրոսների բազմությամբ ոչ թե նոր է հիմնել, այլ ավելի մանրացրել ու անսասան է դարձրել այդ Եկեղեցին։

Վերջապես, ոչ մի նմանություն և հարազատություն չկա նաև վեցերորդ համեմատության մեջ, ուր ըստ Ամատունու՝ Օձնեցին ճառերից կազմում է շարականներ և վերջիններիցս էլ՝ ճառեր։ Այստեղ, ճառի մեջ Օձնեցին ասում է, որ ընդհանուր մարդկության հետ միասին մենք ևս մեծագոչ հնչմամբ կոչ ենք անում աշխարհին, թե՝ օրհնեցեք Տիրոջը և նրա բոլոր գործերը, իսկ բանաստեղծը շարականի մեջ դիմում է ոչ թե ամբողջ աշխարհին, այլ միայն Հիսուսին։ որ նա Իր մեծագոչ փողի ձայնով կանչել է Վարդանանց նահատակներին յոթ անսասան սյուների վրա հաստատված երկնային տաճարը, որ «ուրախանան գինով բանին», ի հեճուկս անզգամ, անհավատ թշնամիների...։

Այսպիսով բանասեր Սահակ վարդապետ Ամատունու ենթադրություններն ու կատարած համեմատությունները համոզեցուցիչ չեն, հետևաբար ոչ մի հիմք չկա «Անթառամ սիրոյ ծնունդք» պարականոն շարական-պոեմը վերագրելու Ը դարում ապրած Հովհան Օձնեցի կաթողիկոսին։

Ապա, ո՞վ է վերջապես այս հոգևոր և հայրենասիրական գեղեցիկ պոեմի հեղինակը, որ մինչև օրս մնացել է անհայտ։

Նախքան այդ, համառոտ և ընդհանուր գծերով ծանոթանանք այս անվավեր շարականի բովանդակության և ապա փորձենք ցույց տալ, թե ո՞վ է հեղինակը։

«Անթառամ սիրոյ ծնունդք» բառերով սկսվող պոեմը գրված է այբուբենի կարգով, բաղկացած է 36 տնից, ամեն տունը՝ չորս տողից և անհանգ, քառանդամ տասնվեց վանկանի մի ոտանավոր է։ Այս գործի հեղինակն էլ «Նորահրաշ պսակաւոր» և «Արիացեալք» շարականների նման դիմում է Վարդանանց հերոսներին երկրորդ և ապա երրորդ դեմքերով, բայց իհարկե ոչ անհատապես, այլ ընդհանուր ձևով։ ինչպես օրինակ՝

«Ընդ պարգևին ամփոփեցայք զպարգևիչ
փարթամութեանն,
Անկապուտ հաստատութեան առմամբ եղէք
երջանկացեալք.
Դարձայք դարձումն գովելի անստերիւր
ճանապարհաւորն։

Այս ձևով է բանաստեղծը դիմում Ավարայրի հերոսներին, փառաբանում է նրանց, որ ընկել են մեծ պատերազմում, բայց անպարտելի ու անմահ են, չնայած ըմպել են մահվան բաժակը, մկրտվել են իրենց արյամբ, բայց վանել են հայրենի երկրից Հազկերտի խաբեությունն ու բռնությունը և լուծել խավարը.

«Ընդ մեծ պատերազմին նախանձեցայք ի
պատարագ,
Զփրկականն ըմպել զբաժակ և մկրտել
արեամբ ձերով.
Ի քաւութիւն մոլորութեանն և ի լուծումն
խաւարի.
Որ բռնութիւն չարասիրին խաբէութեամբ
հաւանեցոյց»։

Շավարշան դաշտում Վարդանանք անհավասար կռվի են բռնվում անօրեն Թշնամու հետ, որով և վերջ են դնում խաբեբա և նենգ ախոյանի գաղտնի որոգայթներին.

«Թշնամեացն անօրինաց ընդդիմացայք ի
պատերազմ
Զգաղտնիս որոգայթիցն նահանջումն առեալ
ի վերջ»։

Շարականի հեղինակը այդ պատերազմում ընկած մարտիկներին որակում է որպես «լուսատու խաւարելոց և այցելու մոլորելոց», որոնք որպես «արեգակն արդարութեան» մաշել են մահվան ստվերը «ի տեսակէ ազգի մարդկան»։

Առանձնապես աչքի է ընկնում այս պոեմի՝ Ե տառով սկսվող 14-րդ տունը։ Այստեղ հեղինակը երգում է հայ ժողովրդի ցրված, վարատված հարազատ դավակներին, որոնք հավաքվել են Արտազ գավառի Շավարշան դաշտը՝ դառնաթույն օձի գլուխը ջախջախելու։ որպեսզի փրկեն Եկեղեցին ու Հայրենիքը, նրա մշակույթն ու ազատությունը։ Պոեմի մինչև 17-րդ տունը բանաստեղծը հոգնակի ձևով է դիմում Ավարայրի քաջերին ու փառաբանում։ Այնուհետև Ճ տառով սկսվող տնից մինչև Ջ տառը, այսինքն ինը տուն, ըստ երևույթին վերաբերում են զորագլուխ Վարդանին, ուր հեղինակը խոսում է եզակի թվով և երկրորդ դեմքով, ինչպես Ներսես Շնորհալու, «Նորահրաշ պսակաւոր» շարականը։ Ահա այդ ձևով դիմումներից մի նմուշ.

«Ճշմարտութիւն և ճանապարհ ուղղորդաց
առ քեզ ասնձանց...

---

10 «Արարատ», 1894, № 4, էջ 120։

...Ուսուցեր ամենեցուն՝ արիանալ ընդ դէմ մահու...
...Առաջին պսակաւորդ, յորդորիչ զանդիտողաց.
Ի չարաչար սպառնալեաց և յերկիւղ մահաբերոց»։

Այնուհետև պոեմի մնացած տաս տունը հոգնակի երրորդ դիմքով վերաբերում է այն բոլոր նահատակներին, որոնք ընկել են մարտի դաշտում.

«Ջախեցին գրանասարկուն և զընդ նոցա իշխանութիւնս...
... Ռամկական ազգ աշխարհի եղեն երկնի քաղաքացի...»։

Ըստ բանաստեղծության վերջին տների, Վարդանանց կտրիճներից ամեն մեկը Հայրենիքի ու ազգային մշակույթի ազատության համար հոժարակամ գրկել է մահը, որոնք իրենց վերքերով ու ցավով օգուտ են բերել հայ ժողովրդին.

«Իւրաքանչիւր վկայիցն առանձնակի աւժարութեամբ
Հասարակաց բերին աւգուտ, վիրաւք, ցաւոց և տանջանաց»։

«Անթառամ սիրոյ ծնունդք» պարականոն շարականի կառուցվածքը, ոճը, այբբենական կարգը, կոկիկ ու մաքուր լեզուն, պատկերներն ու հայրենասիրական մոտիվները շատ ընդհանուր նմանություններ ունեն Ներսես Շնորհալու «Նորահրաշ» և «Արիացեալք» շարականների հետ։ Բացի այդ, այս պարականոն հոգևոր երգը արվեստի հնարանքների տեսակետից էլ շատ նման է Շնորհալու «Այսօր անճառ», «Ամտուած անեղ», «Առաւօտ լուսոյ» և «Աշխարհ ամենայն» հոգևոր երգերին։ Այժմ փորձենք ցույց տալ այդ նմանությունները և միատեսակ ոճը.

«Անթառամ սիրոյ ծնունդք»-ի ճինգերորդ տնից	«Նորահրաշ»-ից
Ա. «Երկնաւոր թագաւորին՝ զինուորեցայք արիաբար...»։	Ա. «Երկնաւոր թագաւորին զինու յաղթեալ պատերազմին...»։
«Անթառամ»-ի չորրորդ տան վերջին տողը	«Նորահրաշ»-ի ինն երորդ տան նույնպես վերջին տողը
Բ. «...Պայծառացեալ արեամբ ձերով՝ ընծայեցաք հանդիսադրին»։	Բ. «Ընդ նոսին պսակելով՝ ի յերկնաւոր հանդիսադրէն»։
«Անթառամ»-ից	«Նորահրաշ»-ից
Գ. ...և ձերով հեղմամբ արեամբ՝ պսակեցայք զեկեղեցի...»։	Գ. առաջին տնում՝ «Վարդագույն արեամբդ քո՝ պսակեցեր զեկեղեցի»։ երկրորդ տնում՝ «...Խաչելոյն վկայ եղեալ՝ հեղմամբ արեան պսակեցաւ»։ վեցերորդ տնում՝ «Խաչելոյն վկայ իւրեալ՝ պսակեցաւ արեամբն իւրով»։
Դ. «Էաղեալս բարւոյն տարփմամբ վերադարձայք ի ստորայնոցս»։	Դ. «Էական բարւոյն դիտմամբ ընդդէմ մեղացն վառեցաւ»։
Ե. «...զփրկականն ըմպել գրաժակ և մկրտեալ արեամբ ձերով...»։	Ե. զփրկականն ըմպեալ դրաժակ՝ և մկրտեալ արեամբն իւրով»։
Զ. «Եւ ընթանալ պատրաստաբար առ զօրագլուխն առաքինեաց»։	Զ. «Նորահրաշ պսակաւոր՝ և զօրագլուխ առաքինեաց»։
Է. «...ամենայնիւ յառաջացեալ և անուանեալ հիմն և աւարտ»։	Է. «...յառաջեալ յամենեցունց գլուխ և աւարտ մարտիրոսաց»։
Ը. «Ուսուցեր ամենեցուն արիանալ ընդդէմ մահու»։	Ը. «Վառեցար զինու հոգւոյն արիաբար ընդդէմ մահու»։
Թ. «Ռամկական ազգ աշխարհի եղեն երկնի քաղաքացիք»։	Թ. «Բամկական խումբ հազարաց և երեսնից թիւ ընդ վեցից»։
Ժ. «Երրորդութեանդ նուագիչք զերեքսրբեան փառատրութիւն»։	Ժ. «Դասակցեալ ընդ անմարմնոցն երրորդութեանն երգել զփառաս»։

Այսպիսի նմանությունները, ինչպես տեսնում ենք, տեղ-տեղ նույնիսկ բառացի կրկնությունները, չեն վերջանում Վարդանանց նվիրված այս երկու շարականներով. դրանք ակնբախ են Շնորհալու նաև մյուս՝ այբբենական կարգով գրված «Այսօր անճառ», «Ամտուած անեղ», «Առաւօտ լուսոյ» և այլ պոեմներում։ Մի երկու օրինակ էլ բերենք այս գործերից, համեմատենք «Անթառամ սիրոյ ծնունդք» անվաներ շարականի հետ.

«Անթառամ սիրոյ ծնունդք» պոեմից	«Այսօր անճառից»
Ա. «Բանին Հօր բարրառոյ»։	Ա. «Բանին Հօր փառաց լուսոյ»։ «Բանդ որ ի ծոց Հօր Միածին»։
Բ. «Ղօղեալ սարսեաց յիմարութիւն»։	Բ. «Ղօղեալ յերկիւղ բրտանց հոսման

	Ղողեալ սարսեաց պահակ մահուս։
Գ. «Ռամկական ազգ աշխարհիս։»	Գ. «Ռամկական դասք զինուորացս։»
	«Ասուած ասեղ»-ից
Դ. «Լուսատու խաւարելոց և այցելու մոլորելոց, որ զգիշեր մեղաց լուծեր»։	Դ. «Խաւար մեղաց հալածեցաւ, Լոյս գիտութեան քև ծագեցաւ։»
	«Առաւոտ լուսոյ» երգից
Ե. «Գանձին ծածկելոյ տենչմամբ վառեալք ի կենցաղումս։»	Ե. «Գանձդ ողորմութեան, Գանձիդ ծածկելոյս։»
Զ. «Ճշմարտութիւն և ճանապարհ ուղղորեաց առ քեզ անձանցս։»	Զ. «Ճառագայթ փառաց Ճանապարհ ինձ ցոյց Ճեպել ի յերկինս։»

Այսքանը «Անթառամ սիրոյ ծնունդք» և Շնորհալու տարբեր շարականների նմանութիւնների մասին։ Բայց այդ նմանութիւնները միայն սրանց միջև չեն։ Ներսես Շնորհալու չափածոյի բնորոշ գծերից մեկն էլ այն է, որ նրա շարականների, տաղերի, նույնիսկ պատմական պոեմների մեջ շատ կան դարձվածքների, պատկերների և արտահայտչական մյուս ձևերի նմանութիւններ ու տեղ-տեղ էլ՝ ուղղակի կրկնութիւններ։ Մեր ասածը հաստատելու նպատակով մեջ բերենք մի քանի օրինակներ նրա չափածո տարբեր գործերից.

«Առաւոտ լուսոյ» երգից.

Սէր անուն Յիսուս
Սիրով քոյ ճմլեա
Սիրտ իմ քարեղենս։

«Աշխարհ ամենայն» երգից.

«Սիրով ցանկութեան,
Սաստիկ բարկութեամբ,
Սիրտ իմ խոցեալ է»։

«Նայեաց սիրով» երգից.

«Սիրոյ քո հուր արկեալ յերկիր՝
Բորբոքեսցի ի հոգիս մերս։

Հոգեգալստեան Բ օրվա «Օրհնութիւն»-ից

«Սէրն ի սիրոյ զսէրդ առաքեաց,
Յինքն զանդամս իւր քև յօդեաց»։

«Նորաստեղծեալ» երգից.

«Սէրդ սիրով խոնարհեցար,
Ի փրկութիւն մեր մարմնացարս։

Վարդանանց շարականից.

«Ստացեալ զհաւատոյ վահան,
Ցուսոյն զրահիւք ծածկեալ,
Ի գլուխ եդեալ զնշան խաչին։

Ս. Սարգսի շարականից.

«Սաղաւարդ յուսոյ անմահ բանին,
Եդեալ ի գլուխ մերոյ իշխանին,
Սուտեր աչոյ, վահան՝ հաւատոյ։

«Յիսուս Որդի» գործից.

«Որ մաքրեցիր աւազանին՝
Մաքուր ձեռօք զոտս նոցին.
Եւ ուսուցեր զխոնարհութիւն՝
Զոր նախ՝ բանիւ յայնժամ յիրին։

«Այսօր անեռոս» պոեմից.

Զոր մաքրեցիր յաւազանին՝
Մաքուր ձեռօք զոտս նոցին.
Եւ ուսուցեր՝ խոնարհութեամբ
Ցաղթող լինել չար հպարտին։

Այսպես ուրեմն, առարկելով Սահակ Վարդապետ Ամատունու ենթադրություններին ու կատարած համեմատություններին, մեր կողմից մեջ բերելով նոր փաստեր ու համեմատություններ՝ հենվելով Շնորհալու չափածոյից մեջ բերված բազմաթիվ օրինակների վրա, մենք գտնում ենք, որ «Անթառամ սիրոյ ծնունդք» Վարդանանց նվիրված պարականոն շարականի հեղինակը ոչ թե Հովհան կամ Հոհան Օձնեցին է, այլ Ներսես Շնորհալին։ Վերջում պետք է ասել, որ Հովհան Օձնեցուն վերագրվող «Զկարգ Մեծի տունիցն» շարականների և «Անթառամ սիրոյ ծնունդքս» գործի մեջ ոչինչ ընդհանուր չկա. դրանց թեմատիկան, բովանդակությունը, պատկերավորությունը, մանավանդ ոճն ու լեզուն, բոլորովին տարբեր են և դրանք չեն կարող միևնույն հեղինակի գրչի գործը լինել։ Մինչդեռ ընդհակառակը, մեր կողմից բերված համեմատություններն իրենց էությամբ և արվեստով, ցույց են տալիս, որ «Անթառամ սիրոյ ծնունդքս» պոեմը իր արվեստով և բովանդակությամբ շատ հարազատ է ու նման Շնորհալու մյուս գործերին։

Բայց հետևյալ հարցն է առաջանում, թե ինչո՞ւ այդպիսի մի գեղեցիկ, հայրենասիրական շարական, որը մի ժամանակ եղել է ժամակարգության մեջ, եկեղեցու կողմից ընդունվել է[12], բայց հետագայում դարձել է պարականոն, անվավեր և դուրս մնացել մեր Շարակնոցից։ Շատ հավանական է, որ այս

[12] Որ այս շարականը մի ժամանակ եղել է ժամակարգության մեջ և երգվել է Վարդանանց տոնի օրը, երևում է նրանից, որ ունի վերջ ձայն (դկ) և պատկանել է «Ուրհնութիւն» շարականների խմբին։

շարականը իր մեծ ծավալի պատճառով է հանվել ժամակարգությունից, որովհետև մի անգամից 36 տնից բաղկացած մի շարական երգելու համար շատ երկար ժամանակ է պահանջվել։ Հավանաբար Շնորհալու մահից մեկ կամ երկու դար հետո, Շարակնոցը խմբագրող եկեղեցական հայրերը համեմատել են Վարդանանց Նվիրված «Նորահրաշ պսակաւորս»-ը և այս շարականը, նախապատվությունը տվել են «Նորահրաշ»-ին, որը համեմատաբար կարճ է, բովանդակությամբ ավելի կուռ, իսկ արվեստով, մանավանդ բանաստեղծական թափով ավելի ուժեղ ու ազդեցիկ։ Բացի այդ, պարականոն շարականների մեջ շատերը կան, որ պատկանում են Շնորհալուն, ինչպես օրինակ՝ Արգար, Տրդատ Թագավորներին, Որդվոց որոտման, Համորեն առաքելոց, Գևորգ և Սարգիս զորավարներին նվիրված և ուրիշ շարականներ։ Իսկ ինչ վերաբերում է մեզ զբաղեցնող «Անթառամ սիրոյ ծնունդք» շարականին, դա մեր հոգևոր երգերի մեջ մի գեղեցիկ հայրենասիրական, հոգևոր մարտական բանաստեղծություն է, որն իր արժանի տեղը պետք է վերագտնի շարակնոցի նոր հրատարակության դեպքում։

ՄԱՅՐ ՀԱՅԱՍՏԱՆՈՒՄ

ԼՈՒՐԵՐ ՄԱՅՐ ՀԱՅՐԵՆԻՔԻՑ

ԱԿԱԴԵՄԻԿՈՍ ԼԵՎՈՆ ՕՐԲԵԼԻ ԾՆՆԴՅԱՆ 80-ԱՄՅԱԿԻ ԱՌԹԻՎ.—Հուլիսի 7-ին լրացավ աշխարհահրոչակ գիտնական, ակադեմիկոս Լևոն Օրբելու ծննդյան 80 տարին։

Մեծ գիտնականը ծնվել է 1882 թվականին Հրազդանի շրջանի Սադկաձոր գյուղում։ 1899 թվականին ոսկե մեդալով ավարտելով Թբիլիսիի 3-րդ գիմնազիան, նա մեկնում է Պետերբուրգ և ընդունվում ռազմա-բժշկական ակադեմիան։ Ուսանողական տարիներից էլ նա սկսում է աշխատել մեծահռչակ կենսաբան Պավլովի լաբորատորիայում։ Երկար տարիներ ուսուցիչ և աշակերտ աշխատել են միասին։ 1913 թվականից Օրբելու ղեկավարությանն են վստահվում մի շարք գիտական հիմնարկներ։ Իր գիտական գործունեության ընթացքում նա կատարում է նոր հետազոտություններ, հարստացնում կենսաբանական գիտությունը։ Օրբելին հեղինակն է մի շարք կարևոր ուսումնասիրությունների։ Մեծ կենսաբանը գիտությանը մեծ ծառայություններ մատուցած լինելու համար բազմիցս պարգևատրվել է պետության կողմից։

Անվանի կենսաբանը միաժամանակ արտասահմանյան մի շարք երկրների ակադեմիաների և գիտական ընկերությունների պատվավոր անդամ է։

ԱՆՎԱՆԻ ԳԻՏՆԱԿԱՆ ԳԵՂԱՄ ԱՂԱՋԱՆՅԱՆԻ ՀՈԲԵԼԵԱՆԸ.—Հունիսի 30-ին նշվեց Հայկական ՍՍՌ Գիտությունների ակադեմիայի ակադեմիկոս, գիտության վաստակավոր գործիչ, դոկտոր-պրոֆեսոր Գեղամ Եսայեսի Աղաջանյանի ծննդյան 70 և գիտական ու հասարակական գործունեության 50-ամյակը։

Հանդիսավոր նիստը, որին ներկա էր հանդիսականների ստվար բազմություն, տեղի ունեցավ Կ. Ստանիսլավսկու անվան ռուսական թատրոնում։

Ներածական խոսքում գյուղատնտեսական մթերքների արտադրության և մթերումների մինիստր Պետրոսյանը նշեց հոբելյարի կարևոր ուսումնասիրությունները գյուղատնտեսության բնագավառում։

Հոբելյարի կյանքի և գործունեության մասին հանդամանորեն զեկուցեց դոկտ.-պրոֆ. Մատթեոսյանը։

Ապա ելույթ ունեցան գիտական հաստատություններ, գյուղատնտեսական հիմնարկների և այլ ձեռնարկությունների ներկայացուցիչներ, որոնք ջերմորեն ողջունեցին հոբելյարին։

ՔԱՆԴԱԿԱԳՈՐԾ ԱՐԱ ՍԱՐԳՍՅԱՆԻ ԾՆՆԴՅԱՆ 60-ԱՄՅԱԿԸ.—Հայֆիլհարմոնիայի փոքր դահլիճն էին հավաքվել շատ արվեստասերներ՝ նշելու Հայկական ՍՍՌ ժողովրդական Նկարիչ, ՍՍՌՄ Գեղարվեստի ակադեմիայի իսկական անդամ Արա Սարգսյանի ծննդյան 60-ամյակը։

Բացելով հոբելյանական երեկոն, Հայաստանի կերպարվեստագետների միության նախագահ Ռ. Պարսամյանն ասաց.

— Մենք հավաքվել ենք՝ մեծարելու սովետահայ կերպարվեստի տաղանդավոր վարպետներից մեկին՝ Արա Սարգսյանին, նրա ծննդյան 60 և ստեղծագործական գործունեության 40-ամյակի առթիվ։

Արա Սարգսյանի արվեստն այդ 40 տարիների ընթացքում կնքել է որոնումների ուղիով։ Նա այն քանդակագործներից է, որոնց մոտ քանդակագործական կանոնների պահպանումը զուգակցված է պլաստիկական լեզվի սուր, ուժեղ և համոզիչ վերարտադրմանը։ Այդ մասին են վկայում դեռևս վաղ շրջանի աշխատանքները, ինչպիսիք են երաժշտագետ Ռ. Ռոբերտի, կոմպոզիտոր Կ. Վեյսելի, Ե. Զաքեյանի դիմանկարները, «Լուսո վիշտը» կոմպոզիցիան։ Սովետահայ գիմանքանդակի ոսկե ֆոնդում են կոմպոզիտոր Ն. Տիգրանյանի, թատերագետ Ա. Ջիվիլիգովի, ճարտարապետ Թ. Թորամանյանի, Ա. Շերվանզադեի և այլ անվանի մարդկանց դիմանքանդակները։

Ա. Սարգսյանը տիրապետում է քանդակի արխիտեկտոնիկային, որի շնորհիվ կարողանում է քանդակը վարպետորեն միահյուսել պատվանդանի և ողջ ճարտարապետական կոմպլեքսի հետ։ Դրա լավագույն ո-

ԴԱՐԱՇԱՄԻ Ս. ՍՏԵՓԱՆՈՍ ՆԱԽԱՎԿԱՅԻ ՎԱՆՔԸ

Նկարիչ՝ Գ.

ռինակներից են «Մայիսյան ապստամբության հերոսներին» նվիրված հուշարձանը Լենինականում, Սարեն Սպենդարյանի, Ս. Մ. Կիրովի հուշարձանը Կիրովականում, Նելսոն Ստեփանյանը Երևանում և այլն։

Նա միաժամանակ բեղմնավոր աշխատանք է կատարել թատերական արվեստի բնագավառում, ձևավորելով մի շարք ներկայացումներ («Համլետ», «Գաղտնապահ աղջիկ» և այլն)։

Ստեղծագործական բեղմնավոր գործունեության հետ մեկտեղ Արա Սարգսյանը հանդես է եկել նաև որպես ակտիվ հասարակական գործիչ, դիտնական ու մանկավարժ։ Նա հիմնադրել է Երևանի Գեղարվեստական ինստիտուտը, դասախոսել է շատ երիտասարդ արվեստագետների։

Հոբելյարին ջերմորեն ողջունեցին Ս. Բարայանը (Հայկական ՍՍՌ Կուլտուրայի մինիստրություն), Գ. Խանջյանը (Կերպարվեստագետների միություն), Ս. Խանդադյանը (Դրոշների միություն), Մ. Դավթյանը (Կուլտուրայի աշխատողների արհմիություն), Վ. Վարդանյանը (Հայկական թատերական ընկերություն), Գ. Ջանիրեկյանը (Սունդուկյանի անվան պետական թատրոն), Ն. Սիմոնյանը (Նոր Դվինի «Ճենարարա» կոլտնտեսություն)։

Վերջում իր գոհունակության խոսքն ասաց Արա Սարգսյանը։

ԺԱՆ ԺԱԿ ՌՈՒՍՈՅԻ ՆՆԴԵՍԱՆ 250-ԱՄՅԱԿԸ.— Հայաստանի Արվեստի աշխատողների տանը նշվեց տասնութերորդ դարի ֆրանսիական մեծ լուսավորիչ Ժան Ժակ Ռուսոյի ծննդյան 250-ամյակը։

Նրա կյանքի, հասարակական ու լուսավորչական գործունեության մասին զեկուցեց Հայկական ՍՍՌ Գիտությունների ակադեմիայի ակադեմիկոս Արզար Հովհաննիսյանը։ Նա առանձնապես կանգ առավ մեծ լուսավորչի գրական ժառանգության վերլուծության վրա, ցույց տվեց այն վիթխարի ազդեցությունը, որ նրա գաղափարներն ունեցել են տասնութերորդ դարի ֆրանսիական բուրժուական ռևոլյուցիայի նախապատրաստման ու անցկացման համար։

Երեկոն կազմակերպել էին «Ֆրանսիա—ՍՍՌՄ» ընկերության Հայկական բաժանմունքը և Արտասահմանյան երկրների հետ բարեկամության և կուլտուրական կապի հայկական ընկերությունը։

ՀԱՐՏԱՐԱՊԵՏԱԿԱՆ ՆԱԽԱԳԾԵՐԻ ՑՈՒՑԱՀԱՆԴԵՍ.— Հայաստանի Ճարտարապետների տանը բացվել է ցուցահանդես, որտեղ ներկայացված են ռեսպուբլիկայի նախագծային ինստիտուտների և այլ կազմակերպությունների կողմից մշակված մեծ թվով նախագծեր։ Դրանք կառուցվող և կառուցվելիք բնակելի տների, կուլտուրայի օջախների, արդյունաբերական ձեռնարկությունների, դիտական հաստատությունների նախագծեր են, որոնք հիմնականում ստեղծվել են վերջին երկու տարում։ Ցուցահանդեսի ցուցանմուշները պատմում են Հայաստանում կառուցողական մեծ աշխատանքների, քաղաքաշինության նոր հեռանկարների մասին։

Նախագծերի մասին բացատրություններ տվեցին Հայկական ՍՍՌ Մինիստրների Սովետի Շինարարության և ճարտարապետության գործերի պետական կոմիտեի նախագահ Գ. Ազարարյանը, Երևան քաղաքի գլխավոր ճարտարապետ Է. Սատապյանը, «Հայարդնախագիծ» ինստիտուտի դիրեկտոր Մ. Գրիգորյանը, Հայաստանի ճարտարապետների միության վարչության նախագահ Վ. Հարությունյանը և ուրիշներ։ Նրանց հատկապես պատմեցին բազմահարկ պանելային տների, բնակելի, դպրոցական և այլ շենքերի տիպային նախագծերի, պանորամային կինոթատրոնի, Հրազդան քաղաքի հատակագծի մասին։

ԵՐԵՎԱՆԻ ԳԵՂԱՐՎԵՍՏԱԿԱՆ ՈՒՍՈՒՄՆԱՐԱՆԻ 40-ԱՄՅԱԿԸ.— Հունիսի 30-ին լրացավ Երևանի Փանոս Թերլեմեզյանի անվան գեղարվեստական ուսումնարանի հիմնադրման 40-ամյակը։ Անցած չորս տասնամյակներում ուսումնարանը դարձել է կերպարվեստի կադրերի հիանալի դարբնոց։ Նա տվել է 787 շրջանավարտներ, որոնք ստեղծագործական և մանկավարժական աշխատանքի են անցել ոչ միայն Հայաստանում, այլև միության մյուս ռեսպուբլիկաներում։

ԻՆՔՆՈՒՍ ՆԿԱՐԻՉ ՍՈՒՐԵՆ ՊԵՏՐՈՍՅԱՆԻ ՑՈՒՑԱՀԱՆԴԵՍԸ.— Ժողովրդական ստեղծագործության Ռեսպուբլիկական տան գեղարվեստական ինքնագործունեության դահլիճում բացվեց ինքնուս նկարիչ Սարեն Պետրոսյանի աշխատանքների ցուցահանդեսը։

Ցուցահանդեսում ներկայացված է շուրջ 80 աշխատանք՝ դիմանկարներ, նատյուրմորտներ և պեյզաժներ։

Ցուցահանդեսի բացմանը ներածական խոսք ասաց Հայկական ՍՍՌ Գիտությունների ակադեմիայի թղթակից անդամ Ե. Ադամյանը։

Ս. Պետրոսյանի աշխատանքների մասին պատմեց ժողովրդական ստեղծագործության Ռեսպուբլիկական տան կիրառական արվեստի բաժնի վարիչ Ա. Բարայանը։

Ողջույնի խոսք ասացին նկարիչ Գ. Խանջյանը, բանաստեղծ Մ. Հարությունյանը և բանասիրական գիտությունների թեկնածու Վ. Ղազանչյանը։

ԵՐԻՏԱՍԱՐԴ ԲԱՆՎՈՐՆԵՐԻ ՁԵՌՔԵՐՈՎ.— Երբորդ տարին է, ինչ Արվեստի աշխատողների տանը գործում է բանվոր երիտասարդության կերպարվեստի ստուդիա, որտեղ ընդգրկված է մայրաքաղաքի տարբեր հիմնարկ-ձեռնարկություններում աշխատող 31 երիտասարդ բանվոր։ Նրանք, աշխատելուն զուգընթաց, զբաղվում են նաև գեղանկարչությամբ ու քանդակագործությամբ։ Ստուդիայի ղեկավարն է երիտասարդ նկարիչ Հրաչիկ Գարուզյանը։

Օրերս Արվեստի աշխատողների տանը բացվեց երիտասարդ նկարիչների հաշվետու ցուցահանդեսը, որ ներկայացված է գեղանկարչական, գրաֆիկական և քանդակագործական շուրջ 200 աշխատանք։

Ելույթ ունենալով ցուցահանդեսի բացմանը, Հայկական ՍՍՌ ժողովրդական նկարիչ Մհեր Աբեղյանը ասաց.

— Ներկայացված գործերից շատերը խոստումնալից են և վկայում են, որ հանդես է գալիս նոր, շնորհալի երիտասարդություն։ Եվ, ով գիտե, գուցե նրան-

ցից շատերը ապաղայում կդառնան անվանի նկարիչներ։

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՄԵՏԱՂԱՀԱՆՔԵՐԻ ՆՈՐ ՔԱՐՏԵԶՆԵՐ.— Ռեսպուբլիկայի Երկրաբանական գիտությունների ինստիտուտը կազմել է Հայաստանի տերիտորիայի առանձին հանքաշրջանների մետաղահանքերի նոր քարտեզներ։ Դրանց մեջ ընդհանրացված են գունավոր և հազվագյուտ մետաղների հանքավայրերի դասակարգման ու տեղաբաշխման օրինաչափությունների հայտնաբերման ասպարեզում կատարված բազմամյա հետազոտությունների արդյունքները։

Ինստիտուտի դիրեկտոր, Հայաստանի գիտությունների ակադեմիայի ակադեմիկոս Ս. Ս. Մկրտչյանը հաղորդեց, որ այդ քարտեզները թույլ կտան նպատակաուղղությամբ տալ որոնման ու հետախուզման աշխատանքներին, հայտնաբերել առաջնորդող անհայտ նոր հանքագոյացման շրջաններ և ճշտորեն գնահատել օգտագործվող հանքավայրերի հեռանկարները։

Կատարված հետազոտությունները թույլ տվեցին նոր ձևով գնահատել Ալավերդու, Աղթալայի, Շամլուղի, Ղափանի և ուրիշ հին հանքավայրերի հեռանկարները։

Վերջին ժամանակներս մետաղահանքերի նոր քարտեզների հիման վրա կատարված երկրաբանա-հետախուզական աշխատանքները հնարավորություն տվեցին մի քանի անգամ ընդլայնել ռեսպուբլիկայի պղնձարդյունաբերության հումքի բազան։

ԵՐԵՎԱՆԻ ՆՈՐ ՋՐԱՏԱՐԸ.— Երևանը պատկանում է այն քաղաքների թվին, որոնք հատկապես արագ են աճում։ Վերջին չորս տարում քաղաքի բնակչությունը աճել է 109 000 մարդով։ Ներկայումս Երևան քաղաքում ապրում և աշխատում է ավելի քան 600 000 մարդ։ Բնակչության այդպիսի աճը անհրաժեշտ է դարձնում, որպեսզի տեղական օրգանները ապահովեն քաղաքային տնտեսության բոլոր բնագավառների անընդհատ զարգացումը։ Անհրաժեշտ է կառուցել բնակելի շենքեր, բաց անել նոր փողոցներ և հասարակական սենդի ու կոլտուր-կենցաղային այլ օբյեկտներ։

Քաղաքային տնտեսության մեջ հատուկ տեղ է գրավում ջրամատակարարումը։ Նախահեղափոխական Երևանի ազգաբնակչության միայն փոքր մասն էր օգտվում Կանքեղբյուրի ջրերից։ 1912 թվականին կառուցված ջրատարը քաղաքին տալիս էր մեկ վայրկյանում 13 լիտր ջուր։ Քաղաքացիների հետզհետ մեծամասնությունը օգտվում էր ջրհորներից։ Այդ պատճառով էլ հաճախ առաջանում էին զանազան տարաձայնություններ։

Դրությունն այլ է այժմ։ Միայն վերջին տարիներին կառուցվել են երկու նոր ջրատարներ՝ Կաքնաղբյուրի 3-րդ և Արզնու 2-րդ ջրատարները։ Անցյալ տարի քաղաքն ստացել է 90 000 000 խորանարդ մետր ջուր, որը 1957 թվականի համեմատությամբ 41 տոկոսով ավելի է։

Լրացուցիչ աղբյուրներ շահագործման հանձնելու գործը անհետաձգելի խնդիր էր դառնում։ Պետք էր անպայման օգտագործել Շոր-շորի ջրերը։ Այդ ուղղությամբ զգալի աշխատանքներ կատարվեցին դեռևս անցյալ տարի։ Հաշվումները ցույց տվեցին, որ Շոր-շորի աղբյուրները քաղաքին մեկ վայրկյանում կարող են տալ 380 լիտր ջուր, որից Աշտարակի երեք նոր սովխոզների և Գիտությունների ակադեմիայի օբյեկտները կստանան 110 լիտր ջուր, իսկ մնացած 270 լիտրը (մեկ վայրկյանում) կտրվի Շահումյանի և քաղաքի այլ շրջաններին։ Քաղաքի աշխատավորությունը, հիմնարկ-ձեռնարկությունների կոլեկտիվները մեծ պատրաստակամություն հայտնեցին՝ մասնակցելու նոր ջրատարի կառուցմանը։

Դրվում էր մեծ գործի սկիզբը։ Անհրաժեշտ էր հավաքել Շոր-շորի ջրերը, կառուցել հզոր պոմպակայան, որը ջուրը կմղեր 185 մետր ուղղահայաց բարձրության վրա՝ դեպի ջրատարի խողովակաշարը։ Ըստվեց խրամուղին, որի երկարությունը մոտ 18 կիլոմետր է։ Անհրաժեշտ էր վերակառուցել նաև Աշտարակի էլեկտրաձիգակայանը, որ պետք է իրականացվեին 6 000 վոլտ լարվածությամբ հոսանքատար գծեր։ Այդ աշխատանքները կատարելու համար պահանջվեց 1 000 000 ռուբլի։

Լայն մրցություն տավալվեց սկսմունչինա և քաղսովետի գործկոմի շինվերանորոգման արտադրանքի աշխատողների միջև։ Պոմպակայանի կառուցման հետ մեկտեղ կատարվեցին նաև սարքավորումների տեղադրման աշխատանքները, կոլեկտիվների համերաշխ և լարված աշխատանքը տվեց իր փայլուն արդյունքը։ Հունիսի 30-ին Շոր-շորի ջրերը Քասախի ձորից մղվեցին խողովակաշար, ու այնուհետև քաղաք։

Շուտով կավարտվեն ջրատարի փորձարկման աշխատանքները և քաղաքի աշխատավորությունը կստանա Շոր-շորի սառնորակ ջուրը։

Ռ. ԴԱՎՈՅԱՆ

ԶՎԱՐԹՆՈՑՈՒՄ

Ես ահա ձեռքս դրել եմ հանգիստ
Վեհափառ արծվի կտուցի կեռին,
Անցա՛ծ-գնացած մի բան է պատմում
Ասատուր քեռին.
— Պահապան եղա քառասուն տարի,
Էլի կլինեմ:
Այս տաճարն հին է և ես էլ հին եմ...
Ավերակ չէ սա,
Ավեր վանք չէ սա,
Տե՛ս, արծիվները կենդանի են դեռ,
Սյուները թեքված, սակայն էլի կան,
Կամարներն հակված, բայց և առնական...
Անցա՛ծ-գնացած մի բան է պատմում
Ասատուր քեռին,
Իսկ ես տխրորեն ձեռքս հենել եմ
Վեհափառ արծվի կտուցի կեռին:

Եղավ ավերակ... հետո հուշարձան:
Ի՞նչ հուշ, ի՞նչ արձան...
Փառքի հիշատակ,
Հայկական հոգու չխամրող քանդակ,
դպրության կաճառ՝
Անտանիք, անթագ
Եվ ժամանակի մի փոքրիկ կատակ:
Այդ ինչպե՞ս եղավ, ինչպե՞ս պատահեց,
Որ բոլորն անցան,
Դարձավ ավերակ... հետո հուշարձան.
Ի՞նչ հուշ, ի՞նչ արձան...

Ճերմակել է արդեն Զվարթնոցի ճամբան,
Զվարթնոցը ինքն էլ ճերմակել է արդեն,
Ճերմակել է արդեն և Ասատուր քեռին,
Ո՞վ իմանա արդյոք «ծերութենե՞ն, դարդե՞ն»:
Զլուն է գալիս հանդարտ և անաղմուկ կրկին,
Եվ փաթիլներն իջնում ու շուրթերով պաղ,
Համբուրում են, մեռնում խաչքարերի կրծքին:

Լուսնալույս գիշեր,
Երակներ կրկին,
Ու կապույտ քարեր,
Քանդակներ սուտակ,
Որոնց ավերված
Մարմինն ու հոգին
Կենդանանում են
Կենդանի մարդու
Բախող կրծքի տակ: